

2004

S-99
331-44
Ա25-57 1245

ՏԵԱՌՆ

ՀՕՐ ԳԱԲՐԻԷԼԻ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՒԵՏԻՔԵԱՆ

ԱԹՈՌԱԿԱԼԻ

ՈՒԽՏԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ՀՈԳԵՒՈՐՔ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

—

1836

Printed in Turkey

241



ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ

ԲԱՐԵՊԱՀՏԻ ՈՒՐՈՒՄՆ ՏԻԿՆՈՋ

ՅԱՒԵՏԻՓԵԱՆ ԶԱՐՄԷՆ

ԵՌ ԸՆԹԵՐՑՈՂՆ

Printed in Turkey

ԻՆՉ հոգեսիրաց ոմանց յորդորեաց զմեզ և զայս նոր ձաքակ բարեպաշտութեան տալ 'ի ձեռս անձանց ուծպաշտութեան կարգացն առանձին օրինակաւ հպատակելոց։ Հայր խորհրդածութեանցգաբրիէլ Վարդապետ Աւետիքեան ծանօթ է ապաքէն համազգեացն և օտարաց 'ի ձեռն բազում երկասիրութեանց իւրոց։ Նա ինքն, որ ոչ միայն ուծաբանական և խմաստասիրական հմտութիւնքն լի էր, այլ և ասպնջական հուլից առաքի-

նութեց, յառանձին մատծու-
թեց իւրոց 'ի միայնութեան մե-
նարանին՝ մերթ ընդ մերթ հա-
նէր մատն և հաւատարակցաց
կոչմանն իւրոյ ըստ իւրաքան-
չիւր տարեւոր տօնից տէրունա-
կանաց և սրբոցն՝ որ յայտնի
ինչ հանդիսաւորութիւն հուչա-
կին 'ի Մխիթարեանս Մխի-
թարեանցս. և այժմ հանդա-
մանք ժամանակիս կամեցան՝
զի այնոքիկ և հատարակաց տա-
ցին 'ի վայելումն։

Ի բանքս առաւել տեղիչ սրտի
վառի, քան թէ հանճարիմա-
ցութիւն մտաց, կամ միտրինակ
տիպ բանից. զի ոչ ամենայնքն
միահեա 'ի միում ժամանակի

յօրինեալ են. այլ ոմն քան
զոմն կրտսեր է և երէց ժամա-
նակաւ, և յառանձին պէտս
հոգւոյ յօրինողին յերիւրեալ,
և իւրոյ խոստովանութեն հա-
ղորդելոյ. կարծելով թէ ոչ
արտաքս եկցեն քան զդրուն-
անձուկ մենաստանին։

Թէպէտև մեծապէս ակն ու-
նելի է՝ զի ճոխութեն հոգևոր
շայեկանութեան ամբարեալ 'ի
նոսա յորդորեսցէ զարս և զկա-
նայս յամենայն հասակէ և յա-
մենայն պայմանէ բաժանակից
լինել այնմ առ իւրաքանչիւր
վաճառաշահութեն գովելի ա-
գահութեաբ. քանզի և հոգեկա-
նացն միայն ագահութեն չէ է-

պերելի յամենայն սասխանի։

Մեք ցանկամք միայն յա-
մենայն մտաց՝ զի այս դանձ
փոքրիկ հասցէ 'ի ձեռս ամենե-
ցուն՝ հոգևոր Հանապարհիննա-
խանձաւորաց կամ այլազգ խոր-
հելեաց. զի երկաքանչիւր ան-
շուշտ ոչ ևս 'ի բաց թողցեն 'ի
ձեռաց, ոմն ոչաւաջադիմութի
անձինն նովաւ Հարստարեալ. և
միւսն 'ի միտ առեալ զաւաղելի
հանգամանս իւր՝ լաւագունացն
այնուհետև լիցի նախանձաւոր.
որով և կրկնակի փառաւորի ա-
նուն Բարձրելոյն, յոր ուղղէրն
միայն, և արդ ուղղի ուշ նպա-
տակի յօրինողին և 'ի լոյս հա-
նողացս։

Ի ԾՆՈՒՆԴ

ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ալ ԱԽԱՄԱՑՐՆ Եւայ՝ կոյս առաջին՝ անարատ ծննդեամբ երևեցաւ յաշխարհի. այլ ոչ եկաց և պահեաց ոչ զկուսութիւն և ոչ զանարատութիւն: Երջանիկ 'ի նախկին կեալն. այլ եղկելի գտեալ 'ի կենացն ընթացս:

Երկրորդի կուսին Մարիամու ծնունդ եթէ ըստ սկզբանն առաջնոյն նման, այլ որչափ բարձրագոյն ըստ զօրութեանն,

քանի՞ ըստ անկորուստ և շնոր-
հազեղ պահպանողութեն տար-
օրինակ։ Աստ ոչ ՝ի չմեղու-
յեալ մարմնոյ զաւակ արտա-
գործեալ ձեռամբ արարչին՝ իբր
Եւային յԱդամայ, այլ ՝ի մե-
ղապարտ մարմնոյ ծնունդ ան-
մեղ, յարատաւորէ անարատ,
յախտականէ անախտ։ Այն-
չափ գերահրաշափառագոյն,
որչափ զի առաւելապատիկ զօ-
րութիւն է ՝ի պղտորեալ՝ քան
յանպղտոր ականէ ջուր բղխե-
ցուցանել ականակիա և ամե-
նահամ։

Ծնունդ արդարեւ շնորհաց՝
գեր ՝ի վերոյ ոչ միայն քան ըզ-
հասարակածին մարդկանն, այլ
չքնաղ ևս քան զայլ հրաշա-
կերտս ՝ոյ. որով ապարչութեն
նորոյ նոր սկզբնամայրն հանդեր-
ձեցաւ՝ կազմել զնոր ազգա-
տոհմ շնորհաց։

Սքանչացիր ընդ ՝ոծեղէն զօ-
րութիւնն, օրհնեա՛ զառատաու-

թիւնն, երկրպագեա՛ անբաւ ի-
մաստութեանն, խանդաղատեաց
ընդ շնորհազարդեալ զաւակն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐԳԵՒ առանձնաւոր էղև
Մարիամու ծնանել 'ի շնորհս.
այլ ևս ընտրելագոյն՝ կեալ 'ի
շնորհս, 'ի նոյնս աճել, կատացն
ընտրութիւն լինել ոչ լոկ ընդհա-
նական շնորհաց, այլ և մեծա-
ցուցիչ նմին իսկ շնորհատուին.
որով և շնորհքն բարձրացան 'ի
նմա իբրև յարժանաւոր գոր-
ծակից և 'ի շահեցուցիչ, եղեալ
միանգամայն փոխատրութիւն
վաստակոց։

Յառաջնումն՝ Մարիամ պար-
տական բովանդակ այ անզու-
գական առատաբաշխութեանն.
իսկ երկրորդիւն՝ զնա ինքն պար-
գևատուն պարտական իւրում
կացուցեալ հաւատարմութիւ։
Ո՞վ, զինքդ գեղեցիկ սա իբրև

առաւօտ ծագեալ շնորհաց, և որչափ ընտիր իբրև զարեգակն նշողեալ շնորհատփիս ճառագայթիցն ծաւալմամբ։

Եթէ յառաջին ստեղծանելն զնա այ ետես զի բարի է, ընդ կամակարութեն նորա զուարճացեալ վկայէր՝ զի բարեգոյն էրև, կերպարանակից գտեալ առաջնոյ լուսոյն անեղի՝ որչափ եղականի լուսոյն գոյր հնարաւոր։ Զորբանութեն չափոյն արդարև անգիտանամք, այլ 'ի մանէ իմանամք զեղանակն. զի հաճեցեալ այ հօր, զիւրն անեղական ծնունդ զմիակն և զկուսածին կամեցաւ շնորհել յորդիութեն այսմ շնորհատիպայլ զաւակի իբրև մօր՝ կուսութեանն նուիրելոյ 'ի հարանութիւն։

Մեծարեա զդերակայութիւն շնորհացն. խնդա՛ ընդ փառս մեծի տիրուհւոյս. մասիր խոնարհեա՛ց յանդիման աթոռոյ շնորհաց նորա։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ամաշե՞ս, հաւատացեալդ դու. և զինքդ ոչ, զի մեղք ծնար. աւաղե՛ս. և յիրաւի, զի սխտաւոր գտար, և առելի ՚ոյ անգէն յերևելդ յաշխարհի։ Եւ ի՞նչ ապա ոչ առաւել ևս ամաչես՝ զի յակտոնոյ մեղանչականութենն վերադրեցեր զկամաւորն՝ բազմապատիկ յանցաւորութեամբ. զի յառաջնոյ անտի յանցմանէ սրբեալդ՝ դարձեալ ապտեղացար. զի զտուեալն շնորհ անդրէն կորուսեր ոչ միանգամ և ոչ երկիցս։

Մայրն Եւայ միանգամ և եթ յանցեաւ 'ի քեզ. անտի լուաց զքեզ նորն Եւայ Մարիամ, որդւոյ իւր աւազանաւն։ Իսկ քո անսասանեալ առ մաքրագործն՝ առաւել յանցուցեալոյ մօրն ցուցար որդի՝ քան սրբագործողին։ Եւ ոչ արդեօք երկիւղ մեծ է՝

թէ ապաշնորհիդ քեզ նման է-
ղեցի էլն յաշխարհէ իբրև ըզ-
մուան՝ 'ի մեղս անարբելի. մե-
ղօք ծնեալ, մեղօք մեռեալ,
մեղօք տանջեալ անսպառ։

Ի մի՛ս առ զվասանդդ ահա-
գին. ժամ քեզ ընդունելի զայս
օրդ համարեաց. ապաշաւեա՛
գոնէ անագան 'ի չարեացդ դոր-
ծելոց, և դիմօք պատկառե-
ցելովք անկիր լալագին յոտս
անյիշաչար տիրուհւոյն՝ բնա-
ւից մաքրութեան ընդունողին.
ժառեա՛ 'ի նմանէ ընդ թողու-
թեան անցելոց մեղանացդ՝ և
զաւ 'ի յապագայիցն զգուշու-
թիւն։

Այս քեզ անդուլ աղաղակ
արտի եղեցի առ նա կողկողա-
գին։ Ո՛վ արքուհի՜ օթևան և
պարգևիչ, մայր ինձ կենաց դու
բարձրացիր իսկութիւն՝ փոխանակ
կարծեցեալ կոչմանն Եւայի,
կրկնակի ծննդեամբ անմահա-
կանաւ 'ի շնորհս և 'ի փառս զիս

ընդունելով։ Զի քեւ երեւեցայց սրբեալ, քեւ պահպանեալ, քեւ փառաւորեալ, եւ յաւիտեան քեզ փառաւորիչ ընդ որդւոյ քում։

ԴԱՐՁԵԼ

Ի ԾՆՈՒՆԴ

ՏԻՐԱՄՕՐ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ոչ ոք 'ի մարդկանէ յարդարոց կամ 'ի թագաւորաց այնչափ օգտամատոյց դտաւ աշխարհի կամ եկեղեցւոյ յամենայն 'ի կեանս իւրում, որչափ սուրբ կոյսն Մարիամ եղև անդէն 'ի ծնանելիւր յաշխարհ։

Եթէ կացին երբեք յիւրաքանչիւր դարս արք բարեգործողք և աշխարհաշէնք, այլ ո՛չ բնաւ եղև ոք 'ի նոցանէ աշխարհի նորոգութեան պատճառ։ Սա միայն կոյս նորածին հիմն արկ

նորոյ աշխարհի։ Ծնունդ նորա ըստ մարմնոյ եղև ոչինչ պակաս ծնունդ իմն շնորհաց, ոչ ինքեան միայնոյ, այլ համօրէն մարդկան։

Ո՛չ քնաւ երևէր յաշխարհի փրկիչ մարդկան Քրիստոս, թէ ո՛չ նախ երևեալ էր մայր նմին արժանաւոր։ Եւ ո՛չ մայր այնպիսի արժանաւոր լեալ էր, թէ ոչ ըստ մարմնոյ սկսանէր և զկեանս շնորհաց, որով միատեւակ ծնանէր յաշխարհ և յաւծ, և լինէր բաւական ընծայել յաշխարհի զաւծային ծնունդն 'ի ժամու։

Ո՛չ շնորհազարդ ծնունդ կուսիս, նախաշաւիղ աւծայնոյ ծնընդեանն, ընդ որ երկնայինքն առաւել քան զերկրաւորքս հիացեալք՝ ցնծութեան կատարեն ոօնս. թէպէտ և երկրաւորացս յաւէտ իրաւամբք անկ է աղաղակել, մանուկ ծնաւ մեզ, դուստր տուաւ մեզ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԼՈՒԱՆԵԼԻ եղև սուրբ կոյսն, զի խանձարուրապատեցաւ 'ի շընորհս. այլ երանագոյն եւս՝ զի եկեաց շնորհօք: Առաջինն պարգեւս առատութեանն էր, երկրորդն՝ ցոյց քմտերմութեան կուսին: Ո՛չ կատարեալ էին պարծանք նորա, եթէ զգեղումն շնորհաց ընկալեալ անդստին 'ի ծննդենէ, թողցեր զայն անգործ եւ 'ի ծրարի. կամ չար եւս, եթէ հակառակ գործովք մնայր շնորհազերկ: Վասն որոյ երկոքումբ եւս գտաւ նա բազմերջանիկ. երջանիկ 'ի ծնանիլ շնորհօք, երջանկագոյն 'ի կեալ ըստ շնորհաց, 'ի պահել և յաճեցուցանել զշնորհս. առաւել պանծագոյն 'ի պահելն՝ քան յառնուլն զշնորհս:

Աւա՜ղ, որչափ այլանման է մեր վիճակ, որք ցնծամք ընդ

ծնունդ կուսին հրաշալի. երա-
նեմք զայն և մեծարեմք, և ո՛չ-
ագաւմք զմեր ախտաւոր ծնունդ.
ո՛չ աւաղեմք զանձինս՝ զի մեղաք
ծնեալք, 'ի նոյնս կեալ ախոր-
ժեմք։ Սրբեալք միանգամ
շնորհաք ուրբ աւազանին, բաղ-
մագոյն և աղտեղանամք նորա-
նոր յանցանաք։

Վա՜յ կարդամ անձինս՝ զի
մեղաք եկի յաշխարհ. և ոչ զայն
ողբամ՝ զի մեղաք կեցի յերկար
ժամանակս, զընկալեալ շնորհս
կրկին կորուսի, և եղէ որդի յան-
ցանաց և կորստեան։

Ա՜յլ դու, ո՞վ կոյս գերա-
մաքուր, պարդևեա՛ ինձ այնպէս
տոնախմբել զծնունդ քո, զի
աւաղեցից և լացից զիմ ծնունդ
և զկեանս ախտաւոր։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ի ՄԻՏ առեալ զայս մեծապարգևութիւն առ տուրբ կոյսն, վստահ եմք թէ ոչ զլանայցէ ինչ և մեզ նորին միջնորդութիւն: Եթէ առատացոյց 'ի նմա զդանձս իւրոցն շնորհաց'ի ծնընդեանէ անտի մինչև 'ի կատարած, զիարդ խնայիցէ 'ի մէնջ զմնան ինչ շնորհաց, որ կարևոր իցէ յաճապաշտութիւն և 'ի փրկութիւն յաւիտենից:

Արդարև ոչ ևս մեզ յուսալի է՝ թէ ծնանիցիմք անարատ, բայց գոյ յոյս՝ թէ սրբոյ կուսին միջնորդելոյն կեայցեմք անարատ, զի յաղթիցեմք 'ի փորձութիւնս, զի վչտաց համբերիցեմք, զի արիանայցեմք 'ի դրժուարին վաստակս. որով կատարումն կենաց մերս պատուական լիցի առաջի տեառն:

Ո՜տայր, թէ որք խնդամքս

հոգւով ընդ անարատ մուտ կուսին յաշխարհ, ընկալցուք փոխարէն՝ զի և նա խնդասցէ ընդ անարատ ելս մեր յաշխարհէ։ Այսմ ցանկամբ, ով շնորհածին կոյս, քոյով մայրախնամ պաշտպանութեամբ, այսմ հանդիպել ակն ունիմք։ Լէր մեզ մայր շնորհաց 'ի բազմավոտանդ կեանս մեր. զի քև խնամեալքս և ապրեալքս լինիցիմք յերանաւէտ կայանսն որդիք քո բերկրեալք յանլռելի օրհնութիւնս։

Ի ՎԵՐԱՑ

ՀՐԱՇԱԼԻ ԱՆՈՒԱՆ

ԱՄԷՆՕՐՀՆԵԱԼ

ԱՅՏՈՒԱԾԱՄՕՐՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅՈԳԻՆ սուրբ զգերազան-ցութիւն հրաշալի անուան ա-մէնօրհնեալ կուսին յայտնա-բանեաց մեզ 'ի ձեռն Սողոմոնի՝ յասելն. «Իւղ թափեալ է ա-նուն քո. վասն այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ»: Յայտ արարեալ թէ անուանն Մարիամու գեր 'ի վերոյ կայ քան զամենայն անուն յետ անուանն Յիսուսի. Վասն զի զոր օրինակ իւղ յայլ հեղա-նիւթս արկեալ առ երեսաք կայ,

նոյնպէս անունն Մարիամու քան զամենայն անուանս սուկ ստեղծուածոց՝ որ յերկինս և որ յերկրի, բարձրագոյն է և վսեմական։

Եթէ 'ի գպրութիւն կ'նացն հայեացիս տեսանել, յառաջին տեղւոջն սա կայ գրեալ։ Եթէ զզօրութիւն խնդրիցես, ուր այլոց սրբոց անուանք տկարանան, սա անդ զօրանայ։ Եթէ զխորհուրդսն որ 'ի նմա քննել կամիցիս, խոստովան լիցիս՝ թէ 'ի վեր է քան զամենայն անուն։

Վասն զի Մարիամ ասելով իմանամք զծնունդ ոմն շնորհաց, և զդանձարան փառաց. իմանամք զդուստր ոմն Ադամայ 'ի մայրութիւն հրաւիրեալ անսահման Բանին. իմանամք զթագուհի ոմն երկրածին՝ որոյ թագաւորութիւն մինչ առ երկնայինսն ձգի իրաւամբք ՅԾամայրութեն։

Եւ գու մի՛ ինչ զարմացիս,

թէ յաստի կեանս գոլով Մա-
րիամ՝ անծանօթ էր ազգատոհ-
մին զօրութեն անուան նորա.
մինչ յումպէտս ասել զնմանէ.
«Ո՞չ մայր սորա կոչի Մարիամ»,
վասն զի յայնժամ իւրն դեռ
յամանի կայր։ Այլ յորժամ
եկն նա 'ի բարձրութենս երկնից,
թափեցաւ իւրն ընդ ամենայն
երկիր։ Զի յամենայն ազգս
ուր և պատմեցաւ անունն Յի-
սուսի, անդ ծանուցաւ և անունն
Մարիամու։

Վասն որոյ, ո՛վ դու հաւա-
տացեալ, թէ վերս ինչ ունիցիս
'ի հոգի քո, ահա քեզ իւր.
օ՛ծ այնու զքեզ. կարդա՛ զՄա-
րիամ, և բժշկեսցիս։ Օ՛ծ զմիտ-
սըդ՝ խորհելով զնմանէ. օ՛ծ ըզ-
կամսդ՝ սիրելով զնա. օ՛ծ ըզ-
գործսդ՝ նմանելով նմա. օ՛ծ ըզ-
քանսդ՝ գովելով զնա։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Մեծ է զօրութիւն անուանն Մարիամու, և բազումք են՝ որք ճանաչեն զնա. բայց որք սիրեն՝ սակաւք են. վասն զի օրհորդք միայն սիրեն զնա: Ա՛ւ 'ի սիրել զնա պարտ է մերկանալ զհին մարդն և զգենուլ զնորն. պարտ է 'ի բաց թօթափել զծերութիւն մեղաց, և նորոգիլ մանկութեամբ շնորհաց. պարտ է լինել առոյգ հաւատով, ջերմեռանդն սիրով, յօժարակամ 'ի հնազանդութիւն, և սիրող պարկեշտութեան:

Թէ կորացեալ է ոք 'ի սէր երկրաւորաց, զառամեալ է հոգւով. պարտ է նմա զնորհուրդս և զնղձս 'ի վերս յերկինս ուղղել. որով լիցի օրհորդ հոգւով, և սիրող Մարիամու: Արդ դու յորոց սակի ելցես արդեօք, Գուցէ զթերութիւնս հոգևոր

825-05

զառամութեանն յանձին կրեա. վասն այսորիկ ոչ սիրեա զՄարիամ. վասն այսորիկ կարդասառ նա, և ոչ օգտիս։ Ապա Յանանա նախ զսէր նորա ունել 'ի սրտի, և ապա զանուն նորա 'ի բերանի։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՅՈՐԺԱՄ ընթեռնում, թէ "Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի", ընդ նմին իմանամ, թէ և յանուն Մարիամու ամենայն ծունր կրկնեսցի. վասն զի հաւատամ, թէ որով ինքն Յիսուս փառաւորի, նովիմբ և զմայր նորա փառաւորեմ։ Յիսուս և Մարիամ 'ի կոչմանն այո՝ տարբերին, այլ 'ի զօրութեն քաջ միաբանին։ Յա է կատարիչ փրկութեան, և Մարիամ 'ի նոյն գործակից։ Յա է քաւութեան պատճառ. և Մարիամ քաւութեան առիթ։ Յա է վշտացելոց սպաւէն. և Մա-

ցիամ տառապելոց ձեռնտու։ Յետ Հնաւապետ յաշխարհի նա-
ւողացս, և Մարիամ ասող ա-
ռաջնորդական։ Յետ Հրաց արբ-
քայութեան, և Մարիամ զարդ
արքայութեան։

Վասն այսորիկ 'ի յիշատակ
անուանն Մարիամու փառաւո-
րի ամենասուրբ Երրորդութեան.
խնդայ համօրէն եկեղեցին յաղ-
թական. պատերազմի քաջու-
թեամբ եկեղեցիս զինուորեալ. մխի-
թարին յուսով արդեալքն
'ի քաւարանի. և դէք փորձիչք՝
իբրև գողք գիշերի դողան փախ-
չին 'ի ծագել լուսապայծառ
անուանն Մարիամու։

Ապա կարդա՛ զՄարիամ 'ի
փորձութեամբ քում, և յաղթես-
ցես. 'ի հիւանդութեամբ, և համ-
բերեսցես. յանկանիլն, և կանգ-
նեսցիս. 'ի մահուն քում, և
մեռցիս 'ի շնորհս, և եղիցի բա-
ժին քո ընդ ընտրեալսն 'ի սկզբ-
բանէ։ Բայց կարդասցես մի՛

լեղուաւ և եթ, որով զօդս մի-
այն բաղխես. այլ և սրտիւ, ո-
րով զնշխանութիւնս օդոյ փա-
խուցես։

Եւ անուն կուսին Մարիամ։
Ղկ. Ա. 27։

Լուսէ անուն բարի քան ըզ-
մեծութիւն բազում։ Առ. Ի. 1։

Օրհնեալ ես դու դուստր՝
յոյ բարձրելոյ քան զամենայն
կանայս 'ի վերայ երկրի.... զի
ոչ պակասեսցի անուն քո 'ի
մարդկանէ։ Յոռ. Ժգ. 23. 25։

Ի ՏՕՆԻ ԸՆԾԱՑՄԱՆ

ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ընծայեց իսկութիւն և անուն ոչ որպէս առ մարդիկ նոյնօրինակ և առ ած իմանի։ Ընծայէ մարդ այլում մարդոյ ոչ զնորայն ինչ, այլ զիւրն՝ ձրիական յօժարութիւն։ Բայց առ ած զինչ ընծայեալ կարիցէ մարդ՝ որ ոչ այ ի ցէ տիրաբար։ Զայն այ տալ՝ ըստ ճշդիւտ սահմանի տրիտուր միայն է։ Սակայն առ ամէնառատ գթութիւնն այ իբրև ընծայ պատուէր տակս հաւատարմութեան առողին՝ խոստովանելով թէ ոյր է շնորհ։

Այսու օրինակաւ ընծայաբերեալ առ ած գովեցան համօրէն

ընարելոցն դասք. բայց զանա-
զանութիւն է 'ի նոսա ըստ չափու
հաւատարմութեանն: Ա՛ռ ի՞նչ
արդեօք զոխրամօրն ընծայումն՝
քան զայլոց սրբոց յանուանէ
ասնախմբել: Վասն զի քան զբը-
նաւսն առաւելաւ նա 'ի հաւա-
տարմութիւն, վաղ ընծայելով,
բովանդակ ընծայելով, յաւէ-
ժաբար ընծայելով: Ընդ բա-
նաւորս կեանս նորա և ընդ
ընծայումն ոչ միջնորդեաց ժա-
մանակ. անդէն 'ի ճանաչել
զանձն՝ ծանեաւ թէ ոյր է, և
ում պարտի. այն է՝ ՅՍ, և նմին
իսկ ընծայաբերեցաւ: Ո՞ մա-
տաղատունկ սխրալի, անդէն 'ի
բուսանելն պտղաբերող:

Իսկ դու եղիր արդեօք ըն-
ծայաբեր ՅՍ. այլ քանի՞ անա-
գան, գուցէ և թշնամւոյն ՅՍ
նախընծայ գտեալ: Ո՛վ տունկ
անհաւատ, ոչ պտղաբերեալ
անկողին՝ բայց կամ անագան,
որ ակամայութիւն է նշանակ, և

կամ թշնամւոյն ևս, անզգա-
մութեան ցոյցք։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ոչ բաժին արար կոյսն հա-
ւատարիմ 'ի մատուցումն ըն-
ծայիցն։ Զոր յայ ունէր՝ ըն-
ծայեաց բովանդակաբար. և զի
զամենայն յայ ծանեաւ, զա-
մենայն նուիրեաց. ո՛չ պա-
հեալ անձին՝ բայց զչունելն ինչ։
Որ ինչ էր 'ի նմա ըստ բնութե
և ըստ շնորհի, որ մարմնոյ և
որ հոգւոյ, կարողութի խրա-
քանչիւր և կիրառութի նոցա,
կնիք զայս կրէր թէ այ եմ ես։
Ո՛չ երբէք երևեցաւ յԵրուսա-
ղէմ ընծայ այսպիսի լիաձեռն և
ամենապատիկ խբրև զմատու-
ցեալն 'ի թագաւորմ օրիորդէս։
Ո՛վ, երանի՛ էր՝ եթէ և մեր
ընծայումն առ ՀԾ՝ զոր արա-
րաքն անագան, լինէր գոնէ բո-
լորական. ոչ ըստ մասանեայ, ո՛չ

խստանօք, զանարգն տալով ՝ այ,
և զլաւն անձանց պահելով։ Ո՞ր
ամօթ ոչ ի՞նչ, զմեծ մասն մեր
նուիրել ունայնութեան, և առ
ած Աշդեղդուզնաքեայ տրովք։
Խորհուրդք մեր և յօժարու-
թիւնք և գործք և ժամանակ կե-
նաց առաւելագոյն մասամբ ընդ
երկիր յածին, և սակաւն մնա-
ցեալ աննուիրելի ՝այ լինի սակ
անարգութեան։ Որ արարն զքեզ
բովանդակ, պահանջէ զքեզ
բովանդակ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԵԹԷ զևտական քահանայ-
ութիւնն ժամանակաւ սահմա-
նեալ՝ էր օտար պատարագաց
նուիրագործող, ո՛չ այնպիսի է
անձնանուէրն։ Նոր այս քահա-
նայութիւն եղև մշանջենաւոր,
ինքն մատուցող և մատուցեալ։
Սկիզբն և կատարած կենաց նո-
ցա մի պատարագ և նուիրումն

անընդհատ։ Որչափ յաճախէին
'ի նա պարգևք այ, նովին չա-
փով դառնային առ աՀծ. եր-
կաքանչիւրն անզեղջ 'ի պար-
գևան. աՀծ 'ի տալ, կոյսն յըն-
ծայել։

Կամեցաւ այ առատութիւնն
յաղթել հաւատարմութեան օ-
րիորդիս, մեծարելով զնա ոչ
սոսկ արարածական ձրիւք, այլ
զիւրն անստեղծ մեծութի՝ զիս-
կակից Որդի ընտանեցուցեալ
նմա։ Այլ բաբէ. փութացաւ
և կոյսն նախանձաւոր այ առա-
տութեանն երևել՝ զնոյն Որդի
ընծայատրեալ այ 'ի տաճարին
ցնծութիւն, 'ի խաչին ցաւօք, և
յերկինս փառօք։

Իսկ արդ եղիք և մեք անզեղջք
'ի նուիրման մերում առ աՀծ. ոչ
ահա բազում անգամ զփոքրն
իսկ, զոր տուաք այ, անդրէն
յետս առաք՝ յոչ հաճոյս նորա
վարելով։ Խոստացաք այ զկամն
մեր, այլ ըստ մերում մտի 'ի

կիր առաք. խոստացաք զմարմին մեր, այլ յանձնդիւրութիւն տուաք. զինչս և զպատիւ խոստացաք, այլ զի մի՛ այնք մեզ պակասիցեն, հնարիմք վաստակիմք։ Մի՛ ապա զարմանար՝ թէ 'ի տրոց այ թերի գտանիս. զի ճշդով սերմանողն՝ ճշդով և հնձէ։

ԱՂՕԹՔ

ԱՑԼ արդ պատկառեալ անձամբք ողբամք յանդիման զարմանահրաշ քում օրինակի զանշնորհութիւնս մեր, ո՛վ կոյս մեծարեալ առ յայ, և մեծացուցիչ նորա հաւատարիմ ընծայատրութեա։ Ընկալ և վասն մեր դոյզն ինչ 'ի քումմէ առատութէ, զի լինիցիմք և մեք հաւատարիմք պարգեւացն այ։ Եթէ ցարդ անագան եղաք այ և կամ թերակատար, գոնէ յայսմ հետէ լեցուք բովանդակ այ, և միշտ այ։

Եւ զի անսխալ կատարեսցին խնդիրքս, ահա զանձինս մեր ընծայեմք բովանդակ քումդ մայրագորով ընդունելութեան, որով և այ լինիցիմք բովանդակ. քանզի գիտեմք հաւասարի՝ զի որ ինչ միանգամ քո լինի, զամենայն վերընծայես այ. նմա պահես առանց յեաս դառնալոյ, և փոխարէն առնուս վասն նորա զփառան յաւիտենից:

Ի ՏՕՆԻ

ԱՒԵՏԵԱՑ

ՄԱՍՆ ԱՌԱՔԻՆ

ՊԱՏԳԱՄ հրաշանորոգ յերբորդականն աթոռոյ հասանէ առ հրեշտակապետն Գաբրիէլ աւետաւորել յուսկն օրիորդ կուսի Մարիամու։ Խորհրդոյն յաւիտենից ծածկեցելոյ առ այ՝ եկեալ հասեալ ժամանակ յայտնութեան, բանայ այնուհետև կնիք երկնաւոր խորհրդարանին։ Աստուծեանն հրովարտակ ոնտեսութեան մերկանայ ստ վերնական իշխանութիւնս. Ձայն բառնան երկինք հիացմամբ, և զպատգամաւորն'ի կա-

տարու�հրամանին փութա-
ցուցանեն։

Արագէ սրանայ հրեշտակն
Թեւքն զուարթացելովք. և ող-
ջոյն բերկրաձայն 'ի բերանի՝
գայ մեծարանաց դիմաք՝ յան-
դիման լինի ընտրեցելոյ կուսին։
Ահաւասիկ ՝ած խօսեցաւ 'ի բար-
ձանց, և երկնագումար ատեանն
բովանդակ յակՃիռս կայ՝ զպատ-
գամին առնուլ պատասխանի։

Իսկ առ 'ի կուսէն զինչ։ Ոչ
բարբառ. ոչ ցնծութեան ինչ
նշանակ. այլ բերան լռեալ,
միտք 'ի վարանս։ ԲաՀբէ, յա-
ռաջագոյն երկինք լռէին ըզ-
խորհրդոյս. և արդ 'ի բարբա-
ռել երկնից՝ կոյսն լռեալ կայ։
Լռութիւն ոչ անխորհուրդ, ոչ
վայրապար երկիւղիւ. այլ ըզ-
բանսն կշռէ զողջունին, և ընդ-
այն խառնվի կուսականն նորա
սրբասիրութիւն, որ քան զհրեշ-
տակի պատգամախօսութիւն արդ-
գոյ ևս էր նմա։

Հանդարտել փութայ հրեշտակն զերկեղական խորհուրդս կուսին, եդեալ առաջի՝ թէ վիճակ սահմանեալ է նմա գերօրինակ շնորհօք՝ լինել ծնող Որդւոյ բարձրելոյն, որում կայ թագաւորել յաւիտեան։ Այլ կոյսն խմաստուն ոչ 'ի թագաւորութենէ ակն եդեալ, ընդ ծնողութեանն ձայն վարանի խառնեալ։ Զ.խարդ. եթէ մայր լինի. ցիմ, ասէ. առանց կուսութեան, այդ չէ ինձ ընտրելի. այլում պահեսցի և մայրութիւնն և դըպրութիւն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Արդարեւ 'ի վերքան զհիացումն է բանս, կուսի դեռահասի խորհրդակից կոչիլ ածութեանն գաղտնեաց։ Սքանչանայ և հրեշտակն պատգամաբեր ընդ կուսականն վեհ խմաստութիւն, և զյեղանակ անտեսութ-

թեանն բանայ ըստ հարցմանն. լինել նմա մայր ոչ մարմնապէս 'ի կամաց առն, այլ Հոգւոյն սրբոյ ներգործելովն ըստ անտըկար զօրութեան բարձրելոյն։

Ընդ բանիս խաղաղացաւ ապաքէն հանդարտեաց կուսականն ամօթխածութիւն. բայց նոր յուզումն հարեալ յամենախոնարհ ոգին, տատանէր վարանէր՝ եթէ անհամեմատ բարձրութեանն յանձնառօղ որպէս եղիցի։ Այլ արագ 'ի վերայ հասեալ ամենանուէրն հնազանդութիւն, եւ նմա զհաւանութեն պատասխանել. Եղիցի, ասէ, ինձ, աղախնոյ տեառն, ըստ քումդ բանի, լինել ինձ մայր, մնալով որպիսի եմ կոյս և խոնարհ աղախին։

Այսպէս 'ի գլուխ ելանելով պատգամաւորութեն, 'ի բաց գնայ հրեշտակն պատկառանօք, տեսեալ զի ընդ բանալ կուսականն բերանոյն, տաղաւարեցաւ

յարգանդի նորա թագաւորն, որում եղեն յառաջընթաց ա-
ւետաւոր:

Ո՛վ, զի՞նչ է զոր լսեմքս և զոր խօսիմք առանց խմանալոյ: Մատեան արդարեւ կնքեալ. զոր ոչ և գրագէտն երկնից հրեշտակն ընթեռնուլ կարող է, թող թէ մարդ երկրաւոր անգրագէտ: Ո՛վ անքննին խոր-հրդոյն, որ այսօր ոչ յայտնե-ցաւ միայն, այլ արդեամբք ա-ւարտեցաւ 'ի կոյս մատաղ, յաննշան քաղաքի 'ի Նազա-րէթ, որպիսի և ոչ յերկինս անգամ երևեալ բնաւ հրաշա-կերտութի՝, բայց յաճային ևեթ 'ի ծոց հայրական:

Սա կոյս մատաղ ցուցաւ ար-դարև անժամանակն արգանդի ծանուցող ծննդեանն, կուսու-թիւնքերև զնա, զնոյն Որդի միա-ծին՝ բանիւ լոկով ծննդագոր-ծեալ: Եղեցի ասելումն. եղեալ աճամայր առանց իւրն փոփո-

խելոյ. որպէս և ՀԱՅՐ ան-
յեղապէս ծնեալ։ Բարձրանայ
յանչափս, ոչինչ մեկնեալ յիւր-
մէ խոնարհութենէ. խոստովա-
նի զմեծամեծսն հզօրին այ ընդ
ինքն ներգործեալ. այլ զորքա-
նութին ոչ և ինքն իմանայ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԵԹԷ ընդ անզուգական մե-
ծութի ածամօրն հիանալ մի-
այն կար է մեզ և պատուաբա-
նել, այլ ոչ հասանել, և ոչ
նախանձել, բայց է յուսալի՝
եթէ կամիցիմք նախանձ բերել
ընդ հրեշտակականն պատիւ,
կցորդ նորա պաշտօնակալու-
թեանն լինել։

Աղէ՝ առեալ և մեր զառ 'ի
նմանէ երգեալն ողջունաբեր ա-
ւետիս, մատիցուք նայապէս
պատկառանօք առ գերապա-
տուեալ տիրամայրն, աւետաւո-
րելօրհնեալն ցնծութիւն՝ ոչ թէ

մայր երկնից արքային լինիցի, այլ թէ եղեալ իսկ է, և բարձրացեալ վերոյ քան զերկինս: Մանաւանդ զի և համարձակագոյն քան զհրեշտակս ունիմք պատճառս պատուասիրելոյ զամէնօրհնեալն տիրամայր. որչափ զի նոքա մեծարեն իբրև պաշտօնեայք, իսկ մեք նա և որդիաբար, եղեալք 'ի ձեռն միածնի իւրոյ որդիք ոչ լոկ աւետեաց, այլ ցաւագին երկանց:

Երդաբանեացուք առ նա պատկառեալ դիմօք իբրև առ թագուհի երկնաւոր, և սրտիւ բերկրեցելով իբրև առ մայր բարեխնամ: Բայց վայ, եթէ անպատկառապէս և անմաքրութիւն 'ի բերան առնուցումք զօրհնութիւնս նորա. զի ոչ ապաքէն օտար խառնիւթեամբ պատճառս տամք նմա անմեծար ողջունիւն, և 'ի բաց վարիմք յերեսաց նորա իբրև անարգուք փառացն և սիրոյն:

ԱՂՕԹՔ

Ո՛Վ ընտրեալդ 'ի մարդկային զարմէ, կոյս ամէներ ջանիկ, որ անճառաշնորհ պարգևօք ամբարձար այսօր յանհաս բարձրութիւն ՀԾային աղգակցութէ։ Ահաւասիկ ցնծայեալքս յօր մեծի աւետեաց քոց կամք առաջի մեծութէ քո, և հայցեմք թախանձանօք մասն բարեաց 'ի քումմէ լրութենէ. ոչ զանհաղորդականն մեզ բարձրութիւն, այլ յանխախտելի քո կուսութենէդ զմաքրութիւն սրտի, և յանայլայլակ խոնարհութենէդ միտս անհպարտս։ Վասն զի յուսացեալ ակն ունիմք թէ երկոքումբք այսու լինիցիմք արժանի օրհնաբանել զքեզ և փառաւորել ընդ միածնի Որդւոյ քո յաւիտեան։

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԷՐ

ՏԻՐԱՄՕՐՆ

ԱՌ ՄԱՆԿԱՑԵԱԼՆ

ՅԻՍՈՒՍ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Եթէ հրաշափառագոյն 'ի սքանչելիս ոյ խոստովանիմք կուսի անփորձականի լինել մայր Աշխարհիս, զոյգ նմին հրաշալի արդարև կրել 'ի կուսական արտի զգորով մայրական. և գորով այնչափ ևս եռանդուն քան զմարդն առ 'ի մարդկանէ, որչափ քան զբնաւորն՝ գերազանցեալ է ածագործն այն մայրութիւն անախտական։

Մինչ չև յղացեալ զմանուկն յարգանդի, նկարեաց զնա 'ի միտն հաւատովք. ընտրեաց զնա փափաքմամբ. 'ի սիրտ իւր հրաւիրեաց. ընդարձակեաց ըզբերանն՝ եղեցի կարդալոյն: Եկն էջ ցանկացեալն, ընկալաւ զնա, ծրարեաց յարգանդին. կերպարանեցաւ ծնունդն անանման:

Ահա ո՛չ ըստ բարբառոյ այլոց մարդց ունէր նա զՇամուներայն երկրորդել առ նորածնեալ իւր. «Զգիտեմ ո՞րպէս երևեցար յիմում արգանդի». ուր ինքն նախ գիտաց զնա, զորպէսն ծանեաւ, հաճեցաւ և ծնաւ:

Ո՜ սքանչելահրաշ մայրութի՛ կրկնակի՝ մտօք և մարմնով. և երկաքանչիւր անապական կուսութիւն. և երկոքին ո՛չ ժամանակաւ 'ի լուսն եկեալ, այլ ասաց և եղև:

Մի՛ ապա 'ի խանձարուրան

հայիր, որովք 'ի մարի հանգոյց ղծնեալն, այլ թէ զնարդ յաղիս գթոյն պարապնդեալ՝ առ սրբոտին զնա հանգուցանէր։ Ո՛վ, որպիսի համբոյր գորովոյ, ո՛ր գգուումն, ո՛ր փարելի խանդաղատանք։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՑԷՐ տիրամայրն 'ի կուսածին յիւր Որդի՝ իբր միակ զուարճութեն սրտի իւրոյ, իբր միակ խորհուրդ մտացն, միակ լոյս աչացն։ Զի՞նչ առ նովաւ արև միջօրէի, կամ բնաւ արարածոց տեսութիւն, յանդիման իւր ունելով զմիայն ծնունդն 'ի միայնոյ արգանդէ։ Որ իւր էր բովանդակ, և ո՛չ այլում մարդոյ. նա միայն իւր, և եղբայր այլ ո՛չ. յոր միայնում պահեալ իւրն գոյութեն, և ոյր վասն միայն եկեալ էր յաշխարհ։

Զորդի մի այսպիսի զի՞նչ այլ

ունէր նա ճանաչել և անուա-
նել. բայց սէր իւր, որով հա-
լէրն և լուծանէր համակ՝ կեալ
զմի կեանս սիրոյ։ Ա՛ռ ստեամբքն
զնա հանգուցանէր, զդորով
քան թէ կաթն ջամբելով, և
փոխարէն զեռանդն առ 'ի նմա-
նէ յինքն ծծելով։

Ո՜վ, զնա՞ր դորովայր 'ի խա-
ղապատել որդւոյն, յորժամ
փափկիկ մատամբքն 'ի դէմս
մօրն զհրճուանացն փութեցու-
ցանէր վարդս։ Եթէ ննջէր նա
քաղցրիկ առ ծոցին, մայրն
հոգիագրկեալ զսիրոյն ննջէր
քուն, որ միշտ է արթուն։ Թէ
լայր նա երբէք առ 'ի պէտս տը-
ղայուութեն, ո՛վ, զնա՞ր աղեստա-
նայր մայրն առ 'ի գիւրելոյ ան-
խօսուն վշոցն. թէ յօրոցի
դնել, կամ թէ 'ի գիրկս բառ-
նալ, և կամ այլ սփոփումն տը-
ղայական մատուցանել։

Զամենայն խնամս նմին ար-
գահատէր, զամենայն հոգայր,

'ի նոյնս քաղցրանայր. ընդ քաղցրանալն և քաղցնոյր. անյադ 'ի վայելեալ, կաթոգին 'ի սլենուլ, անմեկնելի միշտ, որպէս թէ շունչ իւր է։

Կալայ զնա և ոչ թողից. այս նորա մրմունջ 'ի սրտին. և գուլմա սովիմբ զնորհուրդ աւետարանագիր բանին յաղագս մոգուցն երկրպագուցաց ասել, թէ մտեալ 'ի տուն՝ տեսին զմանուկն Մարեմաւ հանդերձ մարբն. վասն զի էր և էր հնար վայրիկ մի բացեայ զմայրն գտանել 'ի անարից որդւոյն։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Եթէ 'ի հնոց անդր մայրագորով սիրոյ տիրամօրն հպագոյն և մատչելըղձանաս, կացո՛ զուշ մտացդ 'ի սրտի նորա խորհրդարան, և ահա տեսանիցես բոց բարձրացեալ վերոյ քան զամենայն երկինս։ Մանուկ այս-

օրածին 'ի գիրկս իւր տանի, այլ գիտէ՝ զի սա այն է, որ յանքնին ծոց յաւիտենից Հօր իսկութեամբ կայ հանգուցեալ, իւր և նորա համաբուն Որդի միակ. անդ Բան մշտնջենաւոր, և առ ինքեան՝ տղայ անխոսուն։

Զոր ձեռօք ինքն շօշափէ և խնամարկէ այն է՝ որ զտիեզերս ամենայն և զմայրն ինքնին 'ի բռին տանի զօրութիւն։ Որ տղայաբարն լայ, նա 'ի սրտվքէից պաշտի սրբաբանեալ։ Ցուցատացեալ՝ և անչափ 'ի բարձրութիւն. կաթնասուն՝ և հրեշտակաց կերակրիչ։

Այսպիսուս դաղտնեաց գոլով նա տեսող, ոչ սիրոյ բնութիւն ոչ տիրէր նմին՝ 'ի բնութիւն ներդործեալ և 'ի շնորհաց. զի յորմէ պատկառէն հարկ էր սարսափմամբ, փարիլ զնովաստիպլի. ընդ ծունր կրկնելոյն՝ համբոյր տալ սիրապատար. ըզ-

տէրն կգուէլ որդիաբար, զա-
մենախնամիչն յանձանձել. ա-
ղախին ինքն՝ մայրօրինակ հրա-
մայել։

Արդարև ոչ բաւեաց և տի-
րամայրն հանդարտել ցնծութիւն
սրտին, աղաղակ օրհնաւաքյեր-
կինս արձակեալ. «Ցնծացաւ
հոգի իմ յԱծ փրկիչ իմ. քան-
զի մեծամեծս, ասէ, արար ընդ
իս»». և այնչափ մեծամեծս,
որչափ փոքրկացեալ յարդան-
դի, եղև առաւել սիրելի նը-
աստուքն՝ քան մեծութեամբն
ահաւոր. առաւել սիրուն իբր
մանուկ տկար քան Ամ հզօր։

ԱՂՕԹՔ

Եւ արդ պաղատիմք՝ և առ
մեզ դարձուցես, ով մայրդ
սիրոյ, զդթոյ քո հայեցուածս.
առ մեզ՝ բնաւին անարժանքս,
բայց առաւել կարօտեալք մայ-
րենի քում խնամարկութեան։

Պատկերակիցս լինել արժանացաք ամենափափաքելի քոյոյ Որդւոյդ. ոչ խնայեաց նա 'ի մէնջ զկնիք իւր և զանուն, գրեալ զմեզ յիւր եղբարս և քեզ որդիացեալս. մինթէ խնայիցե՞ս դու 'ի մէնջ զառ նա սէրն. զի գթալդ 'ի մեզ՝ նմին խակ համարեալ է. եթէ խնամարկես, եթէ սփոփես, եթէ հանդուցանես զմեզ, նմա առնես զամենայն։

Աղէ՜ սիրեա՛ զՈրդիդ քո և 'ի մեզ որդեգրեալքս կուսական քո մայրութեդ, և շնորհեա՛ մեզ սիրելանարատութեամբ զմայրդ երկնաւոր հանդերձ Որդւովդ սիրելեաւ այժմ և յաւիտեան։

Ի ՏՕՆԻ

ՊԱՀՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՐԱՄՕՐՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Օ՜ Ի՞ դու, զի՞ քեզ, անձն իմ. հիմ կաս վշտագնեալ. ուստի՞ քեզ տագնապք իցեն: Հանգիստ ապաքէն խնդրեա և սրտի դիւր և կեանս անեղկեանն. այլ փոխանակ՝ հոգք և հեծուանք և երկիւղ անհանգիստ զքեզ առնեն: Ասես, և զի՞նչդ ոչ. եթէ իցէ՞ մարթ անդորը գտանել՝ի բազմապատաղ կեանս աղցաւոր, ուր ամէնուստեք յաճախութեի վտանգաց՝ի հոգի և՝ի մարմին, բարեաց նուազութեի, չարիք կարևորք ընդաբոյք, թշնամութեի երևելի և անեղեալ, արկածք դժպատահք,

վիշտք և ցաւք՝ ի բնէ և՝ ի մարդ-
կանէ. իսկ այսր ամենայնի կա-
տարած՝ անյայտ և կասկածելի։

Այլ մի՛ բեկանիր ոգւով,
տարակուսեալ դու. կայ քո ա-
պաւէն զօրութիւն։ Զաչսդ տա-
տանեալ կառո՛ ի ձեռս տիկնոջ
քո՝ որ՝ ի դրանց երկնից հասեալ
կայ պաշտպան քեզ յամենայնի։
Ահա երկնաւոր թագուհին, ա-
հա մայրն ՀՕ, ահա տարողն զօ-
րութիւն բարձրելոյն, ահա որ
առատն է գթութիւք յինքն առեալ
զքո խնամն՝ գիտէ զինչ պէտք
ի՛ցեն քեզ. զօրաւոր է առ ամե-
նայն, կամեցօղ առնել զամե-
նայն։

Եթէ վհատիցիս այլ ևս, եթէ
երկիցես՝ ի չարէ՝ առընթեր ու-
նելով զամենայն բարեաց վե-
րածնօղն։ Խոստացաւ քեզ
զիւրն պաշտպանութիւն, մի՛թէ
երկբայիցիս։ Ոչ պակասէ նա՝ ի
խնամոցն. մի՛ և դու պակասիր
՝ի յոյսն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄ դժնեայ նիւթէ քեզ սատանայ՝ մարտակցութիւն աշխարհի և մարմնոյ. նեղքոյ աղէտք կարևորք, և արտաքոյ պատճառք խոտորեցուցիչք նեղեն զքեզ՝ իբրև զբանակ Սիսարայ։ Բայց Լքանիր մի՛. լեր դու Բարակ. 'ի Դեբորայ 'ի մայրն Իսրայէլի կացո զաչսդ՝ յառաջնորդ մարտին. և անդէն բանակն դիւահուսմբ ընդ ոսիւք խորտակեսցի վատնեալ 'ի սպառ. և ընդարձակեսցի բերան քո յերգս օրհնութեան։

Եթէ չարիք մեծամեծք կարեօք 'ի քո վերայ հասանիցեն՝ սովոյ և աղքատութեամբ, նախատանաց և հալածանաց, իբր 'ի Հողոփեռնեայ գոդցես պաշարումն ամենավարան կրելով, մի՛ խուճապիր, վստահ լեր 'ի Յուդիթ՝ 'ի բարձրութիւն Երուսա-

ղէմի. բաւական է նորա ձեռն միայն տալ յաղթութիւն տկարիդ ընդդէմ հզօրաց բազմաց։

Որոգայթ քեզ 'ի մարդոց թշնամեաց գործեսցի արդեօք 'ի տուգանս կենաց, կամ համբաւոյ, կամ ստացուածոց։ Այլ զինչ ըմբռնել կարիցէ, ուր մերձ աթոռոյ երկնից արքային կայ Եսթեր՝ բարեխօս քո և աղատարար և վրէժխնդիր։ Կամ որոգայթն փչրեսցի, և կամ ինքնին որոգայթադիրն 'ի նոյն անկանիցի՝ զօրէն Համանայ։ Մեծազօր քան զԵսթեր ունիս քեզ պաշտպան, որ ո՛չ հարան է միայն բարձրեալ արքային, այլ և մայր և յանձանձիչ։ Նորին աղերսարկութիւնք են մօր սիրելւոյ հրաման առ որդի կամակատար։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲԱԶՄԱՄԵՂ դոլով դու առեծ, գիտեմ զի յիրաւի տան-

ջիս 'ի խղճէ. առաւել քան յայլ պատճառաց՝ 'ի դատաստանաց ոյ զարհուրիս. ընդ անցեալս մեղացդ և վասն առաջակայիցն կասկածես. ընդ յաճախ ապաշնորհութեացդ անյոյս ես ներողութեան անգամ գտանել ժամանակ, թող թէ ընդգաստութեան և բարեգործութեան։

Ո՛հ, արդարև այդ քան զամենայն դառնագոյն է և երկեղագին. բայց մի՛թէ անյուսալի։ Ունիս քեզ աւասիկ առաւել քան զԱբիգեա շնորհաբան յողբել, առաւել քան զԹեկուացին հանճարեղ 'ի ցածուցանել զարդար զցասումն երկնից արքային։ Ո՛չ պիտոյ են քում պաշտպանիդ բանք բազումք՝ արգահատել քեզ ողորմութի. բաւական է զլուր վերս արտին և զՈրդւոյն խոցուածս յանդիման առնել ցասուցելոյ դատաւորին, ողոք արկեալ. Ցիս ահա ընկալայ զվնասն, ես առ դորա

մեղացն վերաւորեցայ. մահու-
չափ երկամբք ստացայ զդա ինձ
որդի. մի՛թէ զրկեցի՞մ 'ի ժա-
ռանգութէս. 'ի զո՞ւր ինչ լի-
նիցին իմ արտասուք, և արիւն
Որդւոյս վասն դորա փրկութէ
հեղեալ:

Այսպիսում ողբանաց ան-
հնար է բարեգթութեն այ երեսս
դարձուցանել. այլ խոնարհի
յաթոռոյ անտի արդարութէ,
գայ յողորմութեան դուռնն,
գիրկս արկանէ քեզ պարտաւո-
րիդ. զծփանս մեղապարտ ոգ-
ւոյդ փոխարկէ յորդիականն
խաղաղութիւն:

Հապա, թէ մեղաւոր ես դու,
քաջալերեա՛ց. զի պաշտպան քո
ապաստան է մեղաւորաց. և ա-
ռաւել մեծանայ յարդարանալ
քում՝ քան 'ի փառաւորիլ.
այնու եղև նա մայր այ, զի լի-
նիցի մայր փրկողին. երկրորդաւս՝
զփառս առաջնոյն յա-
ճախեաց:

ԱՂՕԹՔ

Եւ տրդ ընդ հզօր քով պաշտպանութեամբ հովանաւորեալ, ո՛վ տիրածին մայր բարեխնամող, զինչ այլ իմիք հոգայցեմ այսուհետև, բայց միայն 'ի քեզ ընկենուլ զհոգս իմ զամենայն։ Շնորհ ունիմ բարեգորով քո սիրոյդ, զի մտադիւր 'ի քեզ ընկալար զխնամս անարժանիս. մանաւանդ երկիր պագանեմ անձնուռ գթութեանդ փրկչին իմոյ և տեառն, որ հաճեցաւ զիւր զմիակ սիրելի զմայրդ կարգել յիմ պաշտպանութիւն։ Որդւոյդ շնորհելոյն, և քո յանձն առնելով զաւ իս խնամատարութիւն, առ քեզ պաղատիմ յուսացեալ, ցո՛յց զզօրութիւն քո 'ի տկարութեան իմում. լուսաւորեա՛ զտգիտութիւն իմ քոյով իմաստութիւն. մաքրեա՛ զաղտս հոգւոյս անարատութիւն քով։

Ի վերջոյ գոչ լեր ինձ միսի-
թար. թէ անկանիմ, կանգ-
նեա. թէ կանգնիմ, պահպա-
նեա. 'ի պահպանելդ՝ իրախուս-
սեա յառաջել 'ի լաւագոյնսն.
և զգնացս իմ կնքեա յելս եր-
ջանիկ կենաց։ Որպէս զի քեզ
պաշտպանեալ, և 'ի քէն առաջ-
նորդեալ 'ի բաղմավտանգ կեն-
ցաղումս, երևեցայց քեզ փրկ-
կեալ և փառաւորեալ յանվը-
տանգ յաւիտենին՝ 'ի գովեստ
փառաց Որդւոյ քո և քեզ՝ միաձայն
օրհնելոց թէ գասուցն
երկնաւորաց։

ՈՒԹ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Ի ՏՕՆՍ

ԽԱՉՎԵՐԱՑԻՆ

Ա

Ի ՆԱԻԱԿԱՏԻՍ

ՍՐԲՈՑ ԽԱՉԻՆ

ՄԱՍՆ. ԱՌԱՋԻՆ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ գան, հոգան վարանին Հրէից գլխաւորք, զի՝ մի՛ գ հնարեսցեն արդեօք կորուսանել զՔրիստոս, որ կենօք և անուամբ անաշխարհիկ լինիցի՝ ի մարգկանէ, վատաստոհմ և շիջեալ փառ։ Հապա, մահու խայտառակուԹՒ, ասէն, դասեա-

ցուք զնա. 'ի փայտ անիծեց պլն-
դեսցի խաչեալ, որ առանց ջնջե-
ալոյ բերէ վանարգութիւն:

Զայս խորհեցան և արարին,
այլ խաբեցան. զի անիծեցն կար-
ծեցեալ գործի՝ զօրհնութեան
բուսոյց ողկոյզ. և անարգանացն
փայտ՝ ցուցաւ գահաւորակ ար-
քունի, արձանագրաւն՝ թէ սա
է թագաւոր Հրէից. և բարձրա-
ցաւ յանզուգական փառս խա-
չեալն, և բարձոյ նմին խաչն:

Այլ ահա սարջանալոյն փո-
խան, դարձեալ խորհուրդ յետ-
սամիտ. զի զխաչ, զոր ինքեանք
կանգնեցին, անտես 'ի մարդկա-
նէ ծածկեսցեն 'ի սպառ. ան-
գիտացեալք կրկին 'ի նախա-
մինս իւրեանց՝ զի ակամայ սպա-
սաւորք լինէին խորհրդոյ մով-
սիսեան տապանակին, նայասպէս
զՔեռն խաչն յանծանօթ վայրս
ամփոփեալով:

Բաբէ. մինթէ լոյս 'ի խաւա-
ր ի ծածկեցի՞: Ո՞խորհուրդ մարդ-

կան չնչաւորաց. քանի՞ օտարա-
բար 'ի խորհրդոց իմաստութեն
ոյ զուր ջանայ յայն ինչ՝ զոր
խնդրէ, և արբանեակէ այնմ զոր
խափանելն կարծէ։

Ահա զոր ատեցողքն Թագու-
ցին, լուսաւորագոյն ևս յայտ-
նեցաւ. ծածկեցաւ առ ժամա-
նակ մի, զի յաւիտեան բարձ-
ցասցի. իբր պարգև նորոգա-
տուր՝ տարևոր նաւակատեաց
պատուեալ. վասնզի երից
հարիւրոց ամաց ծածկութեան՝
հազարամեայ և մշտնջենաւոր
ջրջանաւ տօն տարեկանի հաս-
տատեալ՝ իբր քրիստոսական
գարուն նոր արևադարձ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄԵՆԵՑՈՒՆ յանդիման կանգ-
նեալ կայ արդ խաչն տէրունա-
կան. տեսանէ զայն Հրէայն ան-
հաւան, տեսանէ և հաւատա-
ցեալն. նա ամօթով կորանայ,

սա զուարճանայ պարծանօք. 'ի նմա կոծումն անմխիթար, կաստաղութիւն անյոյս և այժմ և յապառնի դատաստանն. իսկ 'ի հաւատացեալն՝ երեսաց զարդ, սրտի ընդարձակութիւն:

Այլ ցե՞ր բ արդեօք. ի՞նչ թէ որպէս այժմ 'ի խաչն պարծի, նոյնպէս առ յապա պարծեսցի: Աւա՜ղ, զի ոչ անկասկած է ելքն: Վասն զի գոյ առնել նաւակատիս խաչին, այլ գործովք նախատինս նմին. և այսպիսիք 'ի հաւատացելոց սրքան. զի պատուասիրեն զխաչ առանց խաչի. 'ի դէմս տանին զխաչ, այլ ո՛չ 'ի սրտի. երդնուն 'ի խաչ, և անարդեն զխաչեալն. և ուր գևք առանց սրտիւ հաւատալոյ սարսեն 'ի նմանէ, քրիստոնեայն հաւատոյ, և յոլովակի ակնածէ ո՛չ քնաւ: Երկի՛ր, ո՛վ հաւատացեալ, զի մի յայնպիսեաց ոմանց ի՞նչ և դու:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Եթէ ցանկաս արժանաւորապէս մատչել 'ի նաւակատիս սրբոյ խաչին, պահեա զանձն քո որպէս 'ի կերակրոց նոյնպէս 'ի չար գործոց։ Վշտաց պատահելոց համբեր սիրով, փութա 'ի կամաւոր ճգունս։ Աչաց տուր զգուշութիւն յարատեւութեաց. սանձ գիր լեզուի յանպատշաճ խօսից. յանարժան լուրս խցեա զականջս. զձեռս և զոտս կապեա 'ի սահման պարկեշտութեան։ Այսու օրինակաւ նկատրագրեա յանգամս քո զնմանութիւն խաչակրօն վարուց, որ է ճշգրիտ երևութն փառաց խաչին Քրիստի, յոր ունիցիս պարծել և 'ի հանդերձեալ ծագման ներ։

Բ

Ի ԿԻՐԱԿԷԻ ԽԱՉԵՐԱՑԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅՈՐՄԷ ՀԵՏԷ բարձրացաւ Որդին այ 'ի խաչն քառաթև, ոչ և այլ միայց նա գործի մահու, այլ կենաց եղև փայտ և անուանեցաւ: Եթէ արհամարհեաց Քո զամօթ՝ յանձն առեալ ըզխաչն, ապա ընկնեաց 'ի նմանէ զամօթն, ոչ և գոլ ամաչելի՝ այլ պանծալի որոց 'ի Քո յարեցան: Զի՞նչ զարմանք՝ եթէ անդր վերանայցէ խաչն, ուր Քո նըստի. մինչ նա ինքն էր, ուր խաչն էր՝ խոնարհեալ յանարգութեն:

Հայեաց հաւատոցդ աչօք, և տեսանիցես զխաչն աթոռ բարձրութեան և վերացելոյ. զՔո 'ի խաչի խոնարհեալ, և զխաչն 'ի

Քո բարձրացեալ. մանաւանդ իւրոքն խոնարհելով՝ Քո ինքն առաւել ևս բարձրացաւ ըստ Առաքելոյ, և զնա ընդ իւր բարձրացոյց. զի եղիցի խաչն այնքան երկրպագելի հպմամբն, որքան է Քո բնութեամբն: Ո՛վ, քանի՞ անկշռելի է այս բարձրութիւն՝ պտուղ անճառելի խոնարհութեան Որդւոյն այ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Բուրն հար, ով հաւատացեալ, զփայտէս կենաց, զի վերացուսցէ զքեզ՝ ուր հատանել քեզ անկար է քոյով զօրութիւն: Տե՛ս զի յերկրէ գոլով արմատ, յերկինս անդր հատատեալ ուն զվերարձակուն գլուխ, իբրև երկնից և երկրի կապ ընտանեցուցիչ:

Եթէ սանդուղս զնա համարիցիս խմանալի ըստ խորհրդաբեր տեսլեան Յակովբայ, ոտն

փոխեա՛ ընդ նա զփրկագործու-
թիւն խորհուրդս կշռադատելով։
Տե՛ս 'ի գաղաթան նորա զբարձ-
րութիւն իմաստութենն այ, զիարդ
հակառակօք զհակառակսն ներ-
գործեաց։ Տե՛ս 'ի բնի նորա ըզ-
խորութիւն արդարութեանն այ,
զիարդ 'ի վրիժառութիւն մեղաց
յիւր Որդին անգամ ոչ խնայ-
եաց։ Տե՛ս 'ի թեւս նր զլայնու-
թիւն սիրոյն այ, զիարդ հասարա-
կաբար զհեռաւորս և զմերձա-
ւորս առ ինքն ձգեաց յորդեգ-
րութիւն։ Խաչ էր, և եղև արձան
հաստատութիւն ուխտին այ ընդ
մարդկան։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՊԱ մատիր յայս արձան
խորհրդոյ ակամբ, ընթեռնուլ
մտաւորապէս զգրեալսն 'ի նմա
ոչ մրով, այլ արեամբ Որդւոյն
այ։ Անդ ուսանիցիս որպէս ա-
մենարուեստ է ՀԱԾ 'ի փրկել-

որպէս արդար 'ի դատել. որպէս առատ 'ի սիրել։

Պատուեա՛ զփրկագործ քո, երկիր 'ի դատողէն, սիրեա՛ զսի-րող քո. և եղիցի խաչն, որ անհաւանիցն յիմարութիւն է և գայթակղութիւն, քեզ հաւատացելոյդ՝ այ զօրութիւն և այ իմաստութիւն։

Գ

ՑԵՐԿՈՒՀԱԲԱԹԻ ԽԱՉԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ոչ երբէք այնչափ մեծացաւ զօրութիւն այ, որչափ յորժամ տկարութիւն խաչին նուաճեաց զամենայն բռնութիւն աշխարհի և սատանայի։ Ո՞լուաւ, կամ հաւանել կարող էր՝ թէ մահուամբ մահ լուծանիցի. փայտիւ փչրեսցին կարծրակուռ դըրօշելոցն պատկերք. աղխեալ դլուխք դժոխոց խորտակեսցին. ընդ պատուանդանաւ խաչի անկանիցին թագաւորուք երկրի. և որ անարդ էր քան զամենայն, փառաւք ընուցու զամենայն։

Մեծ է արդարև և հրաշազան մատամբ այ տարածանիլ երկնից և երկրի և համատարած

ծովու. մեծ՝ լաստաֆայտիւն նոյեան կրկին հրաշակերտել զաշխարհ. մեծ՝ գաւազանաւ փայտեայ զծով սանձել և դարձեալ արձակել առ Մովսեսիւ: Այլ այս ամ օրինակք այնչափ փոքրունք են առ Ճշմարտութեան խաչին, որչափ առաւել է զանհնարինն առնել հնարաւորս. որչափ զմեղանչականն՝ գործի հաստել արդարութիւն. որչափ զարդարութիւնն այ ընդ ողորմութիւնն համբոյր կացուցանել. որպէս զի լինել այնքան արդար՝ որքան ողորմած. և այսմ օժանդակ ունել զխաչին գործարան իբրև երկթևեան կշիռ սրբութեան:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Տկար ես դու, ով հաւատացեալ, և տկար՝ առաւել քան զոր գիտես և կարծես. տկար

'ի մարմին և 'ի հոգի, ըստ բնու-
թեան և արտաքոյ բնութեան, պա-
տերազմեալ յաշխարհէ և 'ի սա-
տանայէ: Բայց զի՞նչ տկարա-
նայցէ քեզ յորժամ զամենա-
զօրն ունիցիս դաշնաւոր ան-
դրսային 'ի ծննդենէ աւազանին,
զայն՝ որ և Որդւոյն ՀՕ զէն եղև
զօրութեան առ 'ի քակելոյ զամե-
նայն բռնութիւն:

Խաչն՝ որ տկարն էր առ մար-
դիկ, եղև զօրագոյն քան զՀՕՄ
սուր երկայրի: Սովաւ իբրև
կարթիւ ըմբռնի սատանայ. մար-
մին սանձահարի. հոգի սպա-
ռազինի. նետք փորձութեանց
անոյժ անկանին. վիշտք և պա-
տահարք է զի նահանջին, է զի
քաղցրանան:

Եթէ բնաւորեալ դառնութի
Մեռային քաղցրացաւ փայտիս,
ո՞չ առաւել ևս դառնութիւնք
աշխարհի անուշեացին քրիստո-
սական խաչիւն: Զի՞նչ աղդեցեն
հիւանդութիւնք և ցաւք առ զ-

բուլթք խաչին, որ զմահ գլխու-
վին անպիտանացոյց։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մ՚ամօթ քեզ համարիր, ով քրիստոնեայ, զնշան խաչին, որ Քոի պարծանքն է, և ահարկուլթի դիւաց։ Ամրացո՛ զինովս այսու զհոգի և զմարմին. գրոշմ խաչին տպացի յամենայն անդամս քո։ Յելս և՚ի մուտս այն լիցի քեզ պահապան և ապաւէն. ՚ի սկսանել գործոց՝ զխաչն տեառնագրեա՛, և՚ի կատարմանն զայն գիցես կնիք. եթէ ննջես, եթէ յառնես, զխաչն պատկերեա՛. որով յառաւօտէ մինչև ցերեկոյ խաչանիշ երևեսցիս յամենայն կողմանց։

Ո՞վ երջանիկ զինաւորիս, որ յամ ժամ կայ անպարտելի զինուն ճածայնով, ՚ի ձեռին ունելով զանսխալ յաղթուլթիւն՝ եթէ կեցցէ, և եթէ մեռանիցի։

Դ

ՑԵՐԵՔՀԱԲԱԹԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ոչ ըստ հանդիսման ինչ՝ այլ կարի յարմարութիւն ընդ տօնական յիշատակս սրբոյ խաչին կարգեցաւ խառնել և զեկեղեցւոյ տօնախմբութիւս։ Եթէ առ տեղեաւն կառուցմունք տաճարաց զոյգ ընդ յայտնութիւն տէրունական խաչին պատճառս եւուն տօնակցութիւս, այլ առ'ի միտս մեծագունի ևս խորհրդոյ է ցուցակութիւն։

Ընդ Քո և ընդ եկեղեցի զինչ այլ որոշումն կայցէ, բայց իբր դլխոյ և մարմնոյ, իբրև փեսայի և հարսին. յորս յաւէտ միութիւն գոլով քան զանազանութիւն,

որով Քն՝ նովիմբ և եկեղեցի նշանակի։

Ի խաչն եղև Քն՝ի հանգիստ՝ի ծննդենէ մինչ՝ի մահ.՝ի խաչին և ծնունդ եկեղեցւոյ՝ի տիգաչոց կողէն։ Խաչիւն Քն պատկեալ՝ի փառս, խաչիւն և զեկեղեցի պատկեաց և պատկեսցէ. խաչակիցք երկոքին, որով և փառակիցք։

Ո՛չ այլով մատանեաւ խոսեցաւ Քն ինքեան զեկեղեցի, բայց խաչին. առանց խաչի ո՛չ ճանաչէ զնա իւր մարմին. ինքն Թագաւոր վշտակիր, ո՛չ հարսնացուցանէ իւր Թագուհի փափկասուն։ Մի աՀթոռ երկոցունն՝ խաչն. նոյն երկոցունց գաւազան. նոյն դրօշակ։ Վասն որոյ եկեղեցի կամ՝ խաչիւ խմանի, կամ՝ ո՛չ է եկեղեցի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԽԱՉԻՒ ծնաւ Քրիստոսի յաշխարհ անխնամ և 'ի վայրի. խաչիւ սնաւ և աճեաց 'ի հալածանս և յօտարութեան. խաչիւ եկեաց նախատեալ և ոչ համարհեալ. 'ի խաչի կատարեաց զկեանս ա-նիծապարտ մահուամբ։ Մինչ բանիւ. ձեռք նորա կաթեցու-ցին զմուռս մշտակիր մեռելու-թեան։

Եւ ահա նոյն ձեռք են, որ կազմեցին զեկեղեցի՝ Քրիստի մարմին և հարսն. որով ծնաւ նա 'ի լեառն զմուսոյ 'ի Գողգոթայ ցա-ւօք և հեծութիւն. սնաւ և աճեաց 'ի հալածանս, 'ի չարչարանս 'ի մարդկանէ և 'ի դիւաց։ Կայ միշտ նշաւակ եղեալ անօրինաց. և մինչ 'ի կատարած գնեղութի կրելով յաշխարհի, ըստ որում և փեսայն իւր կանխաւ պայմա-նադրեաց։

Զ խաչդ ապա օտարոտի ինն կարծեցի տեսանել զեկեղեցի ծանրաբեռնեալ հանապազ ընդ խաչիւ. որ զի այն է նորա դաշն և կնիք հարանութեան. այն նորա զէն առ 'ի վանելոյ զամենայն բռնութեան մոլորութեան, մեղաց և մահու։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԵԿԵՂԵՑԻ Քո՛ի ո՛չ յայլ ինչ պարծի, բայց միայն 'ի խաչն քո՛ն Յո՛ի. և խաչն ո՛չ յայլ ինչ ունի պարծել՝ բայց 'ի Քո՛ և յեկեղեցի։ Բազմօրինակք են յաշխարհի վիշտք, տառապանք, ցաւք, տանջանք, անարգութիւն, մահ. ըստ նմին խաչք և խաչեալք յոլովագոյնք և պէսպէսք։ Սակայն ո՛չ մի յայնցանէ 'ի պարծանս է, բայց միայն որ յեկեղեցւոջ կատարի հաւատովք վանի՝՝։

Եղկեալք այնոքիկ՝ ոլք յու-

նայնութիւն սակս կամ ապիրատութիւն 'ի խաչ ելանեն. անիծեալ արդարև որ զայնպիսի փայտէ կախեալ կայցէ, զի այն լինիցի նմա հուր տանջողական։

Այլ դու հաւատացեալ, զոր խաչ ընտրես տանել և պարծել. զաշխարհի՞, թէ զքո՞ին։ Խուսել 'ի միոյն կամ'ի միւսոյն անհնար է. ոչ ոք առանց խաչի ունիցի մուտ և ել յաշխարհ։

Եթէ եկեղեցւոյ ես անդամ, զնորայն պարտիս տանել զխաչ զկամաւորն՝ վասն ճշմարտութեան և արդարութեան։ Հալածեցի՞ր վասն այ, կրեա՛, աշխատեա՛ց վասն այ, կեա՛ց, մեռի՞ր վասն այ։ Այսպէս ունիցիս պարծել 'ի նեղութիւնս, որք զփառաց պսակն յօրինեն քեզ՝ զպատերազմողն և զթագաւորեցելոյ. զի այնպէս պսակէ զքո՞ զիւր եկեղեցի։

Ե

Ի ՀՈՐԵՔՀԱԲԱԹԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Զ,ՈՐ արարած հրաշափառագոյն քան զառաջինն հաստատեաց Քո զեկեղեցի սուրբ՝ 'ի մարդկանէ առեալ, և ոչ ըստ մարդոյ. յաշխարհի՝ այլ ոչ յաշխարհէ. յերկրի՝ այլ վասն երկնից։ Ո՛չ ոք մտանէ ընդ սա առանց Հշմարտութեան. ոչ ոք կեայ 'ի սմա առանց սրբութեան. ոչ ոք երանանայ առանց համբերութեան։

Ա յսոքիկ սիւնք են երեք հաստատահիմն, յորս ամրացեալ բարձրանայ եկեղեցի, և գերածայրեալ յերկինս՝ միանայ յէապէս Հշմարիտն, 'ի սուրբն և յերա-

նելին ՝ած ։ Եթէ այսմ երկնաբերձ շինուածոյ հիմն է քո, ոչ մի բռնութիւն խախտել զայն կարող է. եթէ լոյս նորա քո է, մոլորեցուցանել ոչ ոք կարէ. զօրագլուխս զքո ունելով, ով յաղթահարել կարիցէ ։

Արդարեւ յարեան 'ի վերայ նորա հեղեղք ստուերեաց, մրրիկք բռնութեանց յուզեցան, պատրանք դիւաց յաճախեցին, և անօրէնութեանց խոհերք. այլ նա էկաց անշարժելի, կայ և կացցէ նոյնպէս. երկինք և երկիր անցցեն, և բան քոյ՝ յոր եկեղեցի հաստատեալ կայ՝ մի անցցէ յաւիտեան ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աչ մի դու, որ կասդ յեկեղեցւոջ, համարիցիս նոյնպէս զանձնդ անշարժելի գոլ. երկիր առաւել ևս՝ մի արդեօք յանսասան վիմիդ՝ սասանիցիս դու

կամ մոլորութիւն, կամ անօրէ-
նութիւն։ Մի պարծիր առ անկե-
լովքն. մի արհամարհեր զար-
տաքոյ եկեալսն. զի և դու եր-
բեմն կամ արտաքոյ էիր, կամ
կարեա լինել։

Եւ մի դարձեալ զհաւատովք
կալն յեկեղեցւոջ շատ համա-
րիցիս՝ առանց գործոց, զի՞նչ
օգուտ քեզ ուղիղ հաւատալ
և չարաչար գործել. զի թէ ա-
ռաջնումն վկայեա ճշմարտութիւն
եկեղեցւոյ, երկրորդիւն նախա-
տինս դնեա սրբութիւն նորա. իսկ
անտուրբն իբրև զանհաւատն մի-
օրինակ տանջի. և առաւել ևս՝
որպէս ընտանի թշնամին քան
զօտարն։ Դիւրագոյն լիցի դա-
տաստան այնմ՝ որ արտաքոյ ե-
կեղեցւոյ է, քան որում չարա-
չար կայ յեկեղեցւոջ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՃՇՄԱՐԻՏ անդամոյ է ոչ զիւրն եւ թէ հոգալ զառանձնային օգուտ կամ զվնաս, այլ ըզմարմնոյն բովանդակ։ Թէ եկեղեցւոյ իցես անդամ կենդանի, այնու ծանիցիս՝ յորժամ ընդ նորա բարիս խնդաս և ջանաս. յորժամ 'ի վնասուէն զգուշանաս կամ վշտանաս։

Նախանձ տան քո կերիցէ զիս՝ աղաղակէ հանապազ որդի հարազատ եկեղեցւոյ։ Թէ առաջնորդ իցէ՝ հսկէ 'ի վերայ հօտին, խնամէ, զանձն դնէ, զկորուսեալն խնդրէ, մոլորելոյն ձայնէ, դարման տանի վիրաւորելոյն, առողջիցն խրախոյս արկանէ, զանբժշկելին հատանէ։ Իսկ եթէ առաջնորդեալ ոք իցէ, հրամանի հպատակ կայ. քան յիւր հանգիստ, առաւել 'ի շինուածն եղբօրն ջանայ ուր բա-

բեաց օրինակօք, ուր խրատուք ուր աղօթիւք, ուր ձեռնտուութիւն. 'ի գայթակղութիւն դնելոյ առաւել քան 'ի մահուանէ երկնչի։

Այսպիսիք են որք զեկեղեցի զարդարեն, որք ցնծան ըստ փառս եկեղեցւոյ. ինքեանք զնա մեծարեն յերկրի, և 'ի նմանէ մեծարին յերկինս։ Լիր դու ապա որդի արժանի այսպիսւոյ մօր զի քև բերկրեսցի յաւիտեան։

Զ

Ի ՀԻՆԳՐԱԲԱԹԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա՝Ի ուսաք գոլ զեկեղեցի Ճշմարիտ, մի և սուրբ, տիեզերական և առաքելական։ Քանի՞ մեծ է և ՝ծծահրաշ ՝ի մէջ բազմալեզու ազգաց զանազանելոց ըստ գաւառի և ժամանակի և օրինաց՝ տեսանել զանլոյծ միութի՝ յայն ինչ, յոր առաւել գժուարին է մարդկան զհաւանողականն միեղինութի՝ յանձն առնուլ. կապիլ ՝ի մի գլուխ, ՝ի մի վարդապետութիւն, ՝ի մի կրօնս, ՝ի մի յոյս անեղեւոյթ։

Ընթա՛ յարեւելից յարեւմուտս, յածե՛ց շրջեա՛ ընդ հիւսիս և

մօրն . պինդ կալ զսրբութիւնն զոր 'ի նմանէն առեր . պաշտեա՛ սրբապէս զամենայն կրօնս նորա . զի առաւել ևս օր ըստ օրէ սրբեսցիս , և սուրբ արասցես զանուն մօր քո , և զօրհնութիւն նորա ժառանգեսցես՝ զօրագոյն քան զօրհնութիւնս լերանց մշտընջենաւորաց :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՉ սահմանեաց Քո զեկեղեցի իւր 'ի մի ազգ , 'ի մի տեղի , 'ի մի ժամանակ՝ ըստ հրէական եկեղեցւոյ կանոնափակ անձկութեան . առ ընդարձակութիւն սիրոյ նորա և փրկանացն կարի անձուկ է լայնատարը ծոց սիրելերաց : Զքարոզս եկեղեցւոյ իւրոյ զառաքեալսն մերկոտն և թեթևընթաց գնացոյց ընդ աշխարհ ամենայն՝ քարոզել ոչ միսում ազգի և գաւառի , այլ ամենայն արարածոց :

Զի ուր միանգամ հասանէն ընթացք արևու ծագաց՝ի ծագս, անդր և աւետարանին ձայն լսելի լինիցի յիւրաքանչիւր լեզուս։ Ընթացան ընդ տիեզերս ոստք աւետարանչացն, լուսաւ ամենայն երկիր, հաւատաց, և հիմնեցաւ մի եկեղեցի ընդհանրական։

Ո՞ բնաւ ամփոփել կարիցէ զխորան, զոր ՚ի ձգեաց ընդ լայնութիւն երկրի. ո՞ չարակնեսցէ ընդ առատ բաշխումն երկնաւոր բարեացն՝ զոր անսաչառ հասարակաց սիրէ ՚ի։ Մի՛ դներ, ով դու, խտիր ազգի և ազգի, զի մի՛ զարդարն լսիցես կշտամբութիւն. միթէ այսմ ազգի ևեթ իցէ ՚ի, և միւսումն ոչ։ Այլ ճշմարտութեամբ ծանիցես՝ թէ յամենայն ազգս, որ երկնչին յայ, ընդունելի է նմա։ Զիք ակնառութիւն առ՚ի նմանէ. ամենեցուն առաջի բանայ զփրկութիւն ՚ի ճանապարհ։ Եթէ դու մտեալ իցես ընդ այն, մի՛ հա-

մարիր քեզ միայնակ գնալ, մի զայլս արգելուր 'ի մտանելոյ. ապա թէ ոչ՝ զընդհանրականն գործես առանձնական. որ ոչ ևս մնայ եկեղեցի ճշմարիտ առ յայ կանգնեալ, այլ 'ի մարդկանէ։ Այլ թէ առաքելոցն ես աշակերտ, խնդա և գոհացիր զայ՝ թէ որպէս ընդ ամենայն աշխարհ ածէ և պտղաբերէ աւետարանն այ։

Է

ՑՈՒՐԲԱԹՈՒ ԽԱՂԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Տեսանեմ ընդ Ճանապարհ Լերինն Գողգոթայ զխաչն բարձեալ 'ի Թիկունս անպարտ գառին Յեսու. այլ 'ի գլուխ լերինն տեսանեմ զգառն ինքնին բարձեալ 'ի Թևս խաչին. նախ Քո զխաչն յանձն առնու, և ապա խաչն զՔո: Ո՞վ տեսիլ, տեսիլ ահաւոր առ այնոսիկ՝ որք աչօք հայէին, այլ սքանչելի որոց մըտօք նկատիցեն:

Ո՞արդեօք եբարձ 'ի Թիկունս նորոյն Իսահակայ զփայտ պատարագիս. միթէ Հրէայք առ տեղեաւն, այլ խորհրդեամբ՝

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԶԳԻՐ Վեսասու՝ ոչ զոր Պիղատոսն եդ, այլ զոր Հայրն երկնաւոր, տեսանեմ 'ի գլուխս խաչիս։ Իբր պարտաւոր մեղաց մարդկան դատապարտեալ Քո, զիմ զձեռագիր յանցանաց յանձին իւր կրէ. վասն իմ մատնի, վասն իմ կապի և անարգի, վասն իմ չարչարի, վասն իմ թողանայ, վասն իմ մեռանի։

Ո՛վ, շատ է արդ, մինչև ցե՞րբ ոչ դադարիցիս, սուրդ արդարադատ. դարձիր, աղէ՛, 'ի յանցաւորիս վրէժխնդրութեն. ես մեղայ, ես անօրինեցայ, դա գառնդ այ զի՞նչ մեղաւ. եղիցի այսուհետև ձեռն քո յիս յանիրաւեալս։ Զխաչդ արդարութե՛ ահա ես ընդգրկեմ ախորժաբար. տանիմ զնա 'ի սրտի և 'ի մարմնի. տարածանեմ զանձին իմ 'ի վերայ նորա. քևեր-

ռեա՛, տէր, որպէս և կամիս. արբո ինձ լեղի. թո՛ղ 'ի տապնապն՝ այլ ոչ յօգնականութէն. մինչև եղէց արժանի աղաղակել. Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զոգի իմ։

Ը

Ի ՀԱԲԱԹՈՒ ԽԱՉԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կատարեաց քո զաշխարհակեցոյց զքեզ պատարագ խաչին. 'ի Հայր աւանդեաց զոգին կենդանական. մարմին նորա թողեալ զխաչ՝ 'ի գերեզմանի հանդեաւ։ Սակայն ոչ եթէ մերկ թողաւ խաչն՝ լքեալ անոք։ Մայրն ցաւագին առ նմին կայ անձամբ, 'ինման իսկ բեւեռեալ սրտիւ և խորհրդով։ Զայնէ առ որդիացեալս իւր յանձն ցով հանեալ, որ ոք 'ի ձէնջ յօժարելոցի կախիլ զխաչէ միածնիս իմոյ, ահա ժամ և օր փրկութեան. ես զնմ միածնն պատարագեցի

վան ձեր. եկայք մատերուք և դուք պատարագ փոխան որդւոյ իմոյ. խառնեցէք զձեր արիւնաղ ընդ արեան նորա, եթէ ցանկայք զորդիութիւն նորա յանձինս ձեր ճշմարտել։ Մի երկնչիք թէ միայնակ զձեզ թողուցում՝ի կիրս խաչին. ես ինքնին խաչակից ձեզ լինիմ, որպէս միածնիս եղէ։ Տեսէք զիարդ կորեաւ արդարն յամի՝ տէրն ձեր, և կորնչելով եգիտ զձեզ ՅԻ. դուք անարդարքդ ոչ արդեօք ախորժիցէք կորուսանել վասն նորա զմարմինս ձեր և զանիստս, որով զյաւիտենիցն գտանիցէք զփրկութիւն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ո՞ԴԱՆԴԱՂԵՍՑԻ բնաւ՝ի ձայն մայրագորով հրաւիրանացս. մի՛թէ խնայիցեմք՝ի մեղանչական մարմինս մեր, ուր ՅԾ Հայր և մայրն անարատ չխնայեցին յանպարտ միածին իւրեանց։ Եկայք

փուլթասցուք և մեք ելանել արաստքոյ մարմնախառհ բանակին՝ յանձն առեալ զնախասինս խաչին, որ այժմ փառաց եղև գործի և նշանակ։

Եթէ մայրն 'ի խոր խոցեցաւ առ միածնին խաչելուլթք, այլ 'ի մերումն բերկրեալ զուարճանայ, տեսանելով զի որդիացելոց այ լինի մայր բազմածին. պատկ նմա յօրինեն խաչակցեալքն ընդ Քրի։ Թագուհի մարտիրոսաց նա գոլով, 'ի մարտիրոսացելոց խաչի պաշտօն առնուլ ցանկայ. իւրեան իսկ ձեռօք կամի կապել 'ի գլուխ նոցա զպատկն՝ որով որդի իւր պատկեցաւ։

Ծանր է նմա տեսանել ընդ խաչապատակ գլխոցն անդամս ատեցողս խաչի։ Փախուցեալքն 'ի խաչակցուլթենէ Քրի, առաւել վշտացուցանեն զնա քան զբուն խաչահանուսն։ Հապա ահա բազուկ խաչին կայ տարա-

ծեալ. որ ոք նախ անդր դիմեաց, զառաջին յաղթանակն տարց անվրէպ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Եւ արդ զի՞ խորհիս դու, անձն իմ ամենապարտ, որ ընդ առաջնոց յանցանացդ ունիս և զայժմուս, և յապառնիսն կաս միշտ դիւրակործան։ Ի՞նչ արդեօք սրբեսցիս 'ի գործեցելոցն և յառաջիկայիցն պահպանեսցիս, եթէ հեռի 'ի խաչէ փրկչին քո գնայցես ընդ ճանապարհն լայն և ընդարձակ։ Զի՞նչ օգուտ քեզ մեծարել տօնախմբութիւն զխաչն տէրունական, և 'ի հաղորդակցութենէ խաչին օտարանալ անձնադիւր կենցաղավարութիւն։ Ո՞չ ամաչես տեսանել զայն անբիծ արեամբ Քրի զանգեալ, և 'ի քո մեղանչական աւրինդ խնայել։

Մայրն առ խաչին զարիւն

սրտի խորոյ ընդ աչն քամէ. խաչակից որդւոյն զքեզ հրաւիրէ. քեզ զամենայն խնամակալութիւն խաչիւն խոստանայ. դու այսոցիկ անփոյթ արարեալ, զնաիրդ և քում փրկութիւնդ ապախտ լինիս։

Ո՛չ, այդ մի՛ լիցի։ Ահա խաչեցեալոյն առ սէր իմ երկիր պագանեմ. զնաչն ինձ ապաւէն ունիմ և հանգստարան. մայր ինձ սիրոյ և ցաւոց զմայր խաչեցեալոյն ընտրեմ. ո՛չ ևս 'ի նոցին վշտակցութիւնէ մեկնեցայց. լամ ընդ նոսա զիմ չարիսն, մինչև խնդացից՝ վայելեալ ողորմութի՛ն նոցա բարիսն։

Ի ՏՕՆ

ՎԱՐԱԳԱՑ ՍՐԲՈՑ ԽԱՉԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Լ՚ԹԷ գանձ անթաքչելի ասաց՝ որ գաւանեացն զխաչն փրկչական, ոչ այլաբանութիւն՝ քան թէ իրօրէն զիսկն նշանակեաց։ Զխաչդ ոչ անթաքչելի խոստովանեացի այն՝ որ թէ և հարուստ ժամանակաւ յանծանօթս ընդ հողով ծածկեալ, յետոյ ուրեմն ինքնեւրևակ գայ ՚ի ցուցակութիւն։

Գործօնեայք խաչին Հրէից գաւք՝ անյայտացուցանել զնա հնարեցին զառաջինն յանարժան վայրի. այլ յետ երից հարիւրոց ամաց վերերևեալ ծանու-

ցաւ նա փառաւոր առ Հելլինեաւ դշխոյիւ։ Երկրորդ անգամ դաւանողացն ձեռաք ամփոփեալ ծածկեցաւ յանձուկս լերինն Վարագայ։ Եւ ահա այսօր իբր 'ի լման այլ ևս երից հարիւրոց ամաց՝ դարձեալ ինքնածագ փայլմամբ երևեցանայ 'ի տեսուլթի հաւատացելոց։

Ո՛չ արդարեւ, ո՛չ հնար է թաքչել այնմ՝ որ զեկեղեցի լուսաւորէ՝ իբր արևակն զտիեզերս համայն. մտանէ՝ այլ առ 'ի վերատին ծագելոյ. յար 'ի նորոգման կայ առանց մաշելոյ։

Մշանջենաւոր թագաւորութեանն Քրիստոսի սա դաւազան անփուտ. հանապազ ընդ մեզ և 'ի մեզ Քրիստոս, ընդ նմին և խաչն։ Ո՛չ կամի խաչեալն Քրիստոս երկրպագութի 'ի մէնջ ընդունել արտաքոյ խաչի իւրոյ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աստուծոց տեսչութեանն առանձին խնամքն են առ հաւատացեալս՝ զի ոչ շատ համարեալ զնաչին քարոզութի, որ միշտն պաշտի յեկեղեցւոջ, 'ի կիր առնու երբեմն և զհրաշագործ երեւումն առ 'ի զարթուցանելոյ 'ի սիրտս հաւատացելոց զոսպաւորագոյն յիշատակ խաչակիր տընօրէնութեանն Քրիստոսի։ Եթէ նմին իսկ Քրիստոսի խաչին գործարանաւ լինել սահմանեցաւ փրկիչ, ևս առաւել հաւատացելոց նորա անհնար է 'ի փրկութիւն անդր վերելակել առանց խաչին սանդղոց։ Յայս իսկ համառօտեցաւ քարոզութի աւետարանին, գիտել զՅն Քն, և զնոյն 'ի խաչ ելեալ։

Ուսումն է այս դժուարընդել, արագասահ յուշոյ յիշատակաց մարդոյ՝ որ հանգստեան և անցաւ կենաց է խնդրող միշտ։

նմին լրի և սկիզբն, և ծայր գիտութեան խաչն Քրիստոսի խնդրելի է առն հաւատացելոյ. սա այր նորա և քէ։ Մոռանալ զայն այնպէս է վտանգաւոր, որպէս բնաւ չգիտելն. նա այս նուազ դատելի քան զայն՝ լրբ յոչ կամաց անգիտութեան քան զմոռացութեան կամաւոր։ Անձնդիւրութեան, հրապոյրք աշխարհական, դիւաց խաբէութեանք գողանալ հնարին 'ի մոտաց մարդոյ զխաչին յիշատակ. և զինչ զարմանք՝ եթէ նոյնպէս վոյթ ինչ ոչ ստէպ յիշեցուցանել զայն հրաշանորոգ յայտնութեամբ։

Նովին կանոնաւ և աւետարանին քարոզող Պօղոս՝ զոր ինչ նորահաւատ մարդկանն ուսուցանէր՝ աչաց առաջի զՔրիստոսի նկարագրելով 'ի խաչ ելեալ, զնոյն և բազմուսումն վարդապետին աւանդէր Տիմոթեայ, «Յիշեա՛, ասելով, զՅիսուս Քրիստոս յարուցեալ 'ի մեռելոց»։ և ամենեցուն առ

հասարակ երկրորդելով «Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ որ 'ի քո Յա»։

Ապա և դու հաւատացեալ, թէ աշակերտ իցես, թէ վարդապետ, կանխեա՛ հանապազ յուսումն խաչին. զի՛ր քեզ յանդիման զդաւազանն դերծեալ նկարէն արեամբ, մինչև 'ի սիրտ և 'ի վարս քո նկարեսցի պատկեր խաչեցեալոյն՝ լինել քեզ խաչազգեաց հաւատովք և մեռելութեամբ կարեաց մարմնոյ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Կենանք քրիստոնէին ոչ ըստ արևու բերման չափին՝ որչափ աւուրս կեայ 'ի վերայ երկրի, այլ ըստ կրից հաճոյականաց նոյ, որովք կեայ 'ի խաչի։ «Ըստ աւուրց փայտին կենաց, ասէ Եսայի, եղիցին աւուրք ժողովրդեան իմոյ»։ Խորհրդածեա՛ ըստ այլաբանութեանն, և տեսա-

նիցես՝ զի այնչափ աւուրս հա-
մարէ ՅԾ իւրում Ժողովրդեան
հաճոյացելոյ, որչափ կեան 'ի
վիշտս չարչարանաց վասն Յ։

Ամք Թագաւորի սակ արկեալ
են՝ որչափ աւուրս տիրէ մարդ-
կան. այլ քրիստոնէի կեանք
համարեալ են ցորչափ տիրէ
մարմնոյ, ախտից, կամաց իւրոց
և դիւաց։ Խաչն է նորա գիր
ազգահամարի։ Եթէ հարիւրե-
մեան ես ալէօք հասակի՝ այլ ոչ
ալէօք վշտաց, մանուկ դիտեա՛
զքեզ 'ի քրիստոնէութեան։

Ո՛վ, քանի՞ մեծ են պատ-
րանքդ, եթէ կարծիցես հաւա-
տալ 'ի Քո անճնդիւր վարուք.
ուր ինքնին հաւատք սահմանեն՝
թէ քեանք խաչել ունին ըզ-
մարմին կարեօքն և ցանկու-
թիւք։ Մի խաբիր անխայելով
'ի մեղանչականդ քո մարմին,
ուր Քո ոչ յիւրն խնայեաց
յանմեղն և 'ի սրբարար։

ԴԱՐՁԵԱԼ

Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ՎԱՐԱԳԱՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կենաց փայտ ծածկեալ երբեմն 'ի լեառն Վարագայ՝ արդ հանգչի լուսածագ յայտնութիւն 'ի վերայ սրբոյ սեղանոյն։ Ոչ ըստ դիպման ինչ՝ քան թէ խորհրդեամբ 'ի լեռնէ 'ի լեառն է փոխադրութիւն։

Զի՞նչ այլ համարիցիս խակուութիւն զսեղանն սբ, բայց զնոյն ինքն Գողգոթա՝ լեառն պատարագի Որդւոյն այ։ Անդ աբեամբ պատարագեցաւ Քրիստոս, և ասա անարիւն. բայց պատարագիչ նոյն, պատարագեալն նոյն. նոյն ընդունող պատարագին, նոյն և արդիւնք մատուցմանն։

Ապաքէն բազումք 'ի հաւատացելոց 'ի մոռացօնս ունին. կամ բնաւ անգիտանան, թէ սեղանն ՝ որ՝ զենարան է Որդւոյն այ. նմին իրի այ տեսչութեանն հոգացեալ, խաչի երևմամբն իբր մատամբ ցուցանել կամի հաւատացելոց, թէ գողգոթա է սեղանն՝ յորում խաչն կանգնի. և որ ոք առ սեղան անդր մատչի, ունի հաւատով կալ 'ի գողգոթա առ խաչին: Քննեա՛ զխորհուրդս քո, ուրանօ՞ր կաս արդեօք 'ի մատչել ՝ որ՝ պատարագին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ահարհի կենցաղք վշտալից են անդատին 'ի ծնէ. վասն որոյ ո՛չ բնաւ 'ի դադարման կայ խաչն քրիստոսական, այլ յար 'ի թռանիլ է յաջ և յահեակ՝ գտանել զարժանաւորս իւր: Եթէ հարկանին 'ի քեզ ցաւք

մարմնոյ, հիւանդութիւք, պա-
տահարք տան և ստացուածոց,
ահա այսոքիկ խաչք են թռուց-
եալք 'ի քեզ կամաւն Քրիս-
տոսի, որք յիշեցուցանեն զնո-
րա կրեալն վասն քո. ապա
բուռն հար սիրով, ընդգրկեա՛
համբուրիս։

Բան նախատանաց լուար,
զրպարտեցար, յանիրաւի զրկե-
ցար, փոխան ընդ բարեաց չա-
րիս կրեցեր. խաչին են թռիչք
այսոքիկ՝ յիշեցուցիչք Քրիս-
տոսի նախատանացն. տա՛ր և
դու համբերութիւն։ Զի՞նչ մեծ
է վշտանալ քեզ առ սեղանին
Քրիստոսի, ուր Բահաղու պաշ-
տօնեայք զմարմինս իւրեանց
ցտէին յարիւն առ նորա պիղծ
սեղանովն։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ոչ արժան է վհատել յոր-
ժամ յաճախութի վշտաց խա-

էին քեզ վիճակեսցի։ Թէ և ծանրանալ 'ի վերայ քո Թուի զառաջինն, այլ որպէս ԹեԹևաԹուիչ է նա, է և ԹեԹևացուցիչ։ Թէ յօժարուԹիւն զայն բառնաս, և նա բառնայ զքեզ վերոյ ամենայն վշտաց. արիուԹի քեզ պարգևէ, տայ պարծել 'ի նեղուԹիւնս, խնդալ և գոհանալ. որով ոչ ևս ճնաս դու խաչեալ, այլ խաչահանուս կրկին քոց, բևեռող մարմնոյ անդամոցդ, ջաղխիչ գլխոյ հին օձին. և 'ի կատարածին խաչիւն պսակեալ՝ Թագաւորեսցես ընդ Քրիստոսի յերկինս։

Ի ՏՕՆԻ

ԵՐԵՄԻՍԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

«Երևեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս»

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ո՞Ր իցէ արդեօք նշանս յամենայնէ ոչք երևեցուցիչքն են գերազանցութեան Քրիստոսորին մերոյ։ Ապաքէն երկինք երևեցուցանեն տեսլեամբ և ընդարձակութիւն իւրեանց զմեծութիւն և զփառս նորա. արեգակն զպայծառութիւն նորա. լուսաւորք ամենայն զբարեբաշխ առատութիւն պարգևաց նորա. հուր զտհաւորութիւն և զսաստկութիւն զօրութեան նորա. օդք

զամէնընթաց անօսրուն նորա։

Այլ սակայն ոչ այսք և ոչ այլքն ամենայն արժանացան արձակաբար նշան կոչելոյ։ Նըշանք են սոքա ըստմասնեայ և թերակատար, յայտնիչք առանձին իմիք գերազանցութեան Քրիստի։ Խաչն միայն է նշան արձակաբար, նշան ընդհանրական և ամենատեսիլ. իբր սահման համառօտ և տուռ փակագիծ ամենայնի՝ որ ինչ 'ի Քրիստ և 'ի Քրիստէ։

Վասն զի ցուցանէ զայն՝ որ ըստ ճշմարտութեան, և որ ըստ տնտեսութեան. ցուցանէ զփառս նորա ընդ անարգութեան. զզօրութիւն ընդ տկարութեան. զիմաստութիւնն ընդ կարծեցեալ յիմարութեան. զբարութիւն ընդ խըստութեան. զողորմութիւն ընդ արդարութեան։ Երևեցուցանէ զնա պարտաւոր և անպարտ, դատեալ և դատող, մեռեալ և կենդանի։

Այս նշան երևեցի ոչ ևս յերկրի՝ իբր յառաջնումն, այլ յերկինս՝ իբր երկին գերազանց քան զերկինս. և յերևել նորա լուեցեն այլ ամենայն նշանք։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՆՇԱՆՔ կամայականք երևեցուցիչք են այլոց և այլոց ըստ այլ և այլ հաճոյից։ Յորժամ հեթանոսն տեսանէր զխաչ, իմանայր զխաչեալն վատանուն տամբ և հայրենեօք. յորժամ հրէայն տեսանէր զխաչ, իմանայր զխաչեալն անիծապարտ յայ։ Յորժամ քրիստոնեայն տեսանէ զխաչն՝ իմանայ զխաչեալն տուող ազնուութեամբ մարդկան, և բարձող անիծից։ Այսչափ այլազգի են խորհուրդք մարդկան 'ի խորհրդոցն այ. այսպէս այլ ընդ այլ տեսանեն աչք մարդկան, և աչք հաւատոյ։

թէ հաւատով ակնարկես 'ի խաչն սէրուն՝ական, տեսանես զնա մատեան արիւնագիծ՝ գը-ռեալ նեղքոյ և արտաքոյ, 'ի վեր և 'ի խոնարհ։ Նեղքոյ ընթեռ-նաւս զնա գործի վրկութեան, զէն յաղթութիւն, պսակ արքայ-ական։ Իսկ արտաքոյ՝ անիծից գատապարտարան, փայտ պա-տուհասի, աղգակից ծառոյն յանցանաց։

Տեսանես 'ի վեր գծագրեալ զբարձրութի մեծ վայելչութիւն ՝այ, և 'ի խոնարհ՝ զխորս խման-տութիւն նորա. իսկ 'ի թևան՝ ըզ-լայնութի և զընդարձակութիւն սիրոյն ՝այ։

Ո՞վ արդեօք կարող էցէ բա-նալ զմատեանս, և մտառել զան-ճառելիսն որ 'ի նմա. բայց միայն զենեալն 'ի նմա գառն, և որ զհետ երթայ գառինն խաչակ-ցութեամբ, նա տեղեկասցի ըստ չափու աշակերտութեանն։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ա՛Ր մարդիկ սովորութիւն է զգործիս անարգանաց բառնալ 'ի միջոյ անյայտութիւն, զի մի՛ անարգեալն և ևս անպատուեսցի, և մի՛ անարգուքն կամ թշնամիք յաւէտ խնդայցեն, և մի՛ սիրելիքն ամօթով կորացին։

Զի՞նչ այլ անարդագոյն յաշխարհի քան զգործարան խաչին։ Եւ սակայն ո՛չ միայն զնոյն զթաղեալն և զանյայտեալն 'ի մարդկանէ 'ի վերս Հան Քրիստոս, և ո՛չ միայն 'ի գլուխս պսակաւորս աշխարհակալ իշխանաց վերացոյց զնա, այլ և 'ի տեսիլ ամենայն աշխարհի երևեցուսցէ զնա յերեսս երկնից պանծանօք։

Եթէ նիստ երկրաւոր թագաւորի 'ի տեղի անարգ՝ ազնուացուցանէ զնա քան զբեհեզեայ առագաստս, զի՞նչ ապա առնիցէ հանգիստ փառաց թա-

գաւորին 'ի խաչն անարգանաց։ Ապաքէն փոխեալ զանուանն՝ ոչ ևս խաչ, այլ աթոռ փառաց տրար զնա, անմատչելի ամենայն երկրաւորաց։

Վասն այսորիկ ընդ երևումն նորա՝ փառք Քրիստի խաչեցեալոյն և ևս բացափայլեսցէ. հրեշտակք պատկառեսցին, արդարք զուարճասցին, մեղաւորք ամաչեսցեն, անհաւատք ապաշաւեսցեն, խաչահանուքն բալեսեսցեն զկուրծսն յանօգուտ, և գործունեայք չարին դէք՝ սարսեսցին հարեալք 'ի նշուլեց նորա։

Իսկ արդ ընդ խնդացողն լինել կամիս, թէ ընդ լացողս. եթէ այժմէն կրեսցես զխաչն 'ի սրտի, երևոյթ նորա զուարճալի դիպեսցի քեզ յաւուրն յետնում։

ՈՒԹ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ՎԱՍՆ ԱՒԱԳ ՀԱԲԱԹՈՒՆ

Ի ՀԱԲԱԹ ՕՐՆ ՑԱՌԱՋԸՆԹԱՑ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ

ՅԻՇԱՏԱԿ

ՑԱՐՈՒԹԵԱՆ ՂԱԶԱՐՈՒ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅԱԽՏ մարմնոյ ըմբռնեալ դնի Ղազարոս՝ սիրելին Յեսի տեառն։ Քոլքն սգաւորք 'ի սփոփումն ցաւագին որոց իւրեանց պատգամաւոր առաքեն առ ամենահնար բժիշկն, սիրելութեանն յիշատակաւ զարթուցանելով զփոյթ խնամոցն։

Լսէ զայն Յիսուս . անկասկած առնէ 'ի վտանգէ մահուն . յամէ գնալ անդր աւուրս երկուս, և Ղազարոս մեռանի :

Ո՛վ մահ՝ դառնագոյն առ քորան կենդանիս քան առ մեռեալն Ղազար : Լսել թէ կեցցէ , և տեսանել զի մեռաւ , ո՞չ ապաքէն զառաժամայն յոյս նոցա փոխարկէր 'ի սուգ անփարատելի : Ա՛յլ ո՞վ ամենահնար իմաստուութե բժշկին , որ կրկնակի կամեցաւ 'ի վար արկանել զցոյցս սիրոյ և զօրութե իւրոյ , 'ի կենդանացուցանել միանգամայն զսիրտ քերցն , և զմարմին եղբօր նոցա :

Ոչ պարգեւէ ՚ած 'ի ժամու բազում անգամ զոր խնդրեմքն , որպէս զի առաւելագոյն շնորհեսցէ մեզ տարաժամու : Թողացուցանէ անկանել քեզ 'ի ցաւս ինչ . ոչ փարատէ զեկեալ հասեալ տառապանս . այլ է երբէք զի սաստկացուցանէ և

ևս։ Այսպէս յամենայ 'ի գալ, զի կրկին առատացուսցէ 'ի քեզ զշնորհն՝ նախ զհամբերութեն, ապա զաղաւութեն 'ի վերուց։ Ապա մի՛ լքանիր 'ի խրատու տեառն. ուստի՛ր համբերութիւն քով զերաւունս մխիթարութեան 'ի յայ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՐՑԱՆԷ Յ՞ , ո՞ր էդիք ըզսիրելին իմ զՂազար. և կայ տեսանէ 'ի բացէ յայրի միում վիմով ամրափակեալ։ Այլ անդէն քաղցր արտասուս յաչացն ծորելով, ցուցանէ թէ 'ի սրտին կենդանի ունի զսիրեցեալն, և 'ի վկայութեն անհաւանիցն՝ աղաղակէ առ երիզապինդ մեռեալ մարմինն. Ե՛կ արտաքս։ Տեսին զնա անհաւանքն և 'ի միտ առին՝ թէ որ զմարմինն կենդանացոյց, կարող էր առնել՝ զի և մեռցի մի։

Ահաւասիկ քանզի յոյժ սի-
րէր զնա, կամեցաւ և ինքն վշտա-
նալ արտասուելոյն, և զարտա-
սուսն մատոյց դեղ կենագոր-
ծող, և զսէրն եցոյց գրաւական
անմահութեան, Ճանաչել թէ
ցայն վայր կենդանի է մարդ,
ցորչափ է սիրեցեալ: Այսու 'ի
միտ առնում և ես քանի՞ կսկը-
ծագին և ես արտասուեաց բարե-
գորութն Յն ընդ մեռելութի հոգ-
ւոյս մեղօք, որ դառնագոյն է
նմա քան զմարմնոյ մեռելու-
թի. որչափ ազաղակեաց՝ առ
կենդանութի զիս վերակոչելով.
և ուր Ղազար զոյգ ընդ ձայնելն
եկաց յանդիման՝ զի սիրէր, ես
անյարիր մնամ և անլուր, զի
օտար 'ի սիրոյ եմ:

Վայ ինձ 'ի կրկնակի մեռե-
լութեանս՝ հոգւոյ և մարմնոյ.
զնաիրդ ոչ արտասուեմ, ինքր ոչ
ողբամ զանձն իմ: Բայց զի կեն-
դանի թերևս զիս առգնեմ, ոչ
զգալով նեխոյ հոտոյն գարշու-

թե, որ զզուելի առնէ առ ած և առ մարդիկ։ Այլք հոգան իմումն կենդանութեան, և ես իբր կենդանի գոլ զանձնս խաբեմ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բա՞ՒԷ, յարուցիչն Յիսուս և Ղազարոս յարուցեալն կան միմեանց խրախակիցք յընթրիս սիրոյ. և զի՞նչ պէտք անդ խորակաց համադամոց, ուրա՞նօր սիրելութիւնն էր նոցա և կերակուր և ըմպելի և երգ ցնծութեան։ Աչք նոցա 'ի միմեանս խանդաղատէին անթարթափ, 'ի միմեանց լսել, առ միմեանս խօսել, զիրերաց խորհել. այս էր բովանդակ նոցայն սեղանակցութիւն։

Լսեն զայս ամենայն և տեսանեն իսկ հրէայքն մերձաւորք և հեռաւորք. են որք շահեալք՝ հաւատան 'ի Քս, և են որ ընդ Ղազարու խնդակից լինին։ Իսկ

ատեան նոցա զինչ. մահ խոր-
հի երկոցունց. միումն՝ զի կե-
ցոյց, և միւսումն՝ զի եկեաց.
յանցանք նոցա այս միայն էր:

Տեսանե՞ս, թէ զիարդ խորհի,
և զինչ հատուցանէ աշխարհ.
և դու սիրե՞ս զնա տակաւին, որ
այսպէս անիրաւ է 'ի դատել,
անագորոյն 'ի սպանանել: Կամ
ընդ այն զի զարմանաս՝ եթէ
փոքրու քոյ երախտեաց անշնոր-
հակալու լինիցին մարդիկ, կամ
հատուցանիցեն ինչ չար: Բա-
րեգործութի՞ն յաճուսա միայն
պակի. իսկ առ 'ի մարդկանէ
կամ ոչ ճանաչի, կամ ընդ չա-
րեաց դնի համարի:

ԱՂՕԹՔ

Ա՛Ր քեզ աղաղակեմ, ո՛վ
բարեխնամող Յի՛ս, և հեղում
զսրտիս պաղատանս միաձայնու-
թի՛ ընդ պաշտօնասէր քերցն
Ղազարու: Գթա՛ ըստ անբաւ

մարդասիրութեանդ. յանձն իմ
ախտացեալ և 'ի մահ մերձե-
ցեալ. մատո՛ ցօղեա՛ զկեցուցա-
նողդ կաթուած ամենահայեցիկ
աչացդ առ հոգւոյս իմ անախ-
տութեն. լոյծ զկապանս մեռ-
օրինակ ախտից իմոց. և շնորհեա՛
ընթանալ անապատաքեալի ընդ
շաւիղս հրամանաց քոց. որով
կարող լինիցիմ մատչել համար-
ձակ յերկրպագելի ոտս կեն-
դանացուցչիդ իմոյ, փարել ըզ-
նոքօք ոգւոյ համբուրիւ, թա-
նալ աղի ցօղով զղջման՝ փոխա-
նակ քաղցրաբուխ արտասուացն՝
զոր վասն իմ լացեր, ո՛վ ա-
մենողորմ: Զե՞մ արժանի խառ-
նիլ 'ի բազմական քոյոյ սե-
ղանոյդ նման Ղազարու. բայց
գոնէ 'ի նշխարաց քո ողորմու-
թե՛դ մի՛ գտայց սովեալ, տէր
անոխակալ. և եթէ ոչ ծառայ-
եցի քեզ և ոչ ծանուցայ որպէս
սիրելի, մի՛ աղաչեմ իբրև 'ի թըշ-
նամւոյ երեսս դարձուցանի՛ցես:

Ի ԿԻՐԱԿԷԻ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ի ԽՆԴԻՐ են հրէից գլխաւորք՝ պատուիրակս ևս կարգեալ վասն Յեի. և խնդրեն զնա՝ ոչ զի նշանոքն 'ի վարդապետութիւն աշակերտեալք հաւատայցեն, այլ վասն նշանացն և վարդապետութեանն անկեաց վախճանաւ բաւնայցեն զնա յաշխարհէ. լաւ համարեալ քան կորնչել համօրէն ազգին՝ միոյ աւն ևեթ մեռանել։

Եթէ Յե խոյս տայր երբեք յերեսաց թշնամեաց՝ ոչ առերկիւղի, այլ սպասելով ժամուն սահմանելոյ, այն ահա

եկն եհաս։ Ո՛չ և սա դաղտագո-
ղի յանշէն անապատս շրջի նա,
կամ յանծանօթ գիւղս և յո-
սար գաւառս, այլ աւանիկ ամ-
բարձեալ փառօք, շուրջանակի
մեծարեալ յամբոխից բազմաց,
իբր խայտալով՝ի վերայ բլրոց,
շքով արքայականաւ դիմեալ
դայ՝ի մայրաքաղաքն եբրայա-
կան։ Ոչ փողք առաջի նորա և տա-
ւիղք և քնարք արուեստականք,
այլ մեծահնչիւն և միաձայ-
նութիւն ժողովրդոց առաջի և
զկնի՝ ովսաննա երգովք զեկեալ
թագաւորն պատուասիրեն՝ ան-
երկիւղաբար դաւանութիւն։

Դղրդի Երուսաղէմ բովան-
դակ. իշխանք և օրինագէտք
յապուշ հարեալք՝ Ո՞վ է սա,
հարցանեն. և լսեն յաննախանձ
ժողովրդենէն. Մարգարէն է սա,
Յե՛ի Նազարեթէ։ Ուր առ հար-
ցողացն չարուն ասել՝ի դէպ էր.
Սա նա է՝ զոր սպանանէն խըն-
դրէք. արդ՝ի ձեռս եկեալ կայ։

Բաբէ, ով 'ի միտ առնուցու զառակս իմաստութեան քոյ. նա որ յամենայն կեանս իւր յանձին տարաւ զանփառունակ նուաստութիւն, զիարդ մերձ 'ի կատարած արքայակերպ եկաւորի, իբր այն թէ 'ի թագաւորել գայցէ. ուր ըստ արդեանցն կատարման յառաւելագոյն անարգութիւն իւր յարդարէր զամենայն. զի անդ ուր հնչէր այսօր՝ Ովսաննա 'ի բարձունս, յետ սակաւուց որոտայցէ՝ Խաչեսցի ընդ անօրէնս։ Որպիսի այս թագաւոր, որոյ գահոյք խաչն է պատրաստեալ։

Հապա ելցուք և մեք նմին ընդառաջ՝ երկիր պագանել և օրհնել ընդ բարձրութեան նորա և զխոնարհութի, ընդ մեծութեան և զէրն. զի Ճոխաբար գայ՝ ցընծալից բերանովք 'ի ժողովրդոցն բարեբանեալ, և ինքն արտասուս կաթեցուցանէ յաչացն 'ի վերայ քաղաքին անշնորհակալուի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ահա թագաւոր՝քո գայ՝ յա-
ռաջաձայնէ մարգարէն. թա-
գաւոր տիրապէս, այլ հեզ,
այլ արդար և փրկիչ։ Եթէ յա-
հաւորուէն պատկառիս, վստա-
հացիր՝ի հեզութենն.՝ի սաստէն
երկնչիս՝ զի արդար է, ողոքեա՝
քանզի փրկիչ է։ Իբրև թագա-
ւոր հզօր յաղթող է ամենայն
թշնամեաց իւրոց. բայց հեզու-
թեն ներող առ ամենեսին. ար-
դարութեամբ զամենեցուն պարտս
հատուցանել գայ, զամենեսին
փրկել՝ի կորստենէ։

Աղէ մի՛ յետնիր և դու լի-
նել հանդիսակից. անդր ահա
ընթանան ծերք և տղայք, կոյրք
և կաղք, աղքատք և մաքսա-
ւորք։ Ընդ ծերան մանկաբար
խայտա՛ յօրհնելոգութիւն. ծե-
րունաբար ընդ տղայն խորհրդ-
դաբանեա՛. լուսաւորեցի՛ր ընդ

կուրաց. ընդ կաղն վազեա՛ կայ-
թելով։ Լէր Զաքէոս՝ 'ի գլխոյ
ծառոյն զՅն խնդրելով, զի ար-
ժանասցիս վանատուր լինելար-
դարացուցիչ քում Թադաւորի։

Աղքատ ես 'ի գոյից. այլ
ահա առանց արծաթոյ ունիս
ձիթենիս և արմաւենիս, մատո՛
զոստս ծաղկեալս հաւատով.
քաղցրացո՛ զօրհնաբանութիւն
յերկինս. տարածեա՛ արկ ընդ
ոտիւք Նորա զշորտի քո ախոր-
ժակս փոխանակ հանդերձից։
Ընդ աշակերտացն մի՛ ամաչեալ
լով քարոզեա՛ զեկեալ Թագա-
ւորն. թո՛ղ լուիցեն անհա-
ւանքն, հաշտեսցին և զայրանայ-
ցեն. զի որպէս լռել կարեն հա-
ւատացեալք, ուր քարինք ան-
գամ յաղաղակել պատրաստ են։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մտանէ փառօք Յն Թագա-
ւոր յԵրուսաղէմ երբև յիւր

արքայարան. այլ զի մի յափըշ-
տակութիւն իմն կարծեսցի թագ-
առնուլ, 'ի տաճար անդր մատ-
չի աղերսարկու և նախանձաւոր
փառացն ՅՍ: Անդ իշխանաբար
զտուն ՅՍ սրբէ յանտեղի վա-
ճառացն. անդ 'ի մանկտուոյն
օրհնի իբրև արքայ երկնաւոր.
անդ կուրացն բժշկութիւն, և
կաղաց վերադարձուցէ զզօրութիւն
բարեգործին:

Իսկ ո՞ւր է ապա սպասահար-
կութիւն պաշտօնէից տաճարին:
Այլ նոքա 'ի համաշխարհական
բարեմասնութիւնն կուրացան կա-
ղացան 'ի շաւղաց իւրեանց. ո՛չ
նախանձն ՅՍ, այլ բեղխարայ եկեր
զնոսա 'ի թշնամանել և յանտես
առնել զեկեալ փրկիչն. որ և յի-
րաւի ելթողլիք զնոսա, ել գնաց
տխրագին. վասն զի ո՛չ ծանեան
զժամանակ յերկնից այցելութիւն
իւրեանց:

Տե՛ս 'ի միտ առ, անձն իմ.
ուր միանգամ նախանձ չար

զօրանայ, և իշխանակրութիւն և անձնայարգութի, անդ տկա-
րանայ գոգցես բարեգործական զօրութին ՝ այ. ոչ և ես երևի անդ
քո թագաւոր հեզ և փրկիչ, այլ դատաւոր խիստ անողոր-
քելի ։

ԱՂՕԹՔ

ՆԱՑԵԱՑ և յիս, բարէխնամ
ՅՈ, ոգւոյս իմ թագաւոր. հայ-
եաց քաղցրութեամբ որպէս 'ի
կոյրն բազմապաղատ, որ ոչ իբրև
զնա որդի ասակ Դաւթի զքեզ
դաւանեմ, այլ 'ի վերս ես Դաւ-
թի տէր և Որդի ՝այ ։ Փարատեա
'ի հոգւոյս աչաց զանտեսութի
խորհրդոց քոց. պարգևեա կա-
ղացելոյ ոգւոյս ընթացս ուղիղս
զկնի հետոց քոց. բաց զբերան
իմ և զլեզու յօրհնութիւնս քո
լինել փառաբանակից զուար-
ճացելոյն ընդ առաջ քո մանկ-
կանց տղայոց ։ Ահա կամ տա-

բաժեալ ընդ ոտիւք մարդասի-
րութեանքս. մի գարշիր, աղաչեմ,
զալ ագանել 'ի տան հոգւոյս.
կարող ես սրբել զայն յանմաք-
րութեց, և տաճարացուցանել
հօր քում, զի եղիցի քեզ 'ի
բնակութեն յաւիտեան :

ՅԱՒԱԳ

ԵՐԿՈՒՀԱՐԱԹ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԿՄԱՆ ԱԴԱՄԱՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱԹԷ յարարչագործ զօրութիւնն հրաշացոյց ՅԾ զարուեստս իւրոյ իմաստութեանն, 'ի հաստատել զմարդն եղանութեամբ վերջին, այլ պատկերակցութիւնն գերիվերոյ համայն արարածոց, 'ի վեր եւս արտափայլեաց զսէրն նախախնամական, զուարճութիւն յանձն ցուցանելով 'ի բովանդակել անդ մարդուն զարարածս, և 'ի մարդկանն աղդուրախ լինելով։ Բաւէ զարմա-

նալեայն. զնարդ որ ինքն միայն երանելին է խակուԹՐ, 'ի մարդումն ուրախ լինիցի՝ յաղօտաղիծ իւրում պատակերի, առաւել զարմանահրաշ երևեալ մարդասիրուԹՐն՝ քան աշխարհագործուԹեամբ։

Որպէս ձեռագէտ Ճարտար՝ խնամով արուեստակեաց զմարդն. հոգացաւ նմա օգնական համաբնակից. կայան բնակուԹՐ անկագործեաց դրախտ ամենազուարճ. խմաստուԹեամբ և սիրական իրաւամբք մեծացոյց զնա 'ի վերայ ամենայն ձեռակերտաց իւրոց։ Եւ զինչ այլ. երկու գոգցեաս ՈՒծս յուցանելով 'ի սիեզերքս, ՈՒծ երկական զմարդն՝ անեղին ՈՒյ փոխանորդ և գործած սիրոյ. աՐարուածոնն խոնարհ քան զնա, այլ սիրով՝ հաւասարորդ. միմեամբք բերկրեալք, յիրեարս հանդուցեալք. ՈՒծ միայն մարդասէր, և մարդ միայն ՈՒծասէր։

Աչ որպէս միշտ արարիչ, նոյն-
պէս միշտ սիրող. բայց եղիւ ար-
դեօք ըստ ՝ անդրադարձի միշտ
սիրեցեալ։ Յիւրմէն, այո՝ միշտ
սիրելի, և միշտ սիրեցեալ։ Իսկ
ապա 'ի մարդոյն. աւաղ, զի
Ադամ ոչ ևս յանդիման երևի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ո՞Ր ես, Ադամ, հոգալով
իմն ձայնէ արարիչն՝ շուրջ է-
կեալ 'ի վայրս դրախտին։ Ո՞ր
ես, Ադամ. հիմ չերևիս որպէս
միշտն՝ ընդ առաջ քո սիրողիդ.
ահա զոր սիրեցիդ՝ խնդրեմ, ըզ-
հանդուցիչդ իմ՝ յոր զուարա-
ճանայի՝ որոնեմ, 'ի համբոյր
սիրոյ եկեալ կամ. ո՞ւր ես, զի
յամենաս, մի արդեօք փոխե-
ցար յընտանութենէդ։

Այլ Ադամ քօղարկեալ յա-
ւէտ ամօթով քան ընդ ծա-
ռովք՝ յամենատես սիրողէն, ոչ
ևս բարբառ սիրոյն արձակէ առ

սիրեցեալն, այլ յանցաւորի և երկուցելոյ և ինքնադատ ամբաստանողի։ Ի ձայնէ քումմէ, ասէ, որ յառաջն ախորժալուր առ իս հնչէր, այժմ զարհուրեալ թաքեայ, մերկանդամ զիս ինքն գտանելով։

Ո՜ ամենաթշուառ փոփոխումն. զի՞նչ և ուստի՞ քեզ այդ մերկութիւն։ Ի հանդերձից ոչ բնաւ. զի և յառաջն անվերարկու էիր, և ոչ թաքչէիր։ Այո՝ արդարև յիմմէ սիրոյս մերկացար. զիմ զթշնամի սիրեցեր. բանի կողածնիդ լուար՝ և ոչ իմում դիւրագործ հրամանի։ Մինթէ այս է վեհ իմաստութիւն՝ որով զքեզն պատուեցի. զայդ հատուցեր սիրոյն իմ տրիտուր՝ որով ընդ քեզ հաճեցայ։ Ո՞ւր ես, Ադամ. այն՝ զոր ես ուզիլ ստեղծի, իսկ դու Ադամ այլ երևիս օտարատեսիլ, խոտորեալ և կորակոր։

Վա՜հ իմոյինս արարչախնամ

սիրոյ. վայ կորստականդ ապե-
րախտութիւն. եղուկ քեզ, և որ
զկնիկ քոյինդ զարմի։ Մերկա-
ցար 'ի սպառ համօրէն սերընդ-
ք քեզ զանեղութենն անպատ-
կառացոյց տեսիլ. ծածկոյթ
քեզ ամօթոյ զթզենիդ ունիս
դժնդակ կենօք. անէծք այսու-
հետև, ցաւք և քրտունք և
մահ քեզ բաժին՝ փոխանակ
բարեբաստիկ անմահութեանն։
Ո՛չ ևս կայ քեզ տեղի 'ի յարա-
զուարճ դարաստանիս. ուրտա-
քոյ լեր 'ի քաղել քեզ փուշ
խոցոտիչս, թէ կարիցես հան-
գիստ գտանել։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԱԳԱՊԷՍ 'ի գործ եդաւ
տարագրութեանն դատակնիք.
պատժաւորն Ադամ համազու-
գաւն Եւայիւ անդարձ վտարե-
ցաւ. առան փակեցան ճանա-

պարհք դրախտին 'ի հրաշինեալ պահապանաց։

Ո՛վ աղէտիցն. զի՞նչ այդ ողբոց պատահումն, ո՞ Նախահայրդ Ադամ. յորմէ՞ բարձրութենէ յո՞ր խորս սահեալ անկար, յամենապատիկն երջանկութէ 'ի բոլոր հնքուն վայրանկեալ քոյինազարմ ծննդովք։ Զո՞վ ոք առաւել լացցուք ողբասցուք թշուառական որդիքս. զքե՞զ՝ որ կամաւ յանցեար, թէ զմեզ՝ զորս դու յանցուցեր։

Այլ ահա ողբակիցք և արտամահալորդք ընդ հօրդ մերում՝ լամք միաձայն զհասարակաց մեր կործանումն անկանգնելի. ոչ զայն սակ՝ զի փափկութեանցն դրախտի անՃաշակք եղաք և անմատչելիք, այլ զմեծն զանմխիթարելին տոյժ, զի յաՃծային 'ի քաղցր երեսաց օտարացաք ապաշնորհ ատացուածք ՅԻ, ոչ և տիրականք՝ այլ ծառայացեալք ցաւոց և ախտից, առ 'ի

չարն հակամիտեալք և անհամ-
բոյրք բարւոյ։ Աւաղ յոգի վի-
րաւորեալոցս. ի՞նչ թէ բժշկու-
թիւն գոնէ մասամբ գտանիցեմք
կարևոր չարեացս, կամ սրտի
դիւր 'ի դժնդակակիրն հոգոց։

Այդ ձեր լալիւն է, որդեակք
իմ, ասէ կողկողելով նախա-
հայրն Ադամ. զի՞ ճմլեցուցա-
նէք զսիրտ իմ հանդերձ ամ-
թով, և յաւելուք ողբս հեղ-
ձամղձուկ վտանգաւ։ Ողբալ
յիրաւի է ձեզ, բայց ինձ կրկին
և բազմապատիկ ևս. զի մեղայ
և մեղուցի, զսկեցայ և զսկեցի,
և փոխանակ կեալոյ՝ մահու եղէ
ձեզ պատճառ, ո՛վ զաւակք իմ։
Այլ օ՜ն. խրախոյս առեալ ձեր
ընդ իս, փոխան առաջին անախ-
տութեան զատաշխարհութի կա-
լարո՛ւք յանձինս. զարարիչն ո-
ղորքեցէք այսուհետև ի բերև փեր-
կիչ և քաւիչ։ Եդ բնակեցոյց
զիս յանդիման դրախտին, ո՛չ
հեռի յարարչական իւրոց խնա-

մոցն. կայ յոյս արտաքոյ դրախ-
տին և հաճոյանալ նմա, ըստ
որում և խոստացաւն իսկ. մի-
այն զի յորմէ եան անկայ՝ զգու-
շանայցէք գուք. մի՛ անսալ, մի՛
ունկնդրել շողոմարար բանից,
որպէս ես ունկն մատուցի Ե-
ւայի, և նա օձին: Քան զբնա-
կանալ 'ի դրախտի, զգաստու-
թիւն կալ արտաքոյ լաւ և ս է:

ԱՂՕԹՔ

Ա՛ռ ո՛ այլ ապաստանեսցուք
մերժեալքս և տարակուսեալքս,
ո՛վ նորոգողդ բնութեան մերոյ
Յե: Զի Ադամն առաջին ոչ
և ս ճանաչէ զմեզ իւր որդիս
պարգևաց, այլ ցաւոց և ամե-
թոյ: Դու միայն, նորդ Ադամ,
հայր հանդերձելոյ աշխարհին,
դու կարող ես նորոգել զմեզ
'ի հնութենէ առաջնոյն. դու
միայն բժշկել յանցելոց մեղաց,
պահել յառաջիկայէն, և կե-

ցուցանել մինչ 'ի վախճան։ Ա-
նիծից առաջնոյն բարձող դու
ես, միայն օրհնութիւն տուօղ. և
յայդ խորհուրդ զանիծադրու-
թիւն փոխեցեր այսօր յանպտղա-
բեր թզենին. զի մեզ պահեսցի
օրհնութիւն քաղցր սիրոյ քոյ՝ առ
'ի պտղաբերս առնելոյ զմեզ ՅԻ,
զի լինիցիմք դրախտ իմանալի
ՅԾատուն՝ բարեգործութիւնք
զարդարեալ, յորում զուարճա-
նայցես զգնալով՝ առաւել քան
յեդեմականին, զոր կորուսաք։

ՅԱՒԱԳ

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

ՅԱՌԱԿ ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մարդոց մահկանացուի չէք ինչ, չէք ուրեք աներկեանուութի 'ի բարւոյն սահմանի։ Եթէ երկինք ոչ կարացին 'ի հրեշտակական ոգիսն անախտակիրս յաւերժացուցանել զբարեմասնութեն վիճակ, եթէ չնորհազարդելոյ մարդոյն առաջնոյ ոչ դրախտին ապաստանարան բաւականացաւ, և ոչ բնութիւնն անտխեղծ՝ պահել զնա յակաստանի, որ այն վատահութի ելէ ախտաւորացս և բնաւ տկարացելոց չսայթաքելոյ 'ի շաւիղս ճշմարտութեան։

Գերազանց յառաքինակրօն վաստակս համարեալ է կուսութեան ճծանուէր, որ գիտէ ընդ ճծ համազուգեալ զմարդ պնդապէս, իբր հարանական կապով անլուծանելեաւ։ Այլ բաբէ, ազգ առնէ մեզ փրկիչն և ոչ յայն վատահել՝ յայտնաբան առակաւ կուսանաց թուով տասանց, այլ կիսով ևեթ ընտրելոց։

Ի տասունս անդ նմանատիպ փայլէր կուսականն մաքրութեան, հաւատար ջերմութեան՝ ի պաշտօն երկնաւոր փեսային, միակրօն ճգնութիւն, հակեալ միաբան, հանգչեալ միաբան։ Իսկ ապա՝ ի կատարածին զինչ այն տարակարծ անհաւասարութեան. մինչև կալ արգելուլ հնգից նոցա արտաքոյ հարանարանին, թէպէտ և թախանձանօք զբացումն դըրանն ժամին։

Ողորմելի՜ արկած սրբանելոցն. սակաւիկ իւղոյ ոչ նա-

խահոգակ գոլով անխմաստաբար, 'ի վարձուցն ժամու ունայնաձեռն յամենայն վաստակոց վրիպեալ գտան։ Կոյսք, ճգնասունք, աշխարհատեաց, երկնահանդէսք խոտան եղեալք՝ ընդ բուն անօրէնս ընկալան քաժին կորստեան։

Եւ դու, ո՞վ անձն զաղփաղփուն, յո՞ր ամրութիւն վարուց պնդեալ կայցես անկործանելի. ուր մայրք հաստարմատք 'ի հրեշտակաց և 'ի մարդկանէ զիւրեանցն անկումն ողորմելի հառաչեն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՉԱՐՄԱՆԱՄՔ արդեօք, և զվան էրն հարցաքննեմք աւաղելի պատահմանն. զի՞րդ կուսանքն հնդէքին միակրօնութիւն ընդ այլոցն առաքինացեալ՝ ինքեանք յիմարեցան անխրատք յիմաստնոցն օրինակէ։ Ո՛չ որ-

տաքին փորձուԹիւք, ո՛չ Թշնամիք դաւաճանք. ո՛չ ախտակիր սովորուԹիւք օտարացուցին զնոսա յիմաստուԹէ, այլ կարծելն լոկ՝ Թէ զոր ունին՝ այն բաւական է նոցա:

Յայսմ յիմարեցան սոքա, ուր ընդ հակառակն՝ այլոց հնգիցն իմաստուն եղև երկնչելն, զոր ցէ զոր յաւելուածումն ունէին՝ չիցէ և ինքեանց բաւական, Թո՛ղ Թէ այլոց ևս: Անմիտք շատ համարեցան առ 'ի վայելումն հարանարանին՝ զի կուսուԹիւն զհետ երԹան փեսային, իբր այն Թէ հասեալք իցեն, և իրաւամբք ունիցին անվրէպ տեղի փառաւոր՝ վերոյ քան զայլս արդարոց կամ ապաշխարողաց: Ահա զոր կարծեցին Թէ բաւական է, կշռեցաւ և գտաւ պակասեալ: Լաւ ևս էր նոցա զամուսնուԹի ունել երկիւղածուԹիւն, քան զկուսուԹի յանձնապատանուԹեամբ:

Բազում այնք են 'ի մաքրա-
կրօնիցն, որք կորնչին վատահե-
լով յանձինս՝ քան որք յայլ
ծանուցս յանցանելով։ Զի՞նչ
ամրութի եցէ պատկերի ոսկւոյ
կանգնելոյ 'ի վերայ ոտից խեցե-
ղինայ։ Այսուհետև որ համա-
րիցի հաստատուն կալ, զգոյշ
լիցի գուցէ անկանիցի։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲԱԶՈՒՄ-երկիւղն և զգու-
շութիւն է յայտարարող զուգա-
թիւ որոշումն առակաւոր կու-
սանացն, հնգիցն յիմարս ելով,
և հնգիցն իմաստուն։ Եթէ ըստ
միւսում տէրունական բանին՝
բազումք են կոչեցեալք, և սա-
կաւք ընտրեալքն, ահա և 'ի
սակաւուց ընտրելոց անտի՝ ըստ
յարացուցի կուսանացն կիսով
չափ ընդ խոտանս անկեալ հա-
մարեցան։ Ո՞չ ապաքէն հնգից
և եթէ մոռանել յառագաստ անդր

վերկիւղ առաւել քան թէ խրա-
խոյս արկանէ։

Աւաղ յեղեղուն վիճակի
մարդկայնոյ. զոր անհրկեւանու-
թիւն խոստանայցէ ոք հասարա-
կական վարուց քրիստոնէու-
թիւն, ուր գերաշխարհիկ կրօնից
անգամ կայ խախտումն և ան-
պիտանութիւն։ Մինթէ ես յա-
պաշխարհաց գոլով սակի ու-
նիցիմ անհրկիւղութիւն, զոր կու-
սանն սրբակենցաղ ունել ոչ կա-
րէ։ Յիւրմէ ակարութէ առա-
ւել՝ քան յարտաքնոցն բռնու-
թէ բազում անգամ կործանի
մարդ։ Եթէ յօտարէ միանգամ
խաբի, յանձնէ տանից և
քսանից, և մեծ ևս վտանգաւ,
որ զի անխաբ զանձն կարծէ։

Կամին մնալ անպատիր, մի՝
անձին քում հաւատար բնաւ։
Կուսանն ես, կա՛ զքեզ խոնարհ
քան զամուսնաւոր. պահացօղ
ես, կանոն քեզ արբեցողի հաս-
տատեա՛. աղքատացար վա՜յ,

ողբա՛ խբրև զաւեշտատացու. վըշ-
տաց բազմաց համբերեցեր, հա-
մարեաց թեթև քան զոր մե-
ղարդ՝ տանջեալ։ Մինով բանիւ,
ցանկա՛ն լինել աներկիւղ՛ի կեն-
ցաղս քո, յերկիւղն հաստատի-
ջիր միշտ. մի՛ երկնչիր՝ բայց մի-
այն յաներկիւղութիւն. վստա-
հութի՛ քեզ կալջիր չվստահել
բնաւ յանձնդ։ Յո՛ւշ լիցի քեզ
հանապազ, զի և կուսանք զոյգ
ընդ զաղրագործս արտաքոյ գը-
տան արքայութի՛ն։

ԱՂՕԹՔ

Ո՞վ ոք այսուհետև անհոգա-
բար ընթանայցէ ընդ շաւիղս
արդարութի՛ն, ո՛վ տէր Յն ազդ-
արարող բարեխնամ, որ՛ի քում
մեգթութենէ բանաս զսկան-
ջըս մեր առակաւ և կանխաղե-
կոյց վարդապետութեամբ՝ ար-
թուն լինել ընդ առաջ քո։ Ե-
թէ բազմավաստակքն յառաքի-
նութեան չունին վստահանալ,

զինչ ինձ նուազելումն 'ի վաստակոց բարեաց ակն ունիցիմ պտուղ փառաւորութեան։

Դու միայն ապաւէն իմ և զօրութիւն. զոր անկեցեալն յիս խորհուրդ բարեաց, աճեցուցիչ դու ես. եղեր զիս 'ի քումմ ճանապարհի, առաջնորդ դու ես. եթէ ընթանամ առ քեզ, խրախուսիչ դու ես. թէ անկանիմ, կանգնես. թմրեալ՝ զարթուցիչ ես. ճոխանամ պարգևօք՝ ըզգուշացուցանես 'ի գողոց։

Զոր ունիմն, ամենայն 'ի քէն է, քև պահպանի, 'ի քեզ պակի, եթէ յիս չպակասիցի ըզգաստութեն լապտեր։ Մի՛ լիցի ինձ, ո՜ծ իմ, ըստ յիմարաց կուսիցն ուղևորիլ յառ քեզ ճանապարհն, և ապաժամանանկանել'ի մոլոց առագաստին. մի՛ զահագինն լուայց՝ Ոչ գիտեմ զքեզ. որ այժմէն աղաղակեմ, բա՛ց ինձ, զի փրկեալ քո եմ, ստացուած քո, և ծառայ յաւիտեան։

ՅԱՒԱԳ

ՀՈՐԵՔՀԱՒԱԹԻ

Ի ՄԱՏՆՈՒԹԻՒՆՆ ՅԻՍՈՒՍԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ասեան Ժողովեն հրէից առաջնորդք և իշխանք. զան խորհել 'ի միասին վասն տեառն, այլ ոչ տերամբ։ Տուն միգապատ արդարև խորհրդանոց նոցա, մրրկայոյզ և յոգնատատան. զպատկերն նախանձու կալեալ իբր տախտակ օրինաց, և ամենեցուն դէմք թխացեալ զառնամաղձութիւն, յուզին տագնապին յանհնարս մտեալք։ Զի՞նչ արասցուք, խորհեցարուք, ասեն, առնս այսմիկ Յիսուսի։

Եւ ահա յանկարծ 'ի ժողո-

վարան անդր գայ մեռանէ շտա-
պաւ Յուդաս Յիսկարիովտայ,
քաջալերս 'ի բերանի. Զի՞ է
ձեզ, պետք Իսրայէլի, զի՞ տագ-
նապիլ յերեսաց առն մեոյ տը-
կարի. աւասիկ ես, ես միայնակ
տայց զնա 'ի կամս ձեր: Դաւ ինչ
առ յինէն նիւթել կասկածէք
մի՛ բնաւ, զի ո՛չ ևս նորա աշա-
կերտ եմ, այլ ձեր արբանեակ
կամակատար. 'ի ձէնջ ընտրեմ
շահել, զոր 'ի նմանէ շահել ո՛չ
յաջողեաց: Զի՞նչ կամիք տալ
ինձ վարձս մատնուլեն:

Յայս ձայն ըղձացաւ առեանն
առ հատարակ 'ի զուարթադէմս
փոխարկեալք ընդ անկարծելի
յաջողուած յոքնավարան խոր-
հրդոյն. հաւանեցան, բան ե-
դին, արծաթ կշռեցին փոխա-
նակ արեանն Յեսի՝ ում ծարա-
ւէին:

Ո՛վ գազան արիւնախանձ
Յուդա, որ փոքր մի յառաջ 'ի
թիւ աշակերտաց, և այժմ 'ի

գնդի սպանողաց. և ո՛չ սար-
սափեցի։ Երբեմն հիւանդաց
բուժիչ 'ի զօրութեի վարդապե-
տին, և արդ վարդապետին կե-
նացն դաւաճանող։ Յառաջն
յանուն Յեի այսահալած, և այս-
օր ինքն իսկ սատանայ։

Զարհուրիմք ընդ երդ, այլ
առաւել պատճառքն են սար-
սափելի. զի անձնամատն այն
յախտարծաթասիրութենէ այնպէս
թափեցաւ 'ի մտաց, մինչև որ
յառաջն յարկեղէն ևեթ փոքր
գողանայր, արդ 'ի բուն տէրն
ոգահեաց գողանալ, և տալ 'ի
վաճառ. և գնողքն խնդալ խըն-
դացին արդարև, բայց զարմա-
ցան ևս ընդ անզգամութենն՝ ա-
ռաւել կատաղի քան զիւրեանցն
ատելութիւն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Անօրէնն Յուդաս 'ի Հրէից
ձեռս մատնէ զանպարտն Յի։

Հրէայք առեալ մատնեն զնա 'ի ձեռս Պիղատոսի դատաւորի. իսկ դատաւորն անդրէն մատնէ զնա կամաց Հրէից, տուեալ 'ի ձեռս նոցա։ Ահա ըստ բանից գրոյն՝ ամենեքին ասքա մատնիչք միայն, իսկ դատիչ լինելիչնէ և ոչ ոք։ ԲաՀէ, անպարտականին արդարութեն վկայք երևեցան նոքին իսկ մատնիչք։

Այլ ո՞վ գաղտնեաց ՀՀ տեսչութեն. զայլ մատնիչս ոմանս լսեմք 'ի գրոց՝ և դատիչս Յեսի իրաւամբք մատնեցելոց։ Եսայի աղաղակէ. «Տէր մատնեաց զնա առ մեզս մեր»։ Եւ ինքնին ՀԾ բարբառի. «Եսու զսիրելին անձին իմոյ 'ի ձեռս թշնամեաց իւրոց»։ Իսկ Առաքեալ 'ի վերայ նորուն իսկ Յեսի վկայէ՝ «Մատնեալ զանձն վասն մեր»։

Ահաւասիկ երկու դասք մատնողաց Յեսի դէմընդդէմ միմեանց կացեալք յատենի։ Երկրաւորքս մատնեն, և 'ի ձեռս նոցա անօ-

բէնութեն, չարութեն, նախանձ գժոխոց։ Իսկ երկնաւորք մատ-նեն՝ և 'ի նոսա արդարութիւն, սրբութիւն, գթութեն անձառ սիրոյ։

Եթէ ընդ առաջինան զահի հարեալ՝ վայս և անէծս 'ի նոսա կարդամք, որչափ ևս հիացմամբ երկիր պագանել արժան է և օրհնել զերկնայինն անոխակալ բարեգթութեն, որ պարտաւորացս փոխան՝ զանպարտն Յն երաշխաւորեաց. և սա յանձն առ մատնիլ ընդ մեր, և 'ի մատ-նութեն տեղւոջ, ուր զՅուդայի չարութեն աւաղեաց 'ի համբուրիւ մատնելն, անդանօր զկամն Հօրն պատուեալ, բաժակին առ 'ի նմանէ մատուակելոյ զբե-ռանն մերձեցոյց ախորժաբար. այսմ մտադիւր հնազանդ, այնմ ներող անյիշաչար։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՊԱՔԷՆ յումմէ կատարեցաւն Յեսի անպարտ մատնութիւն՝ զայն քննեմք և խօսիմք և աւաղեմք. զի՞րդ ո՛չ զևս կարևորն խնդրեմք, յումմէ՞ արդեօք նիւթեցաւ այն. ո՞, ասեմ, եւ պատճառս՝ զի Որդին ՅԻ 'ի մարդկանէ մատնեացի յանկրաւի, իսկ առ 'ի յԻՅ իրաւամբք: Ո՞այլ. բայց ես և դու, և այլք նմանողք մեզ մեղուցեալք:

Բա՛ր է, առ մեզս մեր մատնեցաւ ՅԻ. զանՁն մատնեաց 'ի մեր աղատութիւն. մերոյ վրիժուն՝ նա եղև պարտաւոր՝ յատենի արդարութեն ՅԻ: Ապա ուրեմն Յուդաս և իւրն կամակիցք արբանեկեցին մերում չարութեն. նախ մեք եղաք մատնիչ Յեսի Հատուցողին պարտեաց մերոց: Անդէն 'ի զգենուլ նորա զնմանութի մարմնոյ մեղաց՝ 'ի

նմա դատապարտեցան մեղք, զարթեաւ սուր արդարութեն ՅԻ յանձն նորա։ Ո՛չ Պիղատոս և ո՛չ այլ 'ի մարդկանէ ոք և 'ի դիւաց իշխէին ինչ առնել, թէ ո՛չ 'ի վերուստ տուեալ էր նոցա. զայս ինքնին ՅԻ յատենի զեկուցանէր։

Ահա եղո՛ւկ զիս, զի ես մեղանչելով մատնեցի զՅԻ, իսկ արդարութեն առ 'ի սրբել զիմ մեղս մատնեաց զնա։ Աքանչացի՛ր ընդ հանդէս արդարութեն ՅԻ, և ողբա՛ դառնապէս զքոյդ յանցաւորութիւն։

ԱՂՕԹՔ

ԱՀԱՒԱՍԻԿ եմ, տէր. ահա ընդ Յուդայի՝ փոխանորդ եղեալ իմում մատնութեանս՝ զնորայն առեալ զկղջ, այլ ո՛չ ըզյուսահատութի, դիմեմ անկանիմ յաթոռ արդար իրաւանց քոց, ո՛վ տէր Երկայնամիտ. և

խոստովան լինիմ, զի մեղայ և մատնեցի զարիւն արդար. մեղայ յերկինս և առաջի քո. մեղայ յօծեալդ քո՝ զոր քաւիչ ինձ սահմանեցեր։ Մինթէ լսիցեմ զոր Հրէայք ասացին՝ Մեզ չէ փոյթ, դու գիտես։

Ո՛չ այդպէս, տէր արդարադատ, փոյթ լիցի քեզ վասն օծելոյ քո, որ բովանդակապէս հատոյց քեզ զամենայն զմեր պարտս։ Ա յսուհետև յիս հաստատեսցի ձեռն քո 'ի հարկանել և 'ի պատուհասել ըստ արժանի մեղաց իմոց։ Ասա մատնեցայց 'ի ձեռս արդարութեան քո, զի ողորմութի քո ինձ գրաւ պահեսցի 'ի հանդերձեալն։

ՑԱՒԱԳ

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ի ՎԵՐԱՑ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՎԵՐՆԱՏԱՆՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԶԱՄԱՌՕՏԵՑԱՒ պատքայն հրէական, և կատարիչ օրինացն Յա գայ ցանկանալով ուստէր զյեսին զատիկն օրինական, զի սկիզբն առնիցէ նորոյ զատկի իւրոյին զենմամբ։ Ո՛չ ևս ընդ աղքատին յարկաւ՝ որպէս էրն սովորեալ, այլ՝ի վերնատուն՝ի մեծ և յարդարուն մտանէ բազմի ընդ աշակերտան։ Բազմի իւրև տէր նոցա և վարդապետ, և հարցանէ իսկ. Ո՞վ է մեծ, բազմեալն՝ եթէ սպասաւորն. ապա-

քէն ասէք՝ բազմեալն։ Այլ էս թէ և բազմեալ՝ կամ 'ի ձերում միջի իբրև սպասաւոր։ Եւ անդ-րէն զբանն արդիւնացուցանէր։ Յառնէ յոտս կայ, զհանդերձն դնէ 'ի բաց. ղենջակ զմիջով սփածեալ՝ արկանէ ջուր 'ի կոնք. մի ըստ միոջէ զոտս աշակերտացն լուանայ, և ղենջակաւն սրբէ. և ո՛չ բազմեցաւ դարձեալ, մինչև բովանդակապէս զծառայականն սպասահարկութիւն տարաւ 'ի գլուխ։

Զարմանամք մեք, և զիարդ ո՛չ, ընդ այս անհամեմատ խոնարհութեն տեառն Յի՛. զարմացաւ և Պետրոս, և հրաժարեաց երկիւղիւ. բայց որպէս նա՝ և մեք լսեմք 'ի տեառնէ. Զոր ինչ էաս գործեմ դուք այժըմ ո՛չ գիտէք։ Եւ եթէ արդեօք, կամ թէ իցէ՞ հնար, ո՛վ տէր, անհասանելի քո խոնարհութեն լինել մեզ գիտօղ, ընդ որ և հրեշտակականն նրբատե-

սութի պակուցեալ 'ի հիացման կայ։ Իցէ՞ թէ միաբանիցի ծայրագոյն մեծութի ընդ ծայրագոյն նուաստութեան։ Տիրականիդ ծառայանալն կամ զտէրութիւն բառնայ, կամ զծառայութիւն վերամբառնայ։

Եւ այս ահա ճշմարտեալ է. զի այնպէս սքանչելի ես 'ի խոնարհութեդ, որպէս 'ի բարձրութեդ. երկրպագելի բազմեալդ 'ի քերոբէս. երկրպագելի և անկեալդ յոտս աշակերտաց. զենջակդ ծառայական մեծագնի ևս է քան զպատմուճան արքայական։ Վերնատունն յոր բազմեցար, ո՛չ կարէր ունել բընաւ զարդս այսմ զուգական։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Այլ պատկառելին սերովբէից ո՛չ շատ համարեալ զայսքան զիւր խոնարհիլ, յառաւելագոյնն 'ի վար արկանէ զա-

բարչագործ զօրութիւնն և զսէրն ամենահնար։ Սիրեաց 'ի սպառ զիւրան՝ որ յաշխարհի ատտ, ա-սէ վայելող սիրոյն Յովհաննէս։ Եւ ի՞նչ ապաքէն սիրեաց։ Ա-ռարչական բանիւ. որոյ ասելոյն եղեալքն ամենայն էացան, նո-վինն ասէ հացի, մարմին իւր լի-նել, և եղև. եռ զայն 'ի Ճաշա-կումն, և կերան աշակերտք։ Զբաժակն նոյնպէս արիւն իւր ասաց և եղև. արբին զայն և ար-բեցան աշակերտք։ Ասատնօր ոչ լոկ արարածք լինին բանիւ, այլ ինքն արարիչն եղեալ արարած նոր, ոչ ևս առ ոտս աշակեր-տացն ցածուցեալ, այլ 'ի սիրտ նոցա կերակրողապէս ծածկեալ, և լեալ իբր ՅԾ անծանօթ։

Ո՞վ սիրոյն. արդարև'ի սպառ արարչագործեաց, 'ի սպառ սի-րեաց։ Ի լուանալ ոտիցն զտի-րականն կերպարան ծառայա-կանաւն թագուցեալ, արդ կե-րակրոյ տեսակաւ և զծառայա-

կանն պատրուակէ։ Ո՛վ ամէն-
արուեստ սիրոյն։ Խոնարհի
անչքանայ յանչափս, բայց զի
մի՛ այնու վասն պատուեսցի,
անյայտէ և զխոնարհութիւնն
վարագուրաւ սիրոյ։

Արդարեւ զոր նայն գործեաց
ո՞վ գիտիցէ. ո՞ հասանիցէ 'ի խոր
անդունդս խոնարհութեանն նորա.
ո՞ զբարձրութիւն սիրոյ նորա չա-
փել կարիցէ։ Զայն ևեթ իմա-
նամք, թէ տաճարացաւ այսօր
վերնատունն խորհրդոյ, գերա-
զանցեալ սրբութիւն քան զտա-
ճարն ողոմոնեան. քանզի սուրբ-
ինչն ինքնին եղև անդանօր զա-
տիկ նոր, իւրով բանիւ և ձե-
ռամբ պատարագեալ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ո՛Վ հաւատացեալ դու, փու-
թա՛ մուտ 'ի վերնատուն անդր
խորհրդական՝ տեսանել տեսիլ
զմեծ և զխոնարհ, զտեսիլ ան-

բաւ զօրութիւն և զանձաւ սիրոյ։ Հայեաց զի կերպարան ածպե-տութիւնն կայ ծառայապէս առ ոտս աշակերտացն. և եթէ անտանօր և դու գտեալ էիր ոչ զանց առնէր և զքեզ, որպէս 'ի Յուդայէ չխորշեցաւ։ Խնդրեա՛ քեզ ապա տեղի, թէ գտանել կարիցես՝ ուր խոնարհեսցիս առաւել քան զնա։ Եւ մատոյց զանձն 'ի պատարագ, և 'ի կերակուր ոգւոց պարարիչ՝ ո՛չ խնայեալ և յանարժանէն։

Եթէ առ քո ոտս ոչ անկաւ 'ի լուանալ, այլ յանձն առ գալ մոտանել 'ի սիրտ քո՝ մեծ ևս խոնարհութիւն. ունիցիս ինչ արդեօք արժանաւոր սիրոյ նորա դնել առաջի։ Աւա՜ղ, քանիցս անդամ անմաքրութիւդ եդեր նմա արհամարհանս, ապառու�գտեալ առ սէր նորա և առ խոնարհութիւն։ Զի՞նչ այլ առնել էր նմա առ 'ի շահելոյ զսիրտ մեր։ Յետ այսպէս 'ի սպառ

սիրելոյ նորա՝ եթէ այլ ևս ա-
պախտաւորք լինիցիմք, զսէր
նորա առեալ ձգեմք յատելու-
թիւն 'ի սպառ։

ԱՂՕԹՔ

Ահաւասիկ հասեալք յեր-
կրպագութիւն փառաց Թագա-
ւորիդ՝ կամք և աղաղակեմք
խնդրելով ոչ եւ տէր մեր, ոչ
'ի պայծառազարդ վերնատանս
կանգնեալ կայցէ աթոռ բարձ-
րութիւն ըստ քումդ մեծութիւն։
Ահա ոչ 'ի գահոյս տէր, ոչ 'ի
վայելչականն քեզ բազմոցի,
այլ տեսանեմք առ ոտս խոնարհ-
եալ քոց ծառայից և աշակերտաց։
այլ 'ի սիրտս նոցա Թագ-
ուցեալ անփառունակ ծածկութեամբ։

Ո՞վ անձառելիդ քաղցրութիւն, անչափականդ 'ի բարձրութիւն և 'ի խոնարհութիւն. եթէ դու ցայդ վայր նուաստացար և

նուաստանաս միշտ, մեք յո՞ խոնարհիցիմք 'ի քնէ նուաստքս։ Ծառայացար յօրինակ մեր, զի մեք ամաչեսցուք յամբարտաւանութենէ մերում. եղեր հաց կենաց, զի ճաշակեալ՝ ընդ քեզ միասցուք։ Պարգևեա՛ մեզ, բարերար, ընդ կենարար ճաշակմանդ և զփրկականդ քո խոնարհութիւն. և զտարածեալ քս առատս մարդասիրութենէ քո ժամանեցո՛ 'ի վայելումն սիրոյդ յանապառ յաւիտեանս։

ՅԱՒԱԳ

ՈՒՐԲԱԹՈՒ

Ի ԽԱՁԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ո՛Գ ՈՂԳՈԹԱՑ. ո՛ լեառն այ-արդարեւ այ ոչ մեծվայելչութիւն փառաւորեցելոյ, այլ անարգեցելոյ յետին խայտառականօք։ Ահա 'ի քեզ կայ Որդին այ բարձրացեալ, և ոչ առ նովաւ քերովբէք. այլ յաջմէ աւազակք և յահեկէ։ Աթոռ նորա խաչ մահու. պսակ 'ի գլուխ փշանիւթ. պատմուճան՝ մերկութիւն. յաղթանակաց երգք՝ հայհոյանք. ջահից պայծառութիւք՝ լուսաւորքն խաւարեալք։ Ո՛ լեառն մածեալ, լեառն պարարտ՝ ոչ յերկնատեղաց ցողոյ

արքեալ, այլ յանպատրաստ արենէ Որդւոյն Ա՛յ։

Անցեալ տեսից զտեսիլս զայս զմեծ և սարսափելի. զի՞ է՝ զի Որդին Ա՛յ մարմին զգեցեալ անախտ 'ի մեղայ, 'ի խաչի կայ տարածեալ, ողջակէզ կենդանախարոյկ։ Ընդ որ յանցանաց, ո՞ւմ մեղաւ նա, ո՞ւմ ընդդէմ դարձաւ. մի՞թէ աւազակեաց, մի՞թէ ամբոխս յարոյց։ Իսկ է՞թէ բարիս արար ամենեցուն, և կաղաց և կուրաց և հիւանդաց և մեռելոց գթասիրեաց, այսո՞ւ յանցաւոր գտաւ նա։ Հայիմ 'ի գիր վնասու նորա՝ գիտել զոր ինչ մեղաւն. և անդ վկայի թէ թագաւոր է, և ոչ պարտաւոր։ Եթէ խաչակցելոյ աւազակին հարցանեմ, տայ պատասխանի. Սա ապիրատ ինչ ոչ գործեաց. և զի՞արդ պատժակից մեզ գտանի՝ չգիտեմ, որք արժանի ըստ որոց գործեցաքն տանջիմք։

Դու արդ ասա՛, խաչեալ, դու

ասա՛, զի՞նչ գործ գործեալ է քո։ Եւ լսեմ զի կողկողագին աղօթէ. Աճ՛ իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Ապա ուրեմն ՝ի ինքնին լքեալ թողու զնա ՝ի կամս մարդկան յանարգանս, ՝ի ցաւս, ՝ի մահ, իբրև անիծապարտ ոք գրեալ, քան թէ Որդի։ Ո՞վ արդարութի՛ն անհաս մտաց և ահագին ՝ի ճառս բանի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Այլ մնա՛ և ես ակն կառուցեալ ՝ի տեսիլս ահաւոր՝ տեսանեմ ահա ՝ի թիկունս նորա բարձեալ զմեղս ամ աշխարհի, և ՝ի վերայ ճակատուն գրեալ. Պատարագ վասն մեղաց։ Բա՜ի՜, առ մեղս իմ ուրեմն սնդեալ կայ ՝ի խաչի. վասն իմ հարաւ. վա՜ իմ ՝ի փուշ պսակեցաւ. վասն իմ թուքն, ծարուն և լեղին. զայս ամենայն վասն իմ կրէ նա։ Ապա զիման յանձն առեալ ըզ-

պարտիս՝ հատուցանէ արդա-
րութիւն՝ այ 'ի վերս քան զկշիռն.
բայց իւրումն սիրոյ և ոչ զբա-
ւականն :

Ո՜ սէր անկշռելի և անյագա-
կան . իմում փրկութիւնն ծարա-
ւեալ՝ ընդ իմ մեռանի , զի ես
կեցից . յանէծս համարի՝ զի
օրհնեցայց ես.'ի հօրէն թողեալ
լինի՝ զի յորդեգրութիւն ես ըն-
տանեցայց : Որպիսի՞ այս տեսա-
րան սիրոյ . որպիսի՞ բարէխնա-
մութիւն : Եթէ ունէր նա բա-
զում այլ ևս մարմին և հոգի և
կեանս , միթէ խնայէր տալ զա-
մենայն առ իմ փրկանս :

Առաւել սքանչելի ցուցաւ
նա 'ի սիրել զմարդիկ , քան 'ի
ստեղծանել զաշխարհ , հզօր ա-
ռաւել 'ի փրկել՝ քան 'ի դա-
տապարտել. որով և առաւել
յաղթող 'ի խաչին , քան յա-
թող երկնից :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Իսկ արդ զի՞ այլ ևս կամ հիացեալ։ Եթէ արս չարագործս խնդրեն հանել՝ի խաչ ընդ Որդւոյն քոյ, տհաւասիկ ես. ես մեղայ, ես անօրինեցայ, ես ինքն եմ աւազակն ոգէսպան. դա անպարտդ ընդէր տանջիցի, և ես ոչ։ Ահա ձեռք իմ և ոտք և անդամք ամենայն. ընդ փրկչին բեւեռեցայց. ընդ նմա ծարաւեցայց. դառնացայց լեղեաւ. ընդ նմա գոչեցից՝ ոչ զայն ընդէր Թողեր զիս, այլ Թէ մի անտես առներ, այլ ընկալ զիս խաչակից փրկչին իմոյ։

Ի կախելոց անտի չարագործացս մին ևեթ ապրեցաւ. այլ ես վստահ եմ, զի եթէ ընդ քո՞ի՝ի խաչ ելից, ընդ նմա և կեցից. առաւել քան զփառակցութեն՝ի թաքօր, ընտրեմ մահակից քո՞ի անկանիլ՝ի գողգոթա. զի

այս արդարութիւն է, և այն շնորհ։

ԱՂՕԹՔ

ԱՅՈ այո, ո՛վ անպարտական փրկիչ իմ խաչելեալ, կամ ահաւասիկ առ պատուանդանի խաչիդ՝ լցեալ ամօթով և արտասուօք և դողութեամբ։ Դողամ սարսափմամբ ընդ բովանդակ երկրի սասանեցելոյ, զի բոլորից տէրդ կաս նշաւակեալ՝ի տեսիլ աշխարհի։ Ամօթասպարտ մածնում ընդ գետին, զի յիմմէ յանցաւորութէ զփայտ մահու քեզ պատրաստեցի։ և հառաչեմ արտասուալի՝ թէ զնա՞ր ո՛չ զարիւն իմ խառնեցի ընդ արեան փրկչիդ իմոյ։

Ո՞վ որ բարձրացար յերկրէ առ՝ի զամենեսին ձգելոյ առ քեզ, ձգեա՛ և զիս՝ի քոյդ խաչակցութեն։ զօրացո՛ զիս՝ի համբերութեն՝ վշտանալ ընդ քեզ և

վան քո . զի թէ և արժանի ըստ
որոց մեղայն տանջիցիմ , այլ
քոյով աննիւաղ ողորմութեամբ
ակն ունիմ լսել՝ այսօր ընդ իս
լցես 'ի դրախտին ։

ՑԱՒՈՒՐ

ԱՒԱԳ ՀԱՐԱԹՈՒ

Ի ԹԱՂՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Պ՞ԱՀԱՆԱՑՆ մեծ և միջոցն ջենաւոր՝ կատարիչն փրկութեան աշխարհի Յ՚ա եկաց՚ի սեղան խաչին, մինչև սպառեցաւ պատարագն։ Ինքն քահանայ և պատարագ՝ մատոյց զանձն. կապեցաւ, զենաւ, կախեցաւ մեռեալ։ Եւ զի՞նչդ այդպէս վաղ մեռաւ, զարմանայ Պիղատոս։

Զի՞նդ այն զարմանաս, այր դու, ուր կամաւոր է մեռանելն. այլ զարմացի՛ր, զի այնպիսում մահապարտելոյ ողոքաւոր խնդրակ յանդիման լինի

քեզ Յովսէփ, այր նախարարա-
ղուն։ Խնդրեաց զմարմինն տէ-
րունական. առընկալաւ փա-
փաքմամբ. բայց մի՛թէ իբրև
մարմին մեռելոյ, թէ իբր գա-
զանաբեկի՝ համակ տրտրեալ և
արիւնաներկ։

Պատուասիրել փութայր
զծածցեալ մարմինն այրն մեծա-
հաւատ՝ պատանօք սուրբ կտա-
ւոց և խնկոց. այլ յորդագոյն
ևս աղբերօք աչացն զնա թա-
նայր. զի անդր առընթեր կային
բազում արտասուակցորդք՝ քան
խնկաբերք։ Անդ կանայքն պաշ-
տօնասէրք. անդ և մայր նորա
ցաւագին, կենդանի պահեալ
աւ 'ի տանելոյ զսադնապ մա-
հու։ Ո՜վ որքան արտասուք, որ
կսկիծ սրտի, որ հառաչումն և
կոծումն, առաւել 'ի սիրտս իւ-
րեանց ամփոփելով զմիայն սի-
րելին քան յանկենդան տա-
պանի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ եղաւ տէրն բոլորից 'ի նոր գերեզմանի. նոր արդարև՝ ոչ այնչափ զի այլ ոք չէր յառաջագոյն եղեալ 'ի նմ, քան թէ զի մեռեալ այսպիսի ոչ ուրեք երբէք լեալ է։ Այն՝ որ ութ աւուրբ յառաջ զՂազարոս կոչմամբ ևեթ կորզեաց 'ի զգուշացեալ գերեզմանէն, և այժմ ինքն 'ի գերեզմանի փակեալ կայ։

Ո՛վ գերեզման կենդանակիր, այլ մեզ տուն մթին սգոյ. զի՞ արդ ազատն 'ի մեռեալս ընդ գերեզմանականն անկեալ դնի, անայցելու 'ի սիրելեաց, և 'ի թշնամեաց պահարկեալ. զինուորք առ խաչին. զինուորք առ գերեզմանին. անդ զկենդանին թշնամանեն, ասա զմեռեալն անգոանեն. և որպէս թէ վիմարդեալ բանտաւոր ոք իցէ, զվէմն

աղխեն կնքով, իսկ զքեմ դա-
տաւորին կնքեն հայհոյանօք՝
թէ մոլորեցուցիչ էր մեռեալն.
թէ և ինքն հատաւ 'ի կենաց,
այլ մոլորութեն նորա կարէ ա-
ռաւել ևս զօրանալ։

Այսպէս անպարտն յամե-
նայնի Յա համարեցաւ ընդ այնո-
սիկ՝ զորս ոչ յիշէ տէր, և 'ի ձե-
ռանէ նորա մերժեցան, լքան
իբրև անարժանք և կենաց և յի-
շատակի։ Թէպէտ և թաղեալ
ծածկեցաւ յաչաց, այլ ո՛չ 'ի
լեզուաց նենգաւորաց։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԻՍԿ արդ ո՞վ տառապեալ
դու անձն իմ, ո՞ւր է փրկիչ քո՝
զոր 'ի խաչին լայիր, և խաչակից
նմին լինել ըղձանայիր։ Եթէ
երջանիկն Յովսէփ առընկալաւ
զնա, փութացիր 'ի պատելընդ
նմա, ողջագուրել, և լուանալ
արտասուօք։ Այլ աւա՜ղ զի արդ

թաղեալ իսկ է նա. վիմով ծածկեցաւ, պահապանօք կնքեցաւ։

Բայց զի՞նչ. միթէ զոդի արգելուցո՞ւն վէմք և կնիք. յառեա՛ց մտացդ աչօք ընդ ծերպս վիմին, ճնշեա՛ց և ա՛նց 'ի նեղքս. և պատեցեալոյ տեառն քո եղիցիս գերեզմանակից։ Լէր ընդ նմա մուռացեալ յաշխարհէ, անարգեալ և կոխեալ 'ի մարդկանէ. անտես և անլուր կենցաղականաց ամենայնի. անխօսուն լեր որպէս մեռեալ ոք. տա՛ր անմռունչ իբր թաղեալ. անարդեցի՛ր իբր հոտեալ. մինչև զարթիցէ տէր քո 'ի նորոգել զքեզ յանմահական կենդանութիւն։

ԱՂՕԹՔ

Ընդ քեզ այսուհետև, ո՛վ մայր ցաւագին, ընդ քեզ և առ քեզ խօսեցայց՝ մենացեալդ 'ի զաւակէ. որ 'ի խաչին վերսին

ծնար զմիածինդ քո որդի ցա-
ւոց և վշտաց, և անմխիթար
սգով թաղեցեր զնա, և զսիրտ
քո ընդ նմա։ Ընդ քեզ ահա և
ես կամ 'ի դերեզմանի որդւոյդ.
քոց արտասուացդ կցորդիմ,
ոչ անպարտ իբրև զքեզ, այլ
մահու պարտ երկոցունցդ։

Վա՜յ ինձ ամաչեցելոյս 'ի յի-
շատակ անօրէնութեանց իմոց.
մանաւորեա՛ ինձ, աղաչեմ, 'ի
քոց դառնակսկիծ ցաւոցդ.
խառնեա՛ զիմ զպղտորեալ ար-
տասուս ընդ քոյոցդ մաքրակա-
նաց, զի եղիցի լուացարան թա-
րախուտ վիրաց հոգւոյս. և յան-
ախտութի՛ն քո սիրոյդ արբեալ
յօդեցայց անբաժանելի. և ե-
թէ ոչ եղէ քեզ որդի սիրա-
նուն, եղէց գոնէ որդի զղջա-
կան։

Ի ԶԱՏԿԻ

ՑԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅԱՐԵԱՒ ՔՒ • գերեզմանին արտաքոյ կայ • 'ի զուր ապա կա֊փարիչն կնքեալ : Յարեաւ, և կենդանի շրջի • պահապանքն զի՞նչ գործեն : Յարեաւ փա֊ռօք հրաշալի, և ո՞ւր արդ ան֊արդուեթն խաչին : Հապա խրա֊խոյս առէք սգաւորքդ • ծափս հարէք՝ որք զմեռեալն կոծե֊ցայք • ոչ ևս առ գերեզմանի խաչեցեալսն զինուորքս հրնկէցք• նոքա յերկիւղ մահու և ո՛չ 'ի քուն կան :

Այլ ահա հրեշտակք աւե֊տաձայնք անտանօր փոխ հար֊

կանէն. զի լայք, հիմ զկէն-
դանին և զկենդանացուցիչն ընդ
մեռեալս խնդրէք։ Արի և դու,
զարթիր, հողացեալդ Ադամ,
քոյինազարմ հանդերձ մահա-
ցու սերնդովք. լացեր դու զա-
ռաջին անպարտ սպանեալն
զԱբէլ, արդ ցնծա՛ ընդունել
փոխանակ զառաջին խշխանա-
բար յարուցեալն Յն, որ զառ
'ի քէն առթեալն մահ ամենա-
գրաւ 'ի դոչիւն արեան իւրոյ
յանմահութիւն յեղաշրջեաց։

Ո՞ւր է մահ յաղթութիւն քո.
ուր են արդ արբանեակք նախ-
կին մարդասպանին՝ քահանայք
և խշխանք, որք պահապանօք
զգերեզմանն կնքեցին, և այժմ
զնոցին զպահապանացն բերան
աղխել հնարին դռնափակօք ար-
ծաթեօք, ոչ ևս ճշդելով'ի կը-
շիռ, որպէս առ մատնիչն, այլ
լիաձեռն, զի մի քարոզք յա-
րուցելոյն, քան թէ պահանորդք
մեռելոյն երևեսցին։ Բայց խո-

տան գտաւ և կնիքն և արծաթն. գերեզմանն բացեալ, պահապանքն սասանեալք, միսբարբառ ընդ երկնային աւետաւորացն 'ի գլուխս ճանապարհաց քարոզեն, թէ կամաւ մեռեալն՝ ահա ինքնիշխանաբար կենդանի է. ցնծացէք հաւատացեալք, յամօթ լերուք անհաւանք:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈՒԹԱՍՑՈՒՔ աղէ և մեք 'ի ձայն աւետաւոր զուարթնոցն. ընդ Պետրոսի ընթացուք, ընդ Յովհաննու կանխեսցուք 'ի գերեզմանն տէրունական. ոչ ևս է մեզ խբրև զառաջին լսողս անակնկալ յարութեանն՝ խառն ցնծալ, խառն երկնչել, և երկբայաբար զարմանալ: Արդ հաստատեալ է ամենայն. արդարեւ յարեաւ տէր, և երևեցաւ ոչ Սիմոնի միայն, կամ Կղէովայ

պեանց, կամ երկոտասանից, այլ և Պօղոսի, որ նախ դառն հալածիչն էր, և այսօր զյարու�թիւն աւետարանէ զՔրիստի, և մեզ ևս խոստանայ երևեցուցանել։

Ո՛վ երանութիւն, եթէ արժանի լինիցիմք ընդ մագդաղենեանցն բուռն հարկանել զոտիցն կենդանատուաց։ Այլ եթէ ողբոց նոցա և լալոյն կցուրդեցաք, եթէ 'ի թաղումն պատրաստեցաք խունկս հոգևորականս, եթէ 'ի խնդիր մեռելոյն վասն մեր արհամարհեցաք զաշխարհի զքօսանս, անշուշտ և փառաց յարուցելոյն տեսող լինիցիմք աներկիւղ խնդութիւն։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՋԱՐԹԵԱՒ Քո առաւօտուց յաւէրժական կենդանութիւն. բայց առ աշակերտան ընդ երեկոյս ծագեաց լոյս զուարթարար։ Եկաց մնաց ժողովելոյ նո-

ցա 'ի վերնատունն ամրափա-
կեալ. հաճեցաւ ինքնին՝ և ոչ
'ի ձեռն հրեշտակի ցուցանել
նոցա զյարութիւն իւր, և զհա-
ւատս յարութեանն՝ զանկից
վերան, զյաւէտախաղաց աղբե-
րակն իւրոյ անճառ սիրոյն։

Ո՜վ ոլքան ինդութիւն զեղումն
յորդեաց յայնժամ 'ի սիրտ ա-
շակերտացն. որ հրճուումն ընդ
նորահրաշ տեսիլ վարդապե-
տին. որ զրոյցք կաթողինք և
պատկառանաց. որ այնուհետև
երկիւղ սրտի, և տատանումն
մտաց, և ոգւոյ տխրութիւն։ Ո՜չ
ևս գիշերոյ թուէր ժամն, այլ
մէջօրեայ յարատևակ՝ զքա ու-
նելով զանմուտ արեգակն։ Այն
ոք միայն ընդ նսեմ թերահա-
ւատութեանն գայթակղէր, որ
արտաքոյ գտանէր վերնատանն,
իբր Թովմաս յառաջնումն երև-
ման։

Մի՛ զատանիր, ո՛վ դու, 'ի
խմբէ աշակերտացն, զի լինիցես

և դու աներկմիտ տեսող յաղ-
թութեանն, 'ի մի բերան աղաղակել ընդ Թովմայի, տէր իմ և Ա-
ծ իմ։

ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենայանկալի փրկիչ իմ և տէր Յի՛սուս Քրիստո՛ս, որ առ սէր իմոյ անարժանութեանս մեռանել յանձն առեր, և յարեար վասն զիս արդարացուցանելոյ. ահաւասիկ 'ի խնդիր իմոյ սիրոյդ եկեալ աղաղակեմ՝ ո՞ւր հովուեաս, տէր. ո՞ւր հանգչիս։ Ես զքեզ 'ի խաչին լայի, առ գերեզմանին ողբայի, իսկ այժմ ո՛չ սատ և ո՛չ անդ գտանեմ։ Մի՛, ո՛վ փառաւորեալ տէր, մի՛ ծածկեր յանարժան քոյ ծառայէս, մի՛ այլով կերպարանաւ անծանօթանար յինէն, որպէս առ Կղէոպասեանսն. ցո՛յց ինձ զդէմս քո 'ի մտացս հայեցողութեան. լսեցո՛ ինձ ըզբարբառ քո՝ զքաղցրն 'ի քիմն

կամաց իմոց. տուր ողջոյն խաղաղութեամբ յամբոխեալ հոգիս. և քոյով ուրախութիւնդ զուարթացո՛ զսիրտ իմ տառապեալ. որպէս զի աներկբայ հաւատով զերկրպագելի ոտիցդ կախեալ անմեկնելի, 'ի յոյս երանելի յարութեանն պնդեցայց, կերպարանակից լինել մարմնոյ փառաց քոց։



Ի ՏՕՆԻ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՍԵՓԱՅ

ԱՍՏՈՒԱԾԱՀՕՐՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԼՈՒՍԻՍ աւանդէն մեզ յիշատակարանք ճծային գրոց արս հուչակելիս՝ անուանեալս Յովսէփ. երկոքին ևս իշխանազունք, երկոքին ևս նահապետք, երկոքին ևս արդարք. այլ զանազանութեամբ 'ի նոսա ոգեաց և որպիսի: Նախկինն Յովսէփ ոչ յազգէ սերեցաւ իշխան, այլ անձամբ իշխանացաւ Փարաւոնի հրամանաւ ՅԵգիպտոս միայն, առժամանակեայ մատակարարութեամբ: Բայց երկրորդս ազգաւ

ծնեալ'ի թագակալ զարմէ, ընդ համօրէն արքայութիւն Իսրայէլի ժառանգութեաբ արժանի տիրական լրաւանց։

Այլ 'ի վերայ այսր զմիւսն տես զևս նորանշան զանազանութիւն. որչափ նա 'ի փառս, և սա որչափ 'ի նուաստութեաբ. նա 'ի գահոյս, սա 'ի գործատան հիւսան. նա կարօտելոց կերակրիչ, սա ինքնին կարօտեալ. նա յԵգիպտոս հրամանատար, սա յԵգիպտոս փախստեայ։

Եւ սակայն եթէ առ սովաւ կենդանի կայր Յովսէփն առաջին, թողոյր լքանէր արդարեւ զգահոյսն, և աղքատի այսմ հիւսան լինէր կենակից և պատուադիր։ Աշխուժականութիւն այնչափ առաւել մեծարոյ է, որչափ ընդ քօղով խոնարհութեան պատապարեալ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՀԱՊԵՏ ըստ մարմնոյ բարգաւաճեցաւ Յովսէփն առաջին, բայց երկուց միայն ազգաց։ Եթէ յայսմ պատճառէ աճեցեալն անուն 'ի գէպ նմին պատշաճեցաւ, որչափ նուազեալ թուիցի նա առ երկրորդս Յովսէփ, որ համօրէն ազգաց և լեզուաց 'ի Քրիստոսէ ծնեալոց՝ խոստովանեալ է նահապետ հոգևոր։

Ոչք միանգամ յեղբարս գրեցան Քրիստի, իրաւամբք ամենեցուն նոցա սա ճանաչի հայրապետն գորով հայրական և զինքն նամն տանելով առ ամենեսին, զոր առ Քրիստ ունէր։ Ո՛չ տեղեաւ սահմանին գուրթք նորա, ո՛չ ժամանակաւ, ո՛չ տնտեսութիւն։ ամենեցուն խնամարկէ՝ որ 'ի հրէաստան, և որ յասորեստան։ Եթէ առ կենդանութիւն բարեգորով, առաւել ևս այժմ

յերկինս. ըստ ամենայն պիտոյից մարմնոյ, և յաւէտ ևս հոգւոյ՝ տեսուչ աննուազ։

Փարաւոնի գանձուցն ամբարակ լինէր Յովսէփն առաջին յընչից Ժողովրդեան. այլ բաբէ, երկրորդս Յովսէփ բուն իսկ ՅԾային գանձուցն եկաց բաշխիչ և մատակարար առ համօրէն Ժողովուրդս. ոչ ինչ այլ առ 'ի նոցանէ պահանջեալ, բայց զորդիական ապաւինութիւն և զհամանմանութիւն։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՊԱՌԷՆ բազում օրինակաւ արտայայտեն ՅԾային գիրք զարդարագործութիւնս Յովսէփայ նահապետին 'ի մանկութէ մինչև յամն վերջին. զնորա զանազանեալ բարեմտութիւնսն, զհնազանդութիւն, զոչխարհ կենցաղն, զառ ՅԾ հաւատսն 'ի մէջ անհաւատից, զհաւատար-

մութն առ տեարս գԺնդակս, զանյիշաչարութիւն առ վնասապարտ եղբարս։ Մեծամեծք են արդարեւ վկայեալքն զնմանէ գովութիւնք առ յայ. բայց չգիտեմ հաւասարիցի՞ն արդեօք միակ այսմ բանի՝ որ զերկրորդս Յովսէփայ վկայեալ, թէ արդար էր։

Արձակաբար կոչումն արդարոյ առանց սահմանի՝ զլսութիւն ամենայն արդարութեան յայտ առնէ։ Սա ո՛չ ողջախոհ միայն, այլ և կոյս յամուսնութեան. հնազանդ ո՛չ հայրականաց միայն օրինաց, այլ և անօրէն բարեաւորութեաց։ Հաւատք ո՞՛ր քան հզօր՝ Որդի՜ այ հաւատալ զմանուկ'ի խանձարուրս առ'ի մահ խնդրեալ 'ի մարդկանէ։ Որպի՞սի՞ անդորրամտու՛ն անյիշաչար, տեսանել զինքեան խօսեցեալն յղի՝ և ո՛չ յիւրմէ. որ անողոքելն նախանձու է դրդռիչ. իսկ սա անցասումն՝ պատուոյ

հարսինն խորհի լինել թեարկու։

Յիրաւի ապա սա արդար լի բովանդակ, արժանաւոր փեսայ կուսին՝ ծնողի զարդարութեի ամենեցուն զքեզ։ Եւ մի՛թէ տկարանայցէ՞ ինչ նա, կամ ո՞չ խնամեսցէ առնել և զմեզ արդար, ընտանի իւր ունելով ըզբուն պատճառս արդարութեէ, և հայր գոլով բարեխնամող հաւատացելոց։ Լէր դու նմա որդի բարեյոյս և պաշտօնասէր, յանձն արա 'ի խնամս նր զհոգի և զմարմին, կեաց անարատութեբ, և 'ի մահու գտանիցես զպաշտպանութիւն նորա։

ԱՂՕԹՔ

ՀԱՑԵԱՑ 'ի կարօտեալքս հայրական քոց խնամոց, ո՛վ ՅԾԱՀԱՅՐԳՅՈՎՍԷՓ, խնամածու կարգեալ Որդւոյն քոյ, բայց առաւել ևս տառապելոցս մեզ։ Եթէ նա մինչ յարբունս հա-

սակին և եթ պէտս ունէր քում խնամակալութեան, մեք յամենայն ժամանակս կենաց, և 'ի մահու իսկ կարօտ եմք պաշտպանութեան քո յերուսաղեմս և յաներուսոյթս։

Գթա՛ 'ի մեզ հայրաբար 'ի քո որդիացեալքս։ Լե՛ր միջնորդ հզօր առ որդիդ Յի՛, որ յերկրի հնազանդ քեզ եղեալ, նա և յերկինս ոչ ամաչեսցէ հայցուածոց քոց։ Ի փորձութիւնս մեր ընկա՛լ արթնութեամբ, 'ի վերուստ համբերութեամբ։ Արիացո՛ վաստակիլ 'ի սէր եղբարց, 'ի գայթակղութեանց մի՛ սասանեալ։ յառաջեալ կամակարութեամբ յամենայն մասունս առաքինութեան։ Որպէս զի և 'ի վախճան կենաց մերոց ընտիր գտեալք, պատուեալ կարիցեմք զքեզ յերկինս իբրև որդիք զուարճացեալք 'ի փառան՝ յոր վայելեսցեմք ընդ որդւոյ քում Յի՛ի, և ընդ օգոստափառ հարսին քո կուսին Մարիամու։

Ի ՏՕՆԻ

ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ

ՆԱԽԱՎԿԱՑԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԼՐԿՆԱՒՈՐ ընտրութեամբ յառաջադէմն Ստեփանոս՝ ընտրի և յեկեղեցւոյ տեսուչ կըրկնակի սեղանաւորութեան առ ժողովուրդս։ Դիմէ զուարթուն նահատակն յասպարէզ քարոզութիւն բանին, և ահա քարինք առ նա ձգին հակառակութեց և վիճմանց։ Բարեգործէ առ ժողովուրդն նշանիւք զարմանալեօք, և ահա քարինք առ նա զսպարտանաց և ամբաստանութեց։ Յատենի կացեալ, թէպէտ 'ի դէմն հրեշտականայ,

թէպէտ զառ 'ի հարցն աւանդս համառօտէ առ Իսրայելեանս, այլ փոխանակ՝ քարինք հայ-հոյանաց և ատամանց կրճռումն զատեանն աղմկեն։

Զհրաշալին յայտնէ նց զերևումն՝ զբանալ երկնից, և ըզքեզ ընդ աչմէն թագաւորել. այլ նոցա 'ի խցանել ականջաց՝ պատառին սիրտք, քարինս աղաղակաց արձակելով։ Զոդի ապրստարէ յաճ, և քարինք ոչ դադարեն։ Ծունր դնէ, քարաձգողացն աղօթէ, և քարինք և ևս թանձրանան։ Ի հարուածոց անտի խորտակեալ՝ ննջեաց, ապա քարինքն լռեցին։

Բաբէ, մինթէ այս կատարած եցէ քեզի աշակերտին. վե՜ ճըշմարտութեամբ թշնամանիլ, 'ի բարիս գործելն ամբաստանիլ, և հանգիստ ոչ գտանել յանողորմ քարանց, բայց 'ի փչել հոգւոյն։ Այո՝ արդարեւ այս է կերպարանակցութեան առ քեզ

կենաք չափ. և զնորուն իսկ կըշ-
տամբանս 'ի դէմս հրէից երկ-
ըորդելով, բաղում գործս բա-
ղիս ցուցեալ ձեզ, ասէ, վասն
որոյ գործոյ քարկոծ առ 'ի
ձէնջ լինիմ։ Եւ սոյն այս կեր-
պարանակցութիւն 'ի մահուն,
աղօթելով սակս չարչարողացն
մեռանել։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԻՍԿ արդ որ ինչ յաւէտ սիր-
ալի քեզ երևելանայ յայս նա-
խամարտիկ պսակաւոր Քրի-
խմաստութեանն զեղումն, թէ
վասն Ճշմարտութեանն դատիլ.
եթէ նշանս հրաշագործել, կամ
թէ ինքն լինել նշան հակառա-
կութեց. տեսիլն արդեօք հրեշ-
տակակերպ, թէ կատաղի քա-
ղանցն կիտուածք։

Ո՜, համայն գեղեցիկ նա՝ ի-
ւրով արեամբն ներկեալ, քան
հրեշտակականն անցաւոր երե-

ւուԹիւ. որ զի այս 'ի դէման մի-
այն, իսկ այն ընդ բոլոր անձնն
երկանիկ փայլեցուցանէր զզ-
րուԹիւն այ։ Եւ եԹէ ընդ եր-
կրորդն մարդիկ հրաշացան, այլ
ընդ առաջինն հրեշտակք յեր-
կնից 'ի զնին երադեցին։

Խիստ էին քարինքն, այլ համ-
բերուԹիւն ողորկեալ, և աղ-
Թիւք ընտիր քան զականս պա-
տուականս յերկինս դանձեցան,
պսակ 'ի հրաշակերտ գլուխս կա-
պելով նահատակին։ Սա նորոյն
Ադամայ Աբէլ գովանի՝ ննջեաց
ընդ կառկառիւ քարանցն. այլ
արիւն նորա մեծաբարբառ ևս
քան զնախնոյն Աբէլի բարե-
խօս կացեալ առ ած, 'ի քա-
ղաքացելոցն սպանողաց ստացաւ
որդիս եկեղեցւոյ, և աւետա-
բանին քարոզ զՍողոս հայհոյիչ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Եւ մի՛թէ լռեաց ինքն յիւրմէ հոգիախօս ճծաբանութենէ երջանիկն Ստեփանոս։ Ո՛չ լռեաց նա, և երբէք ո՛չ լռեսցէ. խօսի լեզուն նորա գրովք. խօսին քարինք նորա. խօսի արիւնն. տեղի թաղմանն խօսի. խօսին աշակերտեալք նորա և նմանողք. և քաջահնչիւն քան զբնաւս՝ խօսի գլուխ սպանողաց նորա Սողոս, զնորայն վկայաբանութիւն ինքնին արձանագրեալ կիցը ընդ Քրիստի քարոզութեն. և զառ՚ի նա ընկեցեալսն քարինս յանձն իւր ընդունի, ցանկացեալ մեռանել զմահն՝ զոր ետ նմա։ Այլ՚ի խնդրոյն վերիպեաց, եկեաց՚ի քարանցն. այնպէս ինն յաղաստութի՛ն նորա հոգատարեալ Ստեփանոսի, զի մի արդեօք զիւրոյ մահուանն թուի՛ցի նա զվրէժ լուծանել։

Արդ եթէ Ստեփանոս խօսի տակաւին այսչափ քարոզչօք, և եկեղեցի մեծասպայծառ տո՝ նախմբուութիւն յատենի զնա մեծարէ հաւատացելոց, զինչ 'ի նմանէ լսել կարծիցես, ո՛ տո՝ նասէր դու, կամ զինչ ուսանել: Զայս քեզ ասէ. փառօք մեծացուցանել զնա՝ յանուն իւր, զի հաճեցաւ բազմազեղ շնորհօքն զօրացուցանել զնա 'ի պաշտօն բանին, և իբր երախայրիս նորոյ եկեղեցւոյ հանել 'ի սեղան արքայութեան: Խրախոյս տայ քեզ իւրով օրինակաւ այնպէս պաշտել զնա՝, և սիրել զնա, և քարոզել, և վաստակել յանուն նորա, զի որք վե՛ այնր ձգիցին 'ի քեզ քարինք վշտաց և հալածմանց, աղաղակեսցեն թէ բացան քեզ դրունք երկնից՝ լինել պատակից Ստեփանոսի:

ԱՂՕԹՔ

ՅԱՆԿԱՄՔ և մեք, ով անդ-
րանիկդ 'ի վկայս, և 'ի քո բա-
րեխօսութիւդ ապաստանք՝ պա-
ղատիմք առնուլ և մեզ մասն 'ի
պարգևաց Հոգւոյն. որով զօ-
րացեալք յընթացս քրիստոսա-
կան նահատակութեն, կարիցեմք
գոնէ յետինս լինել 'ի խոստո-
վանողս Ճշմարտութեան։ Եթէ
քոց չարչարողացն թողութեան
մաղթեցեալ, ոչ առաւել ևս մեզ
ուխտաւորաց քոց հայցիցես նե-
րում պարտեաց, ուղղութիւն
'ի սխալմանց, պահպանութիւն
'ի փորձանաց, արիութի 'ի տա-
նել վասն այ։

Լէր մեզ, ազաչեմք, ուխտ
մանկանցս՝ առաջնորդ յորդո-
ւիչ, կանխել միշտ աչալրջութիւ
'ի պաշտամունս այ, և համար-
ձակութիւ աւետարանել զխոր-
հուրդս Քրի աւ յոյս փրկու-

թէ ժողովրդոց • զի պարգևեսցի
և մեզ ամենեցուն անարատ քա-
ղաքավարութիւն հաղորդիլ քոյ-
ում սպասկի • ուրանօր միա-
բան ընդ քեզ տեսանելով զընդ-
աջմէ հօր բազմեալն՝ փառա-
ւորեսցուք յաւիտեանս • ամէն ։

Ի ՏՕՆԻ

ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ինչ զԴրիգոր նկատիցես զպահլաւիկն Պարթեւ, ածեալ զմտաւ՝ զի՞նչ նա էր, և զի՞նչ եղև, և այժմ զի՞նչ է, տեսցես զնա արդարեւ գործած իմն հրաշակերտ ածեղէն նախահայեաց իմաստութեանն և կարողութեանն։ Զուսակ հեթանոսածին, միայնակ մնացուած հօր մատնչի, աշխարհակորոյս մահապարսի. ո՛չ զայլ ոք՝ բայց զնա միայն ուսաւ իւր հայրն Ճանաչել և

անուանել անդատին յանբան հասակէն։

Քանի ընծայեալ ազատագրոշմ պաշտօնեայ, այլ իբր միայն պարտական հայրենի աշխարհակործանն արիւնհեղութեան, ընդ պաշտամամբ մտանէ խորհրդավանին Թագակալին Տրդատայ։ Անծանօթ յարքայէն ո ոք ելցէ նա, ազնուականութեան լինի սիրելի, և հաւատարմութեան բարեկամ՝ քան թէ ծառայ։

Այլ սակայն ոչ սա, և ոչ նա գիտակք՝ թէ յի՞նչ ունելցի աւարառել միոյն մտերմութիւն, և միւսոյն ընդունելութի. բայց զի յամենահնար խորհրդոցն այ կարգեալ էր նա կործանիչ գիցապաշտական թագաւորութեն. որպէս հայր իւր Անակ՝ աշխարհակալ տէրութեն եղև գործի կործանման։

Ո՛վ խորք այ իմաստութեն, ո՜ յառաջահայեաց խնամողութիւն. որպէս 'ի բացուստ հինն

արկանէ իւրոցն խորհրդոց. զնա-
մրդ հակառակօքն վարի. ինքը
անվրէպ զոր կամին՝ կատարէ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԴԱՐԱՄԻՏ պաշտօնեայ
առ երկրաւորն տէր սքանչելին
Գրիգոր. այլ արդարագոյն ևս
առ Ճշմարիտն ՅԾ. այնպէս ծա-
ռայել յանձն առ Տրդատայ,
որ ոչ միով իւիք դիցակրօն պաշ-
տաման նորա եղև կամակատար։
Զարքայի զցասումն այսու յան-
ձին իւր շարժել քաջ գիտէր,
և այնպէս իսկ կամէր զպարտս
հօրն մահապարտի ոչ մերկ ծա-
ռայութիւնն ընուլ, այլ և արեանն
հեղլով։ Ո՜ անպարտելի արիու-
թիւն, որով յասպարէզ չարչա-
րանաց ընթացաւ Քրիստի նահա-
տակն։

Այն Տրդատ՝ որ զթուրմս
սիգալո

զեղջիւրսն քանցէր, զՊարսս սա-
սանեցուցանէր, եթէ կարաց
ստնանել իւիք երբէք արիակա-
նի անձինն Գրիգորի. ամենայնն
առ նմա 'ի դերև. տանջանա-
րանք, և քերանք, և հուր, և
սուր, և խորխորատ։ Յաղթա-
կանն այն աշխարհաց և ազգաց
անկաւ 'ի Գրիգորէ յաղթեալ
ինքն՝ և որ 'ի նմայն բռնացեալ
կայր սատանայ. և Հայաստան,
որպէս 'ի պարսկական բռնու-
թենէն, նոյնպէս 'ի դիցապաշտ
կրօնիցն ազատացեալ, եմուտ
ընդ թագաւորութիւն Քրիստի։

Ո՞է որ յաղթեաց. ո՞ տարար
զզօրութիւս զայս մեծ։ Ամենա-
զօրն ՅԾ՝ կրիւք և վաստակօք
Գրիգորի. կերպարանեալ զնա
ըստ ՃՀԳրատագիծն պատկերի հա-
սարակաց փրկողին՝ նախ չար-
չարեալ, և ապա զչարչարիչսն
վերընծայեալ ՅՅ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՆՈՐ արարչութիւն սահմանեալ Հայաստան ազանց, ուր արեգական՝ խաւարի կռապաշտութեն վանիչ։ Ահա 'ի խաւարչուտ գբոյ վերակոչի Գրիգոր՝ Թաղեաշն հնգետասանամեայ. ելանէ փայլեալ ընտիր արեգականապէս, առընթեր ունելով լուսին գեղեցիկ զկուսանն Հռիփսիմէ, և աստեղաց պարս՝ զերամս կուսանաց։ Ո՛ երկին նորակերտ։

Ընթանայ իբրև սկայ ընդ կամարս աշխարհին անմուտ լուսաւորիչն Գրիգոր, միշտ տիւ գործելով, և գիշեր ոչ բնաւ։ Բժշկէ զհարուածեալսն, զգօնացուցանէ զանզգայեալս, անդադար յուսուցանել, անքուն յաղօթել, 'ի պահս բազմօրեայ, տաճարաց հիմնարկիչ, ճծային ապառնեացն նախատեսող։ Ի

վերայ ամենայնի այսորիկ՝ առ լուսաւորեալսն լինի թեւադիր. Առաջնորդ արթուն ձեզ, ասէ, կարեւոր է. խնդրեցէք արժանաւոր զոք. զնա ընտրեցէք, և ո՛չ զիս։ Եւ ո՞ այլ քան զիսոնարհ ոգին արժանաւորագոյն։

Աճ հրամայեաց, և նա հնազանդեցաւ, կարգեալ հովիւ և առաջնորդ, վարդապետ և առաքեալ, ծնանելով ազգ մի ողջոյն'ի Քրիստոս, և դասաւորակելով յամենայն մասունս քրիստոնեական կրօնիցն ընդ շրջանս ամաց բազմաց։

Այլ սակայն փոքրունք այդ վաստակք և չհամարեալք առ ոչ ասէր անձնն. իբր այն թէ չեւ ծառայեալ արժանի ոչ, լեռնակեաց ընտրէ վարս, յոչ միայն պարապեալ անդուլ ճրագնուութիւն։ Եւ աշխարհին հոգեւոր նախաձնող, ծածկի մովսիսաբար ուր էրն, և ուր վախճանեաց զի այն միայն էր նմին

փոփոխքելի, ծածկել յաւծ երա-
նութիւն յաւիտենից։

ԱՂՕԹՔ

ԱՅԼ մուռանայցեմ արդեօք զքո ստացեալս Ժողովուրդ, ո՛ հայր բազմախնամ։ Եթէ յերկրի ծածկեցար 'ի մէնջ մարմնով, ոչ ևս յիշեսցես յերկինս քով բարեխօսութիւն։ Հայեաց, աղաչեմք, 'ի քո լուսաւորեալքս, 'ի քև խրատեալքս. որոց վասն զարիւն հեղեալ նախ, ապա քրտունս վաստակոց, արտասուս աղօթից հեղեր անդադար։ Եթէ յառաջնորդութիւն քում ընդ անխրատան վշտանայիր, արդ կարող ես քով միջնորդութիւն զանխրատան զդաստացուցանել, զմոլորեալս ուղղել, վտանգեալոց հայցել ազատութիւն, զնեղեալս մխիթարել, և յամենայն 'ի մեր պէտս հոգւոյ և մարմնոյ լինել աջցելու հպոր։

Առատացո՛, աղաչեմք, զՀայրախնամ քո տեսչութիւն առ կարօտեալքս յամենայնի. զի ելցի և մեզ քաղաքավարեալ ըստ լուսաւոր քոց ճանապարհաց՝ հասանել 'ի մասն վիճակի երանաւէտ քումդ հանգստեան, և ցնծալից ձայնակցութեամբ որդ ևքս ընդ հօրդ փառաւորեսցուք զամենաւոր Երրորդութիւն յաւիտեանս. ամէն։

ՅՕՐ ՅԻՀԱՏԱԿԻ

ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԼՐԱՆԻ՛ որ ոք բարեկամ կոչեսցի Քեզի. վասն զի ըստ իսկուութեան արդեամբք լինի այնպիսի, և ո՛չ յանուանէ եւեթ. զոր օրինակ առ մարդիկ է երբէք զի բարեկամ ոք կոչի թագաւորի, արդեամբք թշնամի գոլով։ Քո ինքնին պատուասիրաբար ի՞մն զՂազարոս անուանակոչեաց իւր բարեկամ, թէպէտ և ծանօթս այլ բազումս ունէր։

Եւ ահա այս սերտ բարեկամ հիւանդանայ, մեռանի տարաժամ. մեռանի՝ բայց յառնէ անկարծելի։ Տե՛ս և 'ի մի՛տ առ

ղօրէնս բարեկամութեն քո։ Վչտագնէ՝ զոր միանգամ սիրէ. և զաղդումն սիրոյն մեծացու-ցանէ, հրաշապէս՝ի վչտաց ան-ոի ազատելովն։

Քորքն Ղազարու ընտանեբար ազդ առնեն զհիւանդանալ եղ-բօր իւրեանց, մինչնորդ աղեր-սարկու առեալ զսիրելութեն։ Այո, ասէ, սիրեմ զնա և զձեզ. և սիրոյ իմ նշանակ՝ զմահ եղ-բօր ձեր առից՝ ոյ փառաւորու-թեն պատճառ, 'ի կենդանու-թի զնա փոխելով։

Ո՛վ դու հաւատացեալ, թէ բարեկամ իցես քոի, կամ լի-նել ըղձանաս, մի օտարոտի քեզ զվիշտս և զմահ իսկ համարիցիս. հղօր է սէրն քոի քան զամե-նայն մահ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Սիրէր քո առանձին բարե-կամութիւ զերջանիկն Ղազար.

և մի՛թէ վայրապա՞ր, կամ ըստ մարդկա՞ն ինչ ըղձականութիւն։ Զասէ աւետարանագիրն Յովհաննէս՝ ուստի՞ արդեօք այնչափ սիրելութիւն. բայց այն լուութիւն յայտնէ 'ի Ղազար զամենայն արժանիսն սիրոյ։ Փոխադարձ էր և նորա առ Քա՛ սէրն. և սէր այնչափ եռանդուն աննուազելի, որչափ տեսանէր ատեցեալ զնա յազգայնոց անտի։

Եթէ արտասուք քերցն զՔա՛ արգահատէին, սէրն Ղազարու 'ի գերեզմանէ անտի ճմլեցուցանէր զաղէտս սիրելւոյն։ Տե՛սէք որչափ սիրէր զնա՝ հրէայքն վկայէին յարտասուել Քա՛ի. այլ ունէին ասել ևս, տեսէք որչափ և Ղազար սիրէր զՔա՛։

Ե՛կ լեր և դու երրորդ յաղնուական սիրելութեան. սիրեա՛ զՔա՛ անմեղկելի. սիրեա՛'ի կեանս և 'ի մահս. զի լինիցիս նորա սիրելի անմահ յարութեամբ.

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՉ շատացաւ սէրն Քրիստոսի զյարուցեալն զՂազար 'ի սփոփումն քերցն մատուցանել ասելով մի լայք, ահա եղբայր ձեր կենդանի։ Աւ ինքեան ուն զնա սեղանակից՝ ոչ միայն զկենդանութիւն ճշգրտելոյ վերայ, այլ և զկարօտանան ընուլ յորեքօրեայ բացակայութիւն։

Այլ բաբէ համադամոցն 'ի սեղանի անդ սիրոյն։ Զի՞ դու, Մարթա, զի՞ բազմաց հոգաս. ուր զի մի ինչ կայ առաջի՝ ամենայն ճաշակաց լցուցիչ։ Սակաւ ինչ առ 'ի պէտս խնդրի մարմնոյ, յորժամ՝ սէրն փոխադարձեալ 'ի Քրիստ և 'ի Ղազար՝ էր նոցա կերակուր և ըմպելի։ Աչք նոցա առ միմեանս կառուցեալ անթարթափ. ունկն և լեզու անդադար տալ և առնուլ զմիմեանց բարբառս։

Ո՞աչք գորովական՝ իմոյն Յեսի, խօսէր 'ի սրտի Ղազար, որ վե՜ իմ արտասուեցեր. ո՜ ձայն փա՜ րեալի, որ ինձ մեռելոյս եղեր լսե՜ լի. բայց ո՜ մղձկումն սիրոյ ա՜ ղետիցս, զի կենդանութիւն ինձ շնորհեալ, ձայն պատանաց ա՜ հա լսեմ իմոյ յարուցչիս, զմե՜ ռելութիւն զիմ յանձն իւր ընդ՜ ունել։ Ո՞ սէր, ո՜ բարեգթու՜ թիւն, որ զկեանս և զմահ ընդ մի համարի վասն սիրելւոյն։

ԱՂՕԹՔ

Եւ արդ ընկա՛լ և վասն մեր, ո՛վ սիրեցեալդ յիսկապէս սիրո՜ ղէն՝ սուրբ հայրապետդ Ղա՜ զար, զհաղորդութիւն սիրոյն Քրիստոսի. մեզ՝ որք հրաւիրեալքս եմք 'ի վայելումն սիրոյ նորա, այլ 'ի մերմէ հեղգութէ մնամք ան՜ ճաշակ։ Հայցեա՛ 'ի նմանէ, որ՜ սէս և քորքդ վասն քո, զառողջ ութիւն յախտից հոգւոյ, զկեն՜

դանութի'ի մեռելութէ մեղաց, զարձակումն 'ի մոլեկան սովորութեց, որպէս զի համարձակ ընթանալ կարիցեմք 'ի շաւիղս սրբութե, և մատչել անարատութիւն 'ի հոգևորական սեղան Քրիստոսի:

Լէր հանապազորդ պաշտպան ապաւինելոցս 'ի տան քում ընդդէմ երևելի և աներևոյթ թշնամեաց. պահեա զբնակութի անուան քո անսասանելի, առաւելեալ միշտ յամ բարեկարգութիս. զի լիցի մեզ տոնողացս զօր յիշատակի քո՝ փառաւորել ցնծութիւն զպարգևատուն ամենայն բարեաց յաւիտեանս. ամէն:

Ի ՏՕՆԻ

ՍՈՒՐԲ ՀՕՐՆ ԱՆՏՈՆԻ

ԱՐՔԱՑԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յորժամ զԱնտոն յիշատակեմ զերջանիկն 'ի սուրբս՝ նախահայրն միանձանց՝ 'ի հիացումն ընթանայ սրտիս աղաղակ. «Ո՞վ է սա որ ելանէ յանապատէ»։ Ելանէ բարձրանայ, և անդէն մնայ խոնարհ 'ի թագստի. մարդ մեծաւոր և շուրջ պնռվաւ բիւրաւորաց պարք. հրեշտակաց խմբակից, և դեռ առ նմա պատերազմողք։ Ո՞վ է սա՝ հիանամ, և զԵսայեայն յիշեմ. Այր՝ զոր յառաջգիտութիւնն այ պատրաստեաց տալ 'ի փրկ-

կութեն ոչ եդիպտացւոց միայն, այլ համօրէն ազգաց հաւատաց-ցելոց։ Եթէ սքանչացեալ է ՝ծ ՝ի ՝նբս իւր, սքանչելագոյն և ս մեծացաւ յայս այր, որ տկար բնութիւնքան զգերաշխարհիկան առաւելաւ ՝ի խոնարհութեան և ՝ի բարձրութեան։

Ընորհք և առաքինութեն հա-կառակաբար ներգործեցին ՝ի նմա. նախ յանապատ խորին վտարել յանծանօթս, և ա-պա ՝ի տեսիլ ամբառնալ հրեշ-տակաց և մարդկան։ Այնպէս անապատային՝ որ և զքաղա-քային զարմացուցանէր. այն-պէս անծանօթ՝ որ ՝ի թագա-ւորաց անգամ ոչ ծածկեցաւ։ Մաշեալ ՝ի ՀՃգունս, և իբրև զբարեկեցիկան զուարթատեսիլ. հարուածք դիւաց չարաչարք ՝ի մարմնին, և ընդ ոտիւք նորա սատանայ խորտակեալ. անվարժ ՝ի գրոց, և դպիր խորհրդաղգաց վերնումն արքայութեն։ Ո՞վ է

այրս այս, մանաւանդ ոչ սքան-
չելիք զօրութեան այ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵԹԷ զպատճառան խնդրի-
ցես զանհամեմատ գերազան-
ցութեան հօրս մեծի, մի զսքան-
չելագործութիւնս նորա կարծես-
ցես, մի զառ 'ի յայ յայտնու-
թիւնն մեծամեծս, մի զնստամ-
բեր ճգանցն ժուժկալութիւն։
Այլ զի՞նչ։ Խոնարհութի նո-
րա անզուգական, սէրն առ ած,
ատելութի անձինն և երկրաւո-
րաց ամենայնի արարին զնա մեծ
առ ած, որչափ յանձն իւր փո-
.քրիկացաւ։ Ընտրեաց զնուաս-
տութի, որով և բարձրացաւ.
սիրեաց զած որչափ կարող էր,
և սիրեցաւ յայ՝ որ ամենակա-
լոյն է. ատեաց զամբարտաւա-
նութի, և եղև ատելի դիւացն
ամբարտաւանից։ Այս է որ զա-
նապատասէրն՝ զվայրաբնակն ա

րար նոր Աբրահամ, սկզբնա-
հայր ազգաց զևտականաց նո-
ցոյս Իսրայէլի։ Հրաժարումն նո-
ցա յաշխարհէ եցոյց զանապատն
ցանկալի քան զքաղաք բազմա-
ժողով. և զանգնալի կողմանս
երկրի եդ ճանապարհ արահետ։
Երանի անձանց տային իշխանք
աշխարհակալք, եթէ 'ի տեսու-
թիւն նորա միայն հասանէին, կամ
բանիցն լինել վերընդունող։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Այլ երանի՛ այնմ, որ արժա-
նապէս մեծարել զնա յորդո-
րեացի. նա՝ երանելի ևս որ զնո-
ցայն աշակերտութիւն յանձին կեր-
պացուցանիցէ ճշգրտաբար։ Ե-
թէ 'ի խստամբերութիւն չեմք
ժամանողք, ահա խոնարհութիւն
նորա, ահա սէրն, ահա հեզա-
համբոյրն քաղցրութիւն. զոր
գործովք կատարեաց նա դե-
ղագոյն քան զօրինակ, և բա-

նիւք աւանդեաց զչափով հե-
տևումն։ Յանկաա արդեօք զփորձ
առնուլ 'ի քում անձին զաբան-
չելեաց նորա. հայցեա՛ նորին
բարեխօսութիւն զկոնարհութի
ճշմարիտ, զսէր անմեղկելի, զո-
տարութիւն 'ի կամաց մարմնոյ։
Առաւել ախորժէ նա հրաշա-
գործել 'ի մեզ զպատկեր իւրոցն
առաքինութեաց, քան մեռելոց
ընդունել կեանս կամ կուրաց
լոյս։

Դի՛ր սանձ խորհրդոցդ, և
դուռն բերանոյ, և լուծ հնա-
զանդական 'ի կամս, և եղիցես
աշակերտ մտերիմ նախահօր
քում Անտոնի, հայրենականացն
օրհնութեաց նորա ժառանգա-
ւո՛ր, որով և երկնաւոր փառացն
բաժանորդ։ Արձան ճծտգիծ
կանգնեցաւ նա 'ի սահմանս Ե-
գիպտոսի՝ որ յաշխարհ առակի,
կոփեալ նախ կռանաւ ճգանց
և պատերազմաց, և ապա մա-
տամբ ոչ գծագրեալ օրէնք հո-

գևոր Ճանապարհին՝ որ 'ի Ճըշ-
մարիտ աւետեացն երկիր հան-
գուցանէ։ Օրհնութիւն է 'ի նմա
առ այնոսիկ՝ որք ըստ օրինացն
առաքինանան, և անէծս՝ որոց
հեստենն և ծուլանան։

ԱՂՕԹՔ

Ա՛ռ քեզ, ո՛ հայր պատուա-
կան, են խնդրուածք մեր, ա-
ռաջնորդ միանձնականացս դա-
սուց. հայեաց գթասիրաբար 'ի
փառաւորեալդ քում հանգըս-
տենէ 'ի տառապեալքս՝ և 'ի
վտանգեալքս քոյոյ սրբութեա
աշակերտքս։ Տէ՛ս, ո՛ անպար-
տելի զօրագլուխ հոգևորականս
զինուորութեա, որքան յաջմէ
և յահեկէ նեղիմք 'ի թշնա-
մեաց յերևելիս և յաներևոյթս.
հաս տկարացելոցս յօգնակա-
նութեա, կործանելոցս 'ի կանգ-
նումն, արիացելոց 'ի քաջալե-
րութիւն։

Փարատեա՛ 'ի մէնջ զգաղտնի մարտս անմարմին ախոյանին. զօրացո՛ քոյով բարե խօսուԹիւն ըզհանդիսացեալքս 'ի քրիստոսական յայս աստարէզ առաքինուԹիւն. զի մի՛ որ 'ի քէն պարտեցաւ անամօԹ Թշնամին՝ պարծեսցի 'ի վերայ քոց աշակերտաց։ Զքեզ որ վարուք անսխալ օրինակդ ես, և բանիւք օրինադիր, առաւել և այժմ արագահաս խնամակալ մեզ հաւատամք և Թախանձեմք. որպէս զի անսայԹաքեալ կրօնաւորուԹեամբ ժամանեալք 'ի կէտ վերին յաղԹանակին, փառաւորեսցուք ընդ քեզ զպատակիչն առաքինեաց՝ զփառաւորեալն ինքնուԹիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՏՕՆԻ

ՍՈՒՐԲ ՀՕՐՆ ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Օ ԻԱ՞ՐԴ աքանչելի է իմաստութիւնն այ յընտրել զոք 'ի մարդկանէ, և ըստ ընտրութեան Ճահոպատէս զանունն սահմանել. որով մի է առ ՅԾ անուանել ինչ, և առնել այնպիսի։ Յառաջնանամ տեսչութիւն ընտրեաց նա զերանելին 'ի հարս ըզ-Բենեդիկտոս լինել նախահայր միանձնական կարգաց. անուն եդ նմա Բենեդիկտոս, Օրհնեալ. զլրումն երկնաւոր օրհնութիւն 'ի նմա յայտ առնելով։

Ո՞րչափ առաւելութիւն է ըզ-

հասարակաց անուն արդարոց, որով օրհնեալք կոչին ՅԻ, նմա միայնումն սեփական իմն առ-դնել։ Արար զնա ՅԾ օրհնեալ յինքեան, և օրհնեալ վՅ այլոց։ Ի մատաղ տիոց եցոյց զնա զա-ւակ օրհնութեՅ, և'ի կատարեալ հասակի՝ հայր օրհնութեՅ ազ-գաց բազմաց։

Տղայ էր ըստ հասարակածին բնութեՅն, այլ անիծելոյ բնու-թեՅն նշմարանք 'ի նմա ոչ երե-ւէին։ ԱՅեաց մարմնոյ հասա-կաւ, և փոխան սիտից վերա-ՅԷր 'ի նմա անարատութեՅ և ի-մաստութեՅ, խայրիք երկնաւոր օրհնութեՅ։ Սատանայ զիւրան արկանել 'ի նա ջանայր զանի-ծապարտ սերմանս, զմարմնոյ գրգիռս, այլ նա փշովք զնախա-հօրն գործեցեալ տատասկս՝ 'ի վարդս օրհնութեՅ փոխադրել զօրացաւ, մաք ըութեՅ անուշա-հոտ բուրելով 'ի խայթուածոց փշոցն։

Բաբէ. զայն՝ զոր տէր օրհ-
նեաց 'ի մշանչենաւորս, զիարդ
անիծանել կարիցէ սատանայ,
յիւր 'ի չարութեան կամն զնա
թրաալով։

ԹԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԹԱՏՍ 'ի խորս արձակէր
տունկն օրհնութեան, և շառա-
ւիղս 'ի վերս յանբերս անապատի
ռնդ ճգնութեան։ Գունագոյն 'ի
նմա պայծառացեալ առաքի-
նութեանցն ծաղիկք՝ ոչ թօթա-
փեալք և ոչ թարշամեալք,
սփռեցին 'ի վայրս հեռաւորս ըղ-
բուրումն սրբութեան, առ ինքն
ձգելով զանծպաշտութեան քաղ-
ցեալսն և զծարաւիս, որք աղա-
ղակէին ըստ գրեցելումն։ «Զհետ
քո 'ի հոտ իւղոց քոց ընթաս-
ցուք»։

Ցեսիլն ևեթ հրեշտակակերպ
վարուց նորա զմայլումն էր ան-
ձանց բարեսիրաց. և բանք բե-

րանոյ նորա տգիտաց վարժու-
մըն, մոլորելոց ուղղիչ, զար-
թուցող անզգաստից, վշտագնե-
լոց դիւրիչ. և կարօտեալք իւ-
րաքանչիւր հոգևորական պի-
տոյից՝ որք սովէին 'ի քաղաքս՝
յանապատի գտանէին դար-
մանս 'ի յագուրդ անձանց 'ի
Բենեդիկտոսէ՝ իբրև յանդոյ
լիոյ, զոր օրհնեաց տէր:

Իսկ սատանայ մինթէ ժուժայր
ընդ այս. որ 'ի սկզբանէ մար-
դասպանն էր, հնարս խորհեցաւ
ապականել դեղովք մահու ըզ-
ձեռատուն՝ այ. այլ 'ի զուր
ջանացաւ, զի օրհնութիւն տեառն
յաղթեաց մահու, որպէս և
սատանայի. և որ յայլ մարդ-
կանէ զմահ հալածեաց, ևս ա-
ռաւել մնաց ինքն առ 'ի նմանէ
անընդունելի:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՉ մարթ է թաքչել քաղաքի 'ի գլուխ լերին կառուցելոյ. և ո՛չ որ զՃրագ լուցանէ, ծածկիցէ զայն ընդ գրուանաւ, ինքնին տէրն իրաւաբանեաց 'ի մարգկայնոց ասի. յայտ ա՞ր արեալ՝ թէ նովին կանոնաւ և յաՃայինսն վարիլ սովորեցաւ այ նախախնամութիւնն։ Իբրև քաղաք հաստահիմն բարձրացոյց ՃԾ զԲենեդիկտոս յանապատի և 'ի լեռնավայրս. նոյն վառեաց զնա Ճրագ մշտալոյս 'ի սրբութեան և 'ի վարդապետութեան։

Եւ ահա որ մենակեացն էր և ինքնուրոյն, տեսաւ յանկարծակի շուրջ պատեալ 'ի բիւրաւոր աշակերտելոց։ Ի Կասինոնէ սկսեալ, ընդ ծագս արևմտից հրաշացաւ անուն նորա կրօնաստանաց բազմութիւն։ Հայր աղ-

գաց ուխտաւորաց ըստ աբրա-
համեան օրինակութեամբ բազմա-
ցոյց զաւակս օրհնեալս, քարոզս
բանին այ, պաշտօնեայս եկեղեց-
ւոյ, վաստակաւորս 'ի գիր և 'ի
ճգունս, առաջնորդս ժողովուրդ-
դոց, ժառանգակալս հայրա-
պետութեան։

Ո՛վ այ օրհնութեանն, զինքդ
մեծ է և զարմանագործ, որ
զփոքրիկն հոգւով ըստ հատոյ
մանանխոյ այնչափ աճեցոյց 'ի
բարձրութիւն լայնատարը, մինչև
թռչնոց երկնաւորաց գալ
հանգչել երամովին 'ի նորա ոս-
տըս, և պայծառացուցանել զե-
կեղեցի ըստ ազգս ազգս պար-
գևաց, ամենեցուն զմի անուն
օրհնութեամբ 'ի հօրէն ժառանգե-
լով։

ԱՂՕԹՔ

ՀԱՅԵՍԱՑ 'ի կարօտեալքս 'ի
մեզ, ո՛վ տէր խնամակալ, որք
զուարճանամք 'ի յիշատակս օրհ-

նեցելոյ ծառայի քո հօրս մերոյ, և 'ի նորա ՇԾապարգև մեծութեն զքո սքանչելիսդ մեծացուցա-
նեմք։ Դու ամենապարգև, մի՛ առ 'ի մէնջ խնայեր սման յօրհ-
նութէ անտի, որով զերանելի զհայրն Ճոխացուցեր 'ի փառս քո. Շնորհեա՛ մեզ յանձինս բե-
րել զնորայն տիպ զմաքրութեն և զերկնակրօն քաղաքավարու-
թե, զի մի՛ սատանայի փորձա-
նացն լինիցիմք ողորմելի նշա-
ւակ. այլ զօրացեալք 'ի հոգևոր պատերազմի, յաւիտենից օրհ-
նութեն լինիցիմք ժառանգա-
ւորք, փառակից գրեալ մեծի հօրն Բենեդիկտոսի, ցնծալ ընդ նմա, վայելել ընդ նմա, և ընդ նմա օրհնել զքեզ յաւիտեանս։

ԴԻՐ

ՄՏԱԾՈՒԹԵԱՆՑ ԳՐՈՑՍ

	Էջ
Ա. Ի Ծնունդ սրբոյ կուսին	1
Բ. Դարձեալ 'ի նոյն խորհուրդ	8
Գ. Ի վերայ հրաշալի անուան ամէնօրհնեալ ճծամօրն .	14
Դ. Ի տօնի Ընծայման նոյ կուսին	21
Ե. Ի տօնի Աւետեաց.	28
Զ. Կաթոգին սէր տիրամօրն առ մանկացեալն Յիսուս.	36
Է. Ի տօնի Պաշտպանութեան տիրամօրն.	44
Ը. Ինաւակատիս սրբոյ խաչին	52
Թ. Ի կիւրակէի Խաչվերացի	57
Ժ. Յերկուշաբաթի Խաչին	61
ԺԱ. Յերեքշաբաթի Եկեղեցւոյ	65

ԺԲ. Ի չորեքշաբաթի Եկեղեցւոյ. 70
ԺԳ. Ի հինգշաբաթի Եկեղեցւոյ 75
ԺԴ. Ցուրբաթու խաչի. 81
ԺԵ. Ի շաբաթու խաչի. 86
ԺԶ. Ի տօն Վարագայ ՝ի խաչին. . . . 91
ԺԷ. Դարձեալ ՝ի նոյն խորհուրդ 97
ԺԸ. Ի տօնի Երևման ՝ի խաչին 101
ԺԹ. Ի շաբաթ օրն յառաջընթաց Ծաղկազարդին յիշատակ յարութեան Ղազարու 107
Ի. Ի կիրակէի Ծաղկազարդին 114
ԻԱ. Ցաւագ երկուշաբաթի ՝ի խորհուրդ արարչութեան և անկման Ադամայ . . 122
ԻԲ. Ցաւագ երեքշաբաթի յառակտան կուսանաց 131

ԻԳ. Յաւագ չորեքշաբաթի՛ի մատնուելն Յիսուսի. 139
ԻԴ. Յաւագ հինգշաբաթի՛ի վերայ խորհրդական վերնատանն. 147
ԻԵ. Յաւագ ուրբաթուի՛ խաչելութիւն. 155
ԻԶ. Յաւուր աւագ շաբաթուի՛ թաղումն Քրիստոսի 162
ԻԷ. Ի Զատկի յարութիւն տեառն 168
ԻԸ. Ի տօնի երկոյն Յովսեփայ ճծահօրն . 175
ԻԹ. Ի տօնի երկոյն Ստեփանոսի նախավկային 182
Լ. Ի տօնի սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի . . . 190
ԼԱ. Յօր յիշատակի երկոյն Ղազարու 198
ԼԲ. Ի տօնի երբ հօրն Անտոնի աբբայի . 204
ԼԳ. Ի տօնի երբ հօրն Բենեդիկտոսի . . . 211